



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Quercus petraea

Ulmus campestris

18/1/1905

891.99

Q-35



ՀԱՒԱՆԵՑԻ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

891.99

Գ-35

I Գրքոյկ:


10 NOV 2011

391.99

2-35

mf

ՋԱՆԱԿԱՆՆԵՐ



ՊԱՏԿԵՐՆԵՐ

Handwritten scribble

3596

I Գրքուկ



ԹԻՖԼԻՍ 1905
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Մաղաթեան փող. 15.
(118)

23.07.2013

51875

ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿ ԶԱՆ:

||

Դու, որ կենդանի ժամանակդ օրջապատված
խեղճ գիւղացու հագար ու մի ցաւով մինչ գե-
րեզմանիդ սեւ դուռն անկարող ամենքի ցաւն
ամոքելու, դարդին դարման անելու, լալկան էիր
դարձել, նոյն ցաւերից հիւսած լալկան պատկեր-
ները նուիրում է քո անմոռաց յիշատակիդ

Որդիդ՝
Զատիկեցին

||

Дозволено цензурою 26 Апрелья 1905 г. С. Петербургъ.

ԱՅՏԱՆԻ ԱՍՏՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ստացված է 1980 թ. 10. 15
Քանոնական քարտեզի 1:100,000
Քանոնական քարտեզի 1:100,000
Քանոնական քարտեզի 1:100,000
Քանոնական քարտեզի 1:100,000

ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍ

|||

«Հայի՛ գուժան, հայի՛ գուժան, որի՞ համար կը
ջանաս,
Ո՞վ քեզի՛սով կը տանջվի, որի՞ն դու կուշտ հաց
կուտաս»...

«Աղոթարանը բացվեցաւ, ժամանակ է զարթ-
նելու»...

Գամառ-Քարիպա

|||

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր Ի Ե Տ Ե Ի

(Առաջաբանի տեղ)

Վիթխարի լերան քար ու քուռչ կրծքին
կռթնած, ծառ ու ծաղկի մէջ կորել են մի խումբ
ցածրիկ, գետնափոր խրճիթներ, որ կարծես վա-
խեցած, թէ չը լինի՛ ըմբոստի մէկն համարձակվի
խռովել իրանց դարաւոր խաղաղ քունն ու հան-
գիստը, քաշվել, մտել են ամենի՛ լերան անառիկ
ծոցն ու հողագուլուլ պատերին պատուհան նոյն
իսկ չեն թողել, որ գէթ լոյսի ցոլքը ներս շո-
ղայ: Արևն էլ, կարծես մտացած բնութեան այդ
վախկոտ խորշը, միջօրէի տապին հազիւ մի քա-
նի ըօպէ, անհրաժեշտ գործով եկած մեծ մարդու
պէս ներս է նայում հողածածկ կտուրների եր-
զիքներից, որ իրանց նեղլիկ բացվացքով պատու-
հան կոչվելու յաւակնութիւնն ունեն: Եւ ի՞նչ էլ
պիտի անեն այդ սև հողակոյտերի բնակիչներն
արև ու պատուհան, երբ ներսն այդ պահուն կեն-
դանի շունչ չես գտնիլ:

Տանը մնացած միակ պառան էլ դրանը նըս-

տած կողմն արևին է տվել ու մերթ ծոյլ-ծոյլ թեշիկն է ուրուում, մերթ նիրհելով գլուխը տանում բերում ու քնի մէջ գառանցողի պէս շարձճի երեխաներին բարկանում, որ մի մի կարմիր կտաւէ չուլ շապիկ հագերին հողու մոխրէ մէջ գուլուլվում, խաղում, փոշու ամպն երկինք են հանում: Հաւ ու ձիգ-ձիգ խառնված մանուկներին, քուչուչ են անում, մի ընտանիքի հաւասար զաւակներ լինին կարծես: Հօտից յետ ընկած քաւթառ, խօւթօ շունն էլ, սայլի շվաքում պառկած, խոր խռմբում է ու մերթ ընդ մերթ անհազին անատամ բերանը շրփփացնելով, իրեն անհանգստացնող ճանճ ու մտեղներին որսում և հաւատարիմ իր հին պաշտօնին այդ հասակին էլ գործ կատարած, տանն օգուտ տված լինելու համար, ճպոտտ աչքերը շուխտ բացած, զգուշութեամբ չորս կողմն է դիտում, մոմռում ու դարձեալ գունչը կոխում թաթերի մէջ, հանգիստ խռմբոցը շարունակում:

Ու կարծես միջօրէի տապից կուչ եկած, գետին մտած խրճիթներն իրենց մըշ-մըշոցով, հե-հեոցով ձայնակցում են մանուկների ճիչ ու կանչին, պառաւի ու քաւթառի դըմբ-դըմբոցին, խռմբոցին...

Գիշեր չէ, բայց գիշերուան պէս լուռ է ու խաղաղ, և եթէ գոռոզ արաղաղի կէս օրուան կանչն ու մանուկների խաղն ու ճիչը չը լինէր,

հողաթմբերի այդ ժխտըն աւելի շուտ սև գերեզմանոցի կը նմանէր...

Մութն է: Դադրած-յոգնած արևը, որ օտ ժաթափ քիչ է մնում վայր ընկնի հորիզոնի պրապրոն կապոյտ կամարից, ոսկէգօծ դեղին գաւազաններն յենած երկնաբերձ սարի կատարին, տոտի-տոտի նոր օտք ելած տղի պէս իջնում է ցած՝ մօր գիրկը: Լերան լանջի սև հողակոյտերն աւելի գորշանում, սևանում են ու թզուկ հասակներով հսկայի ստուեր արձակում:

— Բօօ... բաա... մաա... մաա... յանկարծ բառաչ ու մայոց խառնվում են իրար: Գառ ու հորթ, նախիր ու հօտ թափվում են տուն: Չարձճի մանուկները գործի են եղել: Սուր ճըղ-ճըղոցները ձգած, ամենքն իր հորթն ու գառը, իր ունն ու այծն է շոկում, որ խենթի պէս օտար կովի, ոչխարի յետևից ընկած չերթան ուրիշի տունը մտնեն: Հաւ ու ճիւ չը կան, թառել-ծուարել են վաղուց: Հեռուից լսվում է զիլ երգի անուշ կըլ-կըլոցը՝

«Մարէն գաս գեղը մանես

Իմ գցած տեղը մտնես»...

Ու դաշտից դարձող փոցղբոր հարս-աղջկան ու քաղւոր ջահէլ տղերանց հանաքն ու ծիծաղը, երգն ու տաղը օգն են խաղնում: Կարծես նրանց սրտին ծանօթ չէ փոռ աշխարհքի դարդն ու ցաւը ու աչքերն հէչ չեն կսկծել դառն արցունքի կաթիլներին...

Ու գերեզմաննոցի նմանող սև հողաբլուրների բաօսը, կարծես դիւթական գաւազանի շարժումով, յանկարծ կենդանանում, ոգի ու շունչ է առնում:

Խոտով բարձած ահագին սայլերի ճոճոցը, դաշտից դարձող արաւուրի ուրախ-անհող քրքրուցը, հերկից դարձող մաճկալ-հօտղի անուշ հորովէլը, հօտ ու նախրի բառաչը, հորթ ու գառի մայոցը, մանուկների վժվժոցն ու հազար ու մի հաւք ու թռչնի մթնշողի ծըլվըլոցը, խառնվել իրար՝ ծածկամիտ բնութեան խորհրդաւոր ու վեհ համերգն էին ներդաշնակում, որի մէջ երգում, փառաբանում էին կեանքը, աշխատաւորի բեղմնաւոր կեանքը...

Մեր գիւղն է դա, բոլոր գիւղերին նման մի սովորական գիւղ:

Բայց սրբան գեղեցիկ ես դու դրսից դիտողի համար, զբողի տարած գիւղ...

Կեանքն անդորր ու խաղաղ, պարզ ու անպաճոյճ, ամեն ինչ նահապետական անմեղութեան ու սրբութեան կնիքն է կրում ճակատին, կարծես երկրային եղեմն է հարիւրաւոր Ադամ-Նևաներով: Ողջ գիւղը մի տան պէս—ուրախանում են միասին, ախրում միասին, ամբողջ գարունը, ամառ ու աշուն աշխատում մէկտեղ, ձմեռն էլ քաշված տաք գոմերը, ուտում են, խմում, քէֆ անում մէկտեղ, դարձեալ միասին... Ծիշտ է, ի

հարկէ, գիւղում աղքատներ էլ կան, բայց մարդ չը կայ, որ իր սեփական տունն ու տեղը չունենայ, իր արանն ու արօտը, իր եզնն ու կովը, իր հաւն ու ճիւղը չունենայ... Թէ եղաւ, հազարից մէկ պատահեց էլ այդպիսին, փառք Աստուծո, դուռ ու դրկից կայ, այնտեղ քաղաքի պէս աղքատ ու հարուստ իրարից այնպէս չեն անջատված, բաժանված, ինչպէս դրախտը դժոխքից... Իսկոյն ձեռք կը մեկնեն, մալ կը տան, սերմ կը տան, որ վարի-ցանի, ընտանիք պահի. կամ վերցնում է մէկն իր մօտ մշկութեան, շորը տալիս, հացը տալիս, անեցոց հետ տան աղի պէս թող աշխատի, վաճքն էլ առնէ ջերը դնի...

էլ ի՞նչ է կեանքը, ի՞նչ է ապրուստը...

Նոյն յարկի տակ, տեսնում ես, 20—30, երբեմն նոյն իսկ 60—70 մարդ ձեռք ձեռքի տուած միասին աշխատում, մի սեղանից ուտում, բոլորը տան մեծին պատվում, լսում, բոլորին տան մեծը սիրում, խնամում... Մի փոքրիկ ինքնակալ կառավարութիւն լինի կարծես...

Աղջիկ-աղայ ազատ, գարունը՝ դաշտերում, ձմեռը՝ ջրի ճանապարհին, աղբիւրի գլխին խօսում, ծիծաղում, լաւ փորձում, ճանաչում իրար, ապա ամենն իր սրտի ուզածն ընտրում, նոր ամուսնանում են ու դեռ 18—20 տարեկան չեղած ընտանիքի, որդկերանց տէր դառնում... Էլ ի՞նչ գործ ունին այնտեղ քաղաքի լիրբ անբարոյականութիւնը, գէշ ցաւերը...

Մանր ու խոշոր, մարդ ու կին կարմիր, առոյգ, երեսներինց ալ-վարդ կը թափի: Եւ ինչո՞ւ էլ պիտի կարմիր, առողջ չը լինին... Ո՞վ ուտի այն կաթն ու մածուենը, սերն ու կարագը, ո՞վ շնչէ այն թարմ, մաքուր օդը, որ առողջ չը լինի...

Ճիշտ, որ դրախտ է, եղեմական դրախտ մեր գիւղի ընտանեկան կեանքը...

Հապա հասարակական կեանքը: Ո՞ր քաղաքն ունի այն ազատ, համայնական իրաւունքները, որ տրված է գիւղին:

«Քո հարկդ, գօռ ու բէկեարդ դու թովճ արա, ինչպէս կուզես այնպէս տուր»... ասում է կառավարութիւնը: Եւ գիւղն, իր հին պապական սովորութեամբ, հարկը հողի է թովճ անում՝ բաժանում: Հող շատ ունես, հարկ էլ շատ տուր: Իսկ հողն ընդհանուրի, հասարակութեան սեփականութիւն է, որ 3—4 տարին մի անգամ նոյն հասարակութեան համայնական ժողովում ընտրած «բարեխիղճ պաւերեննիների»՝ հաւատարմատարների ձեռքով բաժանվում է «Չանի» վրա, հաւասարեցվում իրար մէջ...

Գիւղը զրկանք չէ սիրում...

Բայց գիւղումն էլ, դէ ի հարկէ, վէճ ու դաւայ լինում է, խօսմ հրեշտակներ չեն բոլորը, ախր նրանք էլ ազամորդի, հողեղէն են... Սակայն նըրանք չեն երթայ բարձրից նշանակված դատաւորի մօտ, որ ոչ իրանց կեանքը գիտէ, ոչ տեղա-

կան պայմանները: Գիւղն իր միջից ընդհանուր ձայնատվութեամբ ընտրած դատաւորներով, առանձին, բոլորովին ինքնուրոյն տիպի շինական դատարանն ունի, ուր գործերը քննվում են թէև ոչ այնքան ըստ օրինաց, բայց ըստ խղճի, ըստ պապական սովորութիւնների: Եւ ինչպէս կարող է շինական դատաւորը սխալվել իր դատի մէջ, երբ ընտրված է բուն ժողովրդից, ապրում է նոյն ժողովրդի մէջ ու ամեն ինչ, ամեն գաղտնիք իր աչքով տեսնում, ականջով լսում է...

Եւ գիւղում ամեն ինչ ընտրովի է, ձայների հաւասար իրաւունքով՝ և՛ քահանայ, և՛ գալաւայ, և իւղբաշի, և՛ դատաւոր, նոյն իսկ գիւղի գգիւր, հովիւ, հանդապան էլ համայնական ժողովում ընդհանուրի բոլորի ձայնատվութեամբ են ընտրվում, վարձվում:

«Համայնական ժողով» — դա գիւղի պառլամենտն է. ինչ ուզենայ կանի իր գիւղում, ուզենայ կեանք կը տայ մէկին, ուզենայ կեանքից զրկի, սիբիւր կուղարկի... բաւական է մի համախօսական վճիռ, մի «պոլիգօլօր»...

Այդպէս հասարակական ժողովի ընտրութեամբ է որոշվում և գիւղի եթումի՝ որբի ապիկոնը՝ խնամակալը, որին յանձնելով որբի ունեցած-չունեցածը, նոյն հասարակութիւնը պարտք է համարում ամեն տարի հաշիւ ու համար պահանջել, որ բարեխղճօրէն շահվի որբի ապրանքն ու

չափահաս դառնալուն պէս յանձնվի իրան, որ
խեղճ որբի հօր օջախը չը մարի...

Ախր որբը Աստուծուն է... ո՞վ կը յանդգնի
որբի մալին ձեռք տալ...

Եւ այսպէս ողջ գիւղն էլ մի փոքրիկ դաշ-
նակցական պետութեան պէս քաշված վիթխարի
լեռներէ անառիկ ծոցը, ուրախ, անհոգ, ապրում
է ազատ, կարծես բնութեան երես տուած, փայ-
փայած զաւակը լինի...

Ո՛րքան գեղեցիկ, գրաւիչ ես դու դրսից
դիտողի համար, գրողի տարած գիւղ... Քիչ է
մնում ես էլ դրսից դիտողի պէս հաւատամ ա-
ղեղնագոյն վարագոյրիդ երեսին պսպղացող խա-
փուսիկ պատկերին...

Բայց, ապա ես կը փորձեմ յետ քաշել, բա-
նալ այդ սիրուն, պսպղուն վարագոյրդ, տես-
նենք, յիրաւի կեանքն այդպէս է «վարագոյրի
ետե»...

24 յունվարի 1905 թ.

Շչիգրի (Կուրսկի նահ.)

«ՄԵՆՔ ԱՂԲԷՐ ԵՆՔ...»

Յուրտ ձմեռ էր. դուրսը քամի, բուք ու
բորան, օրը մթնել, թիփին կատղել, արև-երկինք
մշուշի մէջ կորել էին: Էս աշխարհքի վերջն էր
կարծես... «Օձն իր պորտով, հաւքն իր թևով»
դուրս չէր գայ: Ո՞վ էր կեանքից, գլխից անցել,
որ էդ թիփուն հոգի հաւտար, ոտ դուրս դնէր
տան դռնից... Բայց ուզէի թէ չուզէի ես ոչխա-
րի խոտը պիտի բերէի, իրիկուանից պատրաս-
տէի: Մշակ էի, (ծառայ) աղաս այդպէս էր պա-
տուիրել: Մշակն էլ խօս հոգի չունի, որ ձիւն-
թիփուց, բուք-բորանից վախենայ... Սոսնոցն էլ
հէ-հեռո՛ւ, գիւղի էն ծայրին էր: Աղայի ինչ հոգն
է հեռուն, գործ կայ—պէտք է անել, հրամայում
են... թէ մրսէի, սառչէի էլ, փողոցի մէջ փայտ
կարէի, թերևս դիս փնդրող չը լինէր... ո՞ւմ հոգն
էր... Մայր ունէի, որ կակծար, մըղկըտար, թէ՛
հայրս զար սրտի ցաւից մոմոար... Եթում էի
(որբ)... անհայր, անմայր, անտէր եթում, էս
աշխարհքի խորթ զաւակ... Մօրս գիւղը չէի տե-

սել, ոչ էլ կեանքումս հօրս բերնից խօսք լսել... Մինչ այդ տարիս, տասչորս տարիս անտէր մեծցել, ծնածս օրից ծառայ եղել, տանջվել-տքնել, հալվել-մաշվել, միշտ օտարի, խորթ օտարի դժոխք-շեմն էի մաշել... Այդ էր ճակտիս, անբաղդ կեանքիս սև գիրը...

Յուրա էր դուրսը, բուք ու բորան, օրը մթնել, թիփին կատողել, արև-երկինք մշուշի մէջ կորել էին... Էս աշխարհքի վերջն էր կարծես: «Օճս իր պորտով, հաւքն իր թևով» դուրս չէր գայ... Բայց ես պիտի երթայի, աղաս այդպէս էր պատուիրել: Խոտնոցն էլ հէ... հեռու, գիւղի էն ծայրին էր...

Չուլ ֆէրէճիկս (շալի վերարկու) առայ վըրաս. փաթաթվեցի, խուլուվեցի, մեծ քթոցն էլ շալակս առած, դուրս ելայ: Թիփու միջից, ձիւնի միջից էլ ի՛նչպէս եմ վազ տուել, քնթարեկով, քթիս-բերնիս վայր ընկնելով, վեր ելելով, մի կերպ խոտնոցը հասել... էլ չը գիտեմ:

Ձիւն ու քամուց դաղված դէմքս մոմուում էր... քամին ոռնում, փչում, շաշում, շառաշում. կարծեսնա էլ ձիւնից-բուքից մրսած-սառած, մերթ մղկտում հեկեկում էր, մերթ կատաղած գառամ ծերուկ ցուրտ ձմրան դէմ, գոռում-գոշում, մրանչում էր... Եւ բնութեան արիւն բերան ձիւն ու թիփու, բուք-բորանի համերգի հետ ինչ որ մի խուլ, սրտակտուր հեծկտանք էր ինձ հասնում, որ մերթ խեղդվում, կորչում էր զիլ քամու ուժ-

1551
3590

զին ոռնոցով, մերթ բեկբեկված կընծկընծոցով լավում հեռո՛ւն, շատ հեռո՛ւն... Կարծես հակայ-դե բնութիւնն երկունքի խիստ ցաւով բռնված, մանուկը դեռ մօր արգանդում պակասաւոր վիժվածքի պէս, հեծկտում էր, հեկեկում...

Մինչդեռ մրսած, պաղ ձեռքերովս ես մերթ քթոցս էի լցնում, մերթ կապուտկած քիթ-բերանս տրորում ու մտածում, թէ ո՞վ կը լինէր այդ սոսկալի անեղ ժամին դուրսը մնացած, յանկարծ դողով, սընգսընգալով ոտներս ընկաւ մի շան լակոտ... Լիզեց, կրծեց ձիւնոտ արեխներս, հոտմըտաց, ապա պոչը իրան քաշած, դողդողալով, փնգստալով յետ փախաւ, պատի տակը՝ խոտի արան կծկվեց: Նորից եկաւ, նորից լիզեց, հոտմտաց, սիրուն գունչը, կապտած գունչը վերև անկեց, վընգ-վընգալով հայացքն ուղղեց աչքերիս մէջ վախեցած. կարծես ուզում էր խօսել, խօսել — ասել, որ «ես ու դու ընկեր ենք...», ես էլ անտէր, դուն էլ անտէր, ես էլ եթում, դուն էլ եթում մենք ախպէր ենք, այնպէս չէ...» Բայց չը գիտեմ ի՛նչ հասկացաւ, ի՛նչ չը հասկացաւ իմ հայացքից, նորից փախաւ դողդողալով թագ կացաւ:

Ծանր քթոցս տըքտըքալով շալակս առայ ուզում էի տուն դառնամ, շունը նորից վազեց, եկաւ փոգ-փոգալով ոտներս ընկաւ... Խեղճ կենդանի, նա էլ ընկեր էր ուզում, ցրտից, քամուց պատասպարան էր խնդրում... Ծանր բեռիս տակ



կռացայ, որ վերցնեմ, հետս տանեմ. մի տեղ պահեմ, պահպանեմ, ախր մեղք էր, ախր խեղճ էր... այնպէս ճըշաց, աղէկատուր վնգ-վնգաց, որ կարծես թէ կէս արի... Խեղճը այնքան ծեծ էր կերել, հալածվել, որ մարդկանցից, չար մարդկանցից լաւ բան երբէք չէր սպասում...

Բայց ես վերցրի, ֆէրէճիկիս մէջ փաթթեցի, մի կերպ դրի թևիս տակ ու բռնիս տակ տըք-տըքալով, սընգ-սընգալով՝ ճամբայ ընկայ դէպի տուն:

Գնում ենք առաջ: Շան լակոտը թևիս տակից ճշում, գոռում, կաղկանծում է, ես էլ ցըրտից դողում, մրսում, դողդողում: Ու զիլ քամին հեհեալով, շընգ-շընգալով, մեր ձայները իրար խառնած, բերանն առած, տանում հեռուն, փրշում հեռուն, մոնշում, կարծես իրա մոնշոցին կամ մեր լացին, մըռմըռոցին շատ լսող կար...

Բայց... լսող կար... Յանկարծ, շանս ձայնը առած, խոլ-խաւարի՝ մութի միջից մի խումբ շներ հաշով-կանչով, հարայ-հըրոցով վրա հասան... Լեղիս ցամքաւ... Ուր փախչէի... Իբր ուղեցի ճանապարհից մի կողմ քաշվեմ, մի պատի տակ, մի քարի տակ կըծկըվեմ, պահ մտնեմ,—մէջքիցս հետ ձիւնի շեղջի մէջ թաղվեցի... Տեսածս այդ էր... Մի խօսթօ շուն վրաս ընկաւ, թևիցս ամուր բռնեց, քաշեց, քաշկոթեց, քիթ ու բերանս ուզածին պէս ձիւների մէջ տրորեց... Բայց իմ ճիշտ, աղէկատուր հեծկտանքս, թևիս տակից դե-

տին ընկած խեղճ շնիկիս կաղկանծանքը շներին էլ խղճի բերեց, գթի բերեց... Կարծես շունն էլ սիրա-գութ ունի...

Երբ ես ընկայ ու երկիւղից, անից-դողից կըծկըված, հոգեվարքի խեղճ հայացքով ոսոխներիս էի նայում ու շնիկս էլ պոչը քաշած վընգ-վընգալով աղերսում, ինձ գըզգզող թշնամիներս իսկոյն թողին ինձ, յետ կացան, շուրջս կողոր պըպըզեցին, պառկեցին ու դիտում են իմ ամեն մի շարժումս:

Բայց ո՞ր խենթը կը շարժվէր այդ պահուն, ասենք շունչ էլ կա՞ր մէջս որ շարժվէի... Երկար տևեց, չը գիտեմ ինչքան, անը թողած ցրտից սկսեցի դողդողալ: Եթէ մի քիչ էլ անցնէր, ցուրտն երևի սիրտս կանցնէր ու բանս արդէն պըծած էր...

Քամին վաղուց դադարել էր, բայց իրիկուայ սառնամանիք սազաղը սուր նետի պէս ծակում էր: Ի՞նչ անէի... Յանկարծ շնիկս ելաւ ոտքի, (դէ, երևի նա էլ մրսեց) հլու ստրկի աղերսանքով մօտեցաւ մեծ եղբայրներին՝ շներին, քիթը տնկեց, պոչը շարժեց, մէկ-մէկ խօսթօ, սև դընչերը լիզվոթեց, կարծես նրանց մի բան ասեց աղաչեց...

Շներն ելան, մէկ-մէկ եկան հոտմըտացին նախ շնիկիս լիզվոթեցին ասպա և ինձ ու հեռացան:

Մի բոլորէ ազատ սրտով շունչ քաշեցի ու թէ ի՞նչպէս տուն եմ ընկել—էլ չը գիտեմ...

Ներսի գոմը թախտիս վրա պառկած եմ: Թախտ եմ ասում, դէ, ինչ թախտ, կոյանոցի (աղբանոց) հէնց կողքին մի փայտէ «կամ» (կալսելու տախտակ) էր դրած, վրան էլ չոր խոտ փռած. դա իմ թախտս ու անկողինս էր: Չուլ վերմակիս՝ ֆէրէճիկիս մէջ խուլուկված, թախտիս վրա վէր եմ ընկած: Խօսթօ շունը թեւ կծել, բաւական մեծ վէրք էր բացել, բայց այդ ոչինչ, շան պէս «մշակն էլ մի եարով չի սատկի», որ անկողնով հիւանդ պառկի... Խիստ մրսելուց ես վարցաւքով (տիֆ) բռնված էի, անշունչ, անզգայ վայր ընկած: Չը գիտեմ ինչքան էր անցել, մի օր, շաբաթ, թէ ամիս... աչքս բացի:

Խեղճ շնիկս, որ կողքիս էր, ուրախացած, պոչը շարժեց, մօտեցաւ: Քաղցած էի, շատ քաղցած, համ էլ ծարաւ պապակած, կարծես ներսս կրակ ընկել վառում էր...

Իէս նայեցի, դէն նայեցի, տեսնեմ կողքիս կաւէ կոտրած մի բարդանով (աման) թանէ ապուր է դրած: Երևի դա տան մեծ-հարսի բերածն էր, (նա մի փոքր քաղցր աչք ունէր իմ վրա) և ամեն օր բարդանն իստակ, սրբած-լիզած գտնելով, կարծել է թէ կերել եմ: Այն ինչ ես միշտ վայր եմ ընկած անզգայ:

Շունս ապուրի կողքին հանգիստ պըպըզած, մէկ լրկում է խփշտում, մէկ ինձ նայում վընդ-վընդում:

Ապա թողեց թանապուրը, եկաւ թեիս վէրքն սկսեց լիզվոթել: Նոր զգացի, որ թեւ արդէն առաջուան պէս չէր ցաւում, շան լիզելուց էր, թէ ինչ էր, լաւացել էր: Բայց ծարաւից պապակ սիրտս վառվում էր, մէկն էլ խսկի ներս չէր մանում, թէ մի պուտ ջուր ուզէի... Իսկ շան լկած թանապուրը կողքիս էր... Ի՞նչ անէի, էլ ճարս ի՞նչ էր... Մի կերպ ձեռքս մեկնեցի, քարդանն առայ, մինչև տակը պապակ դնչիս քաշեցի: Մի բոլորէ կարծես սիրտս զովացաւ, բայց ծարաւս էլի չսնցաւ...

Լուռ էր գոմը, ոչ ոք չը կար. գոմէջ ու եզ, կով ու հորթեր կուշտ-կուռ կերած, ուռած-տըռ-զած, շարան-շուրան պառկել, ձգվել, որոճում են, մըշմըշում, անուշ, հանգիստ մրափում: Մէն-մէնակ ես հանգիստ դադար շունէի, աչքս դուռն էր...

Ախ, երբ պիտի մէկը ներս գար, որ մի պուտ ջուր ուզէի, ծարաւ-պապակ վառվում էի, ներսս կրակ, սիրտս դժոխք էր դարձել...

Բայց գոմի դուռը չէր բացվում, և ո՞ւմ պէտքն էր որ բացվէր... ո՞ւմ դարդն էր, թէ խեղճ մշակը ներսի գոմը անտէր, հիւանդ պառկած է և կամ արդէն հողին փշած՝ մեռած է... է՛հ, ի՞նչ

հոգի պիտի «փչէր», մշակն աղի աչքում հոգի
էրբ ունի...

Անտէր մնար էդ կեանքը, գնայ կորչի, էլ
յետ չը գայ ինձ համար... Գոնէ մայրս էլ կեն-
դանի չէր, քոյր չունէի, եղբայր չը կար, որ գէթ
մի պուտ պաղ ջուր տային... էլ ինչիս էր պէտք
էս կեանքը... Թող վար անցնէր, փչանար... Էս
աշխարհքը, փո՛ւշ աշխարհքը հարուստինն է, ա-
ղայինն է, խեղճ աղքատը, մշակն ինչի է ծըն-
վում...

Բայց ինչ էլ որ մտածէի ծարաւս իսկի մըտ-
քիցս չէր դուրս գալիս: Ուժ-կող արի, շունչս
հաւաքած, սկսեցի գոռալ, կանչել լարխնդած...
Բայց իզուր, ո՛չ ոք լալկան ձայնս չառաւ, ներս
չեկաւ... Մէկ էլ ամուր կանչեցի, աղաչեցի, պա-
ղատեցի, թէև ինքս էլ չը գիտեմ ո՞ւմ... Բայց
ի՛նչ օգուտ, մենակ շունս էր ինձ լսում, նա էլ
սկսեց վընգ-վընգալ, սիրտս լցվեց... Փորձ արե-
ցի վեր կենալ, գլուխս պտտեց, աչքերս մուժ-
մթնեցին, ու ես լալով, հեծկտալով վայր ընկայ...

Լացի, լացի, սրտանց լացի, շատ լացի... ա-
ղաչեցի Արարչիս, որ կամ հոգիս առնէ պրծնեմ,
կամ էս ցաւից ազատէ... Ախր ցաւը խեղճ-աղ-
քատին, որբ-եթումին ի՛նչ սաղ կը գար, ի՛նչպէս
տանէր, դիմանար... Բայց Աստուած էլ ինձ երևի
մոռացել էր, թոյլ ու անգոր լաց ու կոծս նրա
ահեղ, վեհ գահին էլ չը հասաւ...

Մ. իս ինչ լաւ է, որ թշուառին, խեղճ աղ-

քատին աղա մարդիկ, «բարի» մարդիկ գէթ կուշտ
լալու, արտասովելու իրաւունքից չեն զրկել... Լացը
լաւ է... Եւ ես լացի... այնքան լացի, արտաս-
վեցի, մինչ անգագայ քնեցի...

Առաւօտ էր. մուժ մշուշը գոմն առել էր:
Աղբի հոտը, մալի շունչը ծխի նման կանգնել էր:
Եզ ու գոմէշ ոտի կանգնած, բառաչում են, փըն-
չատում. նրանք էլ քաղցած, ծարաւ էին:

Հէ, ամեն օր այդ ժամանակ մալը վաղուց
դարմնած էր, թէ չէ գիտէք ի՛նչ կուտէի... բայց
այդ օրը մշակ չը կար, պառկած էր. տանը մար-
դոց շատ պէտքն էր թէ կուշանայ... Ամեն բան
իր ժամանակին միայն մշակից՝ ծառայից են պա-
հանջում: Ախր պարտքը էս աշխարհքում թոյլի
համար է սահմանված, «գօրբան» պարտքը ի՛նչ
կանէ... Իրաւունքն է նրանը, լուկ անսահման ի-
րաւունքը...

Երևի շատ ուշ էր արդէն, ես ընազդմամբ
զգացի այդ, բայց դեռ գոմի երթիքներն էլ բա-
ցած չէր:

Աչքս բացի, ծարաւս իսկոյն զգացի, բայց
գիտէի, որ ուր որ են հիմա կը գան մալին դար-
մանը տալու, դէ, ախր խիղճ կունենան, մի պուտ
ջուր էլ ինձ կը տան... Աչքերս էլի փակեցի, որ
չ՛գգամ, թէ ըսպէսերը որքան կամաց են ան-
ցնում:

Յանկարծ մէկը ոտքով հրեց.

— Ծօ, շան լակոտ, հերիք չեղաւ շնթուկիս, հօրդ մշակ վե՛վ կայ էստեղ... Ել, բան-գործի աշէ, թէ չէ վախտին չքվէ...

— Տիքօ տացու ¹, դէ հիւանդ եմ, կը տեսնես, ճար ունենամ չե՛մ երեսել...

— Հիւանդ-միւսնդ ես չիտեմ, փարա կառնես— պիտի դատիս, սեւ մեղքն է որ դու հիւանդ ես...

— Դէ ի՞նչ էնեմ, տացու ջան, ես խօ կամքով չը հիւընդցայ, ձեր ոչխրին խոտը բերի, մրսեցայ...

— Կաշէս, կաշէս, շան լակոտին, սուտ հիւանդ է եղել, պառկել, մահանան էլ (պատճառ) մեր ոչխարը կը բռնէ... Դէ ել, չքվէ, հարամ-զազա, բողի լակոտ, թէ չէ քիչ էլ մնաս էստեղ, վե՛վ գիտէ ի՞նչ շտուեր էնես...

Ու վրայիս միակ ծածկոց չուլ ֆէրէճիկն ուժով քաշեց, դէն գցեց...

Ականջներս հայհոյանքի շատ վաղուց էր սովորել, դա մշակի կեանքի «աղն ու համեմ» է, բայց այդ օրուան հայհոյանքը սիրտս ծակեց... «Բողի լակոտ»... Խղճուկ մօրս, մեռած մօրս սուրբ անունն էր աղբոտում... Խեղճ աղքատը ողջ աշխարհից բաժին ընկած մի կտոր սև հողի

¹) Ծան. «Տացու» — տիրացու խօսքի կրճատումն է, որ նշանակում է կարգացող:

մէջ էլ լիրբ աղայի սուր ճանկերից պիտի հանգիստ չունենայ... ոսկորներն էլ գերեզմանում հարուստ աղի հայհոյանքի առարկայ են... Է՛հ, ի՞նչ անեմ, ճակտիս գիրն էր... Ինչի՞ աղքատ էի ծընվել...

Կամաց-կամաց վեր կացայ, աչքերս իսկոյն մթնեցին, քիչ էր մնում վայր ընկնէի: Դէ սվ գիտէ քանի օր էր քաղցած փորս հացի պատառ չէր մտել... Պատից, սիւնից ամուր բռնած մի կերպ հասայ դրսի օդան: Տան մեծն՝ աղաս հաստ չիբուխը բերանին, լուռ նստած էր մեծ օջախի հէնց ափին:

— Աղա էամի ¹), Տիքօ տացուս դուրս կենէ. դու ի՞նչ կեսս, երթամ, թէ չէ...

Խոժոռ դէմքը դարձաւ ինձի՝

— Է, որ կենաս կարծող եմ... չըքվիս պիտի, չըքվէ գնա...

— Դէ... հախս (վարձս) տուր, երթամ աղա...

— Հախս... ի՞նչ հախ կուզես, ծօ իշու ձագ...

— Ախր, աղա, օխտը ամիս դատել եմ...

— Կաշէս, կաշէս, ինչէր գիտէ, հարամ-զազա... Օխտը-մօխտը ես չիտեմ, աչքէս չըքվէ... հախ կուզես... քեզ ես տարով եմ բռնել, տարիվ թրմմէ (լրացրու) հախդ առ...

¹) Ծան. էամի, փաշա, աղա-էամի: տացու, աղա-տացու, ափար, կատաշ... պատուաւոր մակդիրներ են, որ գործածում են մեր գիւղերում իրանից մեծի հետ խօսելիս:

—Դէ հիւանդ եմ ինչըդ էնեմ... հախս թամամ (լրիւ) խօ չեմ ուզել, դատածինս տնւր, երթամ...

—Մօ, ես բու... բերնին աշէ... պապասընը...

էլ չը գիտեմ ինչ եղաւ:

Աչքս բացի դրանն ընկած եմ մէնակ:

Յուրա էր դուրսը, բուք ու բորան, օրը մթնել, թիփին կատողել, արև, երկինք մշուշի մէջ կորել էին: Էս աշխարհքի վերջն էր կարծես... «Օձն իր պորտով, հաւքն իր թևով» դուրս չէր գայ... Ո՞վ էր կեանքից, գլխից անցել, որ էդ թիփուն հոգի հաւտար, ոտ դուրս դնէր տան դռնից..

Մէնակ էի, պաղ-ձիւնին մէջ մէն-մէնակ: Լոկ շնիկս էր գլխիս կանգնած անգանգում ու կարծես թէ ականջիս լուռ փսփսում... խօսում, ասում, որ «ես ու դուն ընկեր ենք, ես էլ եթում, տնն էլ եթում, ես էլ անտէր, դուն էլ անտէր... էս աշխարհքի խորթ զաւակներ... Անճի ախպէր ենք... այնպէս չէ»...

1901 թուին

Գանձա

ԻՄ ԱԶԱՏԱՐԱՐԸ

(Հովուի յուշատետրից)

Գառներին հօտը ցիր ու ցան արածում էր սիրուն ծաղիկների, դալար խոտերի մէջ: Հովիւ ընկերներս հեռու էին ինձնից, շատ հեռու... բայց ես մէնակ չէի: Եւ ինչպէս կարելի է մայիսին մեր լեռներում մէնակ լինել...: Մանրիկ մանուշակներն իրանց խաժուժ աչքերով խլվում էին երեսիս, սիրուն սէզն ու սիւմբուլ խոտը խալու պէս փովել էր տակս, հապա խնկածաղիկը... մեր ժամի կնդրուկի պէս բուրում էր չորս դիս: Խոտերի մէջ խուճը-խուճը ցցված կակաչներն էլ նորահարսի պէս, կաս-կարմիր փեշերը փռած, փոփոալով, լուռ մրմնջում էին մեղմ զեփիւռի հետ: Դէմ ու դէմս հսկայի պէս, թինկը տված լերան լանջին, յոգնած ծերուկի պէս կռթնել, կշտին էր ընկել հինաւուրց ժայռը՝ լեռ սպառաժը...: Նրա կրծքից, խոր սրտից լուռ խոխոջով հոսում էր մօր արցունքի պէս պարզ ու վճիտ առուակը: Գլխիս վերև, ժայռի գլխին, առ-

ուակի մօտ, ամեն տեղ անուշ ճուղողով ծլվում,
թռչկոտում էին ծիան ու արտուտը, լորն ու սա-
րեկը, մեղուն ու բզեզը, թիթեռն ու ճպուռը...:

Հովիւ ընկերներս հեռո՛ւ, շատ հեռո՛ւ էին
ինձնից, բայց ես մէնակ չէի...: Եւ ինչպէս կա-
րելի է մայրսին մեր լեռներում մենակ լինել...:
Հէ՛, բարձրում, էն շատ բարձրում, տես կարմիր
արևն է ցոլցոլում, վառվռում ու իր կճան-կըճ-
կըճան ճառագայթները, սուր սուրինների պէս, խը-
րած լեռների կատարի ձեպ-ճերմակ ձիւնին, ծա-
կում, ծակծկում է նրանց պսպղուն պաղ սիրտը:
Լուսինն էլ, դալուկ, դժգոյն գիշերուան շրջմովիկ
լուսինն էլ, հիւանդոտ, գունատ տղի պէս, վառ
արևից վախեցած, աչքերը խփխփելով, փախչում
էր երկնքի կապոյտ եզրից: Հապճ սև ու սպի-
տակ գառնիկներխ, սատանի ձագ ուլիկներխ
մկկոցն ու մայցը...: Միթէ՛ ես մենակ էի: Խօ-
սում էին, խաղում ինձ հետ բոլորը, ես լսում էի
նրանց, հասկանում նրանց ծլվան լեզուն, հետ-
ները խաղում, սւ թէն չը գիտեմ ինչո՞ւ լսածս չեմ
կարող ասել, սրտիս զգացածը բերնով պատմել,
սակայն ես երջանիկ էի, շատ երջանիկ...:

Ապուլի սպիտակ կատարն յանկարծ ամպի
թեթև քողն առաւ ամօթխած երեսին, կարծես
ուժասպառ էլ անկարող էր դիմադրել արևի լիբը
ճառագայթներին: Ամպը մեծացաւ, ամպը սևա-

ցաւ: Արևն էլ գլուխը կախած, կարծես նախան-
ձելով Աբուլի սարին, ինքն էլ մտաւ սև ամպի
տակ ու բաց-կապուտակ երկինքը պղտորվեց,
սևացաւ...: Օդը ծանրացաւ, խտացաւ, կարծես
երկինք ու գետին խօսք մէկ արած սեղմում,
ճգմում էին նրան: Թռչնիկները լռել էին, ծաղիկ
ու խոտ խոնարհել, գլուխները կախել, կարծես
վախենում էին սևցած երկնքից: Մենակ առուն,
անհոգ, անվախ առուն դեռ խոխոջում էր, կար-
կաչում. մերթ «սատանի» քամին ոլոր-մոլոր օձի
պէս գալարվելով, ուլուլալով, ճոնապարհի բարակ
փոշին բերանն առած, բարձրացնում էր վեր ու
երկինք-գետինք իրար խառնում...: Թեթև գորշ
ամպերը, կռունկների շարան-շուրան երամների
պէս լողում էին դէպ աղօթարան: Լուռ էր շուր-
ջըս, խաղաղ ու հանդարտ: Գառներիս հօան էլ
տանջող սօթից, թէ վերահաս վտանգի բնազդով
պաշարված, գուլուլվել, գունդ ու կծիկ եղել, ի-
րար ծոց էին մտել: Մենակ ես խենթ ու խելառ
առուակի պէս ոչինչ չէի զգում, նախագուշա-
կում: Մերթ վճիտ կոհակների միջից հանած քա-
րերս էի նետում դէպ ժայռի կատարը, լերան
լանջը, մերթ շուխտ ձեռքով շուր էի շաղ տա-
լիս, լողացնում լեռ ապառաժը...:

Յանկարծ ցուրտ քամին փարվելով երեսիս,
անուշ երագների մէջ մրափողի պէս ինձ էլ սթա-
փեցրեց: Շուրջս դիտեցի, վար-վեր նայեցի, իս-
կոյն զգացի, որ անձրև պիտի գայ: Սիրտս կուտ-

քած, խաղա թողի, փոր-փոշման վազեցի գառնե-
րիս մօտ, որ գիւղ քշեմ: Բայց սւշ էր արդէն...: Իսկ գիւղը հեռո՛ւ, արևն էլ չը կար, չը գիտեմ
ամպերի տակն էր դեռ, Աբուլի հետ քշփշու՛մ, թէ
ոտք-ձեռք առած մօր գիրկն էր վազում:

Յարկարծ Աբուլն ամուր գոռաց ու քարօտ-
Քօրօղլին ամպերի ճարճատիւնի միջից պատաս-
խանեց շեշտակի շանթով: Յորդ անձրևի խոշոր
կաթիլները մէկը միւսի յետևից հաւար-հաւար
սկսեցին թափվել բոլոր ուժով:

Բայց ահա մի խուլ խշշոց լսվեց հեռուից ու
կատաղի բամուզ գիւ սուլլոցի հետ սկսվեց խոշոր
կարկուտի ուժգին տարափը: Գառներս աւելի
գուլուլվեցին, իրար ծոց մտան, ես էլ ժայռի
ծոցը: Մարից հեղեղ պրծաւ ու ահռելի վիշապի
պէս որոտալով, եկաւ լեռնի վայր ինձ անջատեց
անտէր հօտիցս:

Բայց, ախ, այն ի՞նչ էր գալիս հեղեղի հետ
լեռան լանջից...: Չորս հատ գամբու, բրթոտ պո-
չերը քարշ գցած, դնչերը ցից, ոռնալով, ուլու-
լալով գալիս են ցած: Հօտս ցրրվեց, ցիր-ցան ե-
ղաւ...: Սատանի ձագ սև ուլերս մկկալով բար-
ձրանում էին ժայռն ի վեր, գառներս երկիւղից
որը կուշ եկել, գետին էր կպել, որն էլ բոլոր
ուժով թեթև ոտներին զօռ տալով, փախչում էին
լանջն ի վեր, երևի իրանք էլ չը գիտէին ուր:
Սևուկ «քուռա» գառս էլ, որ ողջ հոտիս ծաղիկն
էր ու ամենից շատ սիրելի ինձ, սև հերկի խոր

ակօսում նապաստակի պէս տափ մտած մեղմ
մայում էր:

Կեանքիս մէջ գայլ չէի տեսել ու սկզբից
կարծեցի թէ եկողները շներ են. անտէրներն
այնքան նման էին շան: Բայց, երբ մօտեցան,
ախ, սիրտս դողաց, աչքերս լցուան, քիչ էր մը-
նում լաց լինէի, շան բան չէր դա: Ընկան հօտիս
մէջ, մէկի վզից, մէկի դմակից ծամծմեցին, վայր
թափեցին: Կարծես մէկը, երկուսն, երեքն հերիք
չէր նրանց անկուշտ փորին...: ուզում էին ամ-
բողջ հօտս վերջացնել...: Մէկն էլ դունջը տըն-
կած, արիւնոտ շրթունքները լիզելով, լիզվոթե-
լով, ծուռն ու մուռ քայլերն ուղղեց դէպի
հերկը՝ «քուռա» գառս...: Էլ չը կարողացայ ես
ինձ գսպել, ակամայ արցունքն աչքերիցս թափ-
վեցին ու հեկեկալով, հեծկտալով, մի բար սեղ-
մած փոքրիկ բուռնցքիս մէջ, շուրը ձեղքեցի ու
վազեցի գառիս մօտ, գագանի մօտ...: Բայց ան-
պիտանը կարծես ծըռծուկս էր գալիս, հեղնում
ինձ. դունջը տնկեց, մի խուլ ոռնոց հանեց ու
յետ դառնալով մի ուրիշ գառ գտաւ, ծամեց,
ծամծմեց...: Իսկ ես ուրախ, որ «քուռա» գառս
սաղ էր դեռ, գրկեցի ու թաց գետնին ինքս էլ
հետը պառկեցի, կուշ եկայ սև հերկի մէջ: Գայ-
լերն, առանց ուշք դարձնելու լաց ու կոծիս, ա-
ղաչանքիս, շարունակում էին իրանց գործը և ես
սրտատրոփ սպասում էի, թէ ահա շուտով հերթը
կը հասնի և իմ գառիս՝ «քուռա» գառիս, գուցէ

և ինձ...: Գրկեցի գառիս, ուզում եմ փախչել, հեռուն փախչել, գիւղ փախչել, բայց սիրտս երկրորդից թռթռում է, ոտներս գողգողում, վայր եմ ընկնում, նորից պառկում, գեանին կըպչում...:

Գայլերն ահուելի խրատելիակների պէս շուրջս ցցվեցին, պըպգեցին... ու գարշելի ոռնոցով կարծես հօտիս վերջին մնացորդը՝ «քուռա» գառս էին պահանջում: Դողը ջանս ընկաւ ու օրհասական յորդ արցունքը մահուան տօթի, քրտնքի պէս թրջեց երեսս:

— Գայլերն ինձի կուտեն... Ապա ջան, սխապա ջան (մայրիկ)...

Հացիս ձայնակցում էին ինձ լացացնողներն իրենց ոռնոցով: Բայց այդ անյոյս հեծկըտանքիս մէջ յանկարծ լսեցի ինչ որ շան հաջոց: Չայնս կարեցի, գայլերն էլ ինձ հետ ու մենք միասին ականջներս սրած սկսեցինք լսել մէկիս փրկութիւն, միւսիս կօրուստ սպառնացող ձայնը: Չայնը լսեց, ահն ու սարսափը նորից տիրեց ինձ, բայց երկու բոպէ չանցած, յանկարծ բլրակի յետևից երևացին երկու շուն: Երկաթի «խշաերը» (վզնոց) շխլշխկացնելով, ահուելի հաջոցով վազում էին դէպի մեզ: Աչքերիս չէի ուզում հաւատալ, մեր Ասլանն ու Ղափլանն էին (շան անուներ): Գայլերը մի անգամ էլ ոռնացին, իրար երես նայեցին ու բրթոտ պոչերը քաշտալով փախան լեռնի վեր, շներն էլ նրանց յե-

տևից... Բայց լերան կէսը դեռ չէին ելել, Ղափլանը տեսաւ լանջին յոշոտված գառներին լէշը, կանգնեց, հոտմտած ու սկսեց գայլի պէս լափել, իսկ Ասլանն, առանց յետ նայելու, քշեց գայլերին, երևի նա ուզում էր իր պահած-պահպանած հօտի վրէժն ատնել անգութ ցեղակիցներից...: Մերոնք շան հաջոցով գտան ինձ ու ողջ հօտիցս մնացած միակ գառիս՝ «քուռայիս» հետ տարան տուն: Երեկոյեան Ղափլանն եկաւ հետևելով ու մերոնք կարծելով թէ «հաւատարիմ» շունը գայլերին հալածելուց է յոգնել, սկսեցին փայփայել, լափ տալ: Ասլանը չը կար: Երեք օր յետոյ միայն նա տուն դարձաւ, բայց արիւնլուիկ, բզիկ-բզիկ, թոյլ ոտներն հագիւ շարժելով, վնգստալով վայր ընկաւ ոչխարնոցի դրանը: Մերոնք հաւատացած, որ Ասլանը գայլերի հետ միս ուտելու էր գնացել, առանց ուշք դարձնելու իմ լաց ու կոծիս, հրացանով խփեցին խեղճին...:

Այդպէս է մարդոց օրէնքը...:

Երկար, շատ երկար ես չէի մոռանում Ասլանիս՝ իմ «ազատարարիս» ու ամեն անգամ այդ սև սարը գնալիս միշտ աչքերս արցունքով էին լցվում...:

1901 թ. ապրիլ
Գանձա

Կ Ր Ա Կ Ը...

— Ի՞նչ անենք, Նազրու, արար - աշխարհ
ցանքսը պրծաւ, մեր արտերը սև մնաց, ո՛չ մի
տեղից սերմի գարու ճար չեղաւ...:

— Եստիմ, Գալօ, սերմը կըսես, բնադոնէն
(ուտելիք) հէջ խաբար չես, մէ եփելում ալիւր
ըլի ես չըլի...:

— Աղջի, ալիւրն էլ պարպել է...:

— Պարպել է...:

Գալօն լռեց: Նազրուի հաղորդած սոսկալի
լուրը լեզուն փակեց: «Մէ եփելում ալիւր ըլի
եւ չըլի»...: Մի շարաթ էր դոնէ դուռ ընկած
խեղճ Գալօ: սերմի ճար չէր կարողանում անել,
այժմ դրա վրա աւելացաւ և ուտելիքի՝ մի կտոր
չոր հացի հոգսը...: Ո՞ւմ դիմէր, ո՞վ առանց փող
մի բուռ հաց կը սեցնէր Գալօի պէս աղքատ,
անճար գիւղացուն, որի ութն անգամ գերդաս-
տանը մի գոյգ եզան պոչին էր նայում...: Դեռ
այդ եզները պիտի վճարէին և Գալօի հայրական
անսպառ ժառանգութիւն երկու հարիւր մանէթ

✓ պարտքի գէթ տարեկան տոկոսը: Անտէր մնար այդ պարտքը, որ ոչ վերջ ունէր, ոչ վախճան...: Տասնուվեց տարուան սև-մութ պատմագրութիւնը ունէր այդ անտէրը, որ շատ քշերին էր յայտնի: Գալօին կարգելու (ամուսնացնելու) ժամանակ, նրա հայրը յիսուն բուրլի պարտք էր վերցրել Մարտիրոս աղայից, ու թէև տարէց տարի հայրն էլ, ինքն էլ, տալիս էին տոկոսը, բայց դարձեալ գիւղի գրագրի «հաշիւով» դարձել էր «երկու հարիւր» մանէթ...: Երկու հարիւր մանէթ պարտք ունեցող զիւղացուն էլ ո՞վ բան կը հաւատար...: Մինչդեռ Գալօին 50—60 մանէթի հաց էր պէտք. 2—3 սոմառ ցանելիք՝ սերմ, մի այդքան էլ ուտելիք, մինչև նորի հասնելը: Անխուսափելի կարիքը Գալօին էլ, կնոջն էլ լեզուն կապ էր ձգել: Լուռ էին, բայց երկուսն էլ անքուն, աչքերը բաց...: Երկու օրուան ալիւր չը կար էլ ո՞ւմ քունը կը տանէր...:

— Գալօ, զորթ Օննիկին հախը (վարձ) չէ՞ր տայ Մարտիրոս աղան, սօմառը՞ գարի առնէիր, տեսնէինք Աստուած ինչ կուտար...:

— Ի՞նչ հախ, աղջի, էն շատո՞ւնց պարտքին շահին է հաշիւել, հըր օրը տասն անգամ էլ մնացած շահը կուզէ, թէ չէ կըսէ եզներդ ու արտերդ «սիւղով» կառնեմ... հիմի փափրա կուտայ մեզի...: Անցնող օրն էր, զուռ ու դըրկից վրա եղան, էսքան ասաց, թէ՛ արտերը թող ինձի տայ, ինքն էլ փողին շահին տեղը թող

«մարաբա»¹⁾ գայ լինի, ուտելիքը տամ, բանմ էլ պարտքից պակսեցնեմ...:

Դարձեալ լուցին, ու մարդ ու կին անքուն, կշտէ կուշտ դառնալով, մի հնար, մի ելք էին որոնում այդ անել, գիշերուան պէս սև-մութ դրութիւնից...:

Աշունք էր: Քաղը վերջանալու վրա էր: Մի կողմից էլ հայ-հաւար կըրում էին, մալ ու ոչխարի բերնից փախցնում գարու ու ցօրնի եղընները: Բերքը սկզբից թէև շատ լաւ էր, բայց այդ տարին սև-մութ տարի էր Գ.-եցոց համար: Քաղի կիսին կարկուտն եկաւ ցանքսի կէսը սրբեց տարաւ, շատ զիւղացու լացացրեց, տունն ու տեղը աւրեց ու մի շարք անջինջ «ես ի ներքոյ ստորալրեալների» թիւն էլ իրա կարգին աւելացրեց...:

Ամպ ու գամպ մի օր էր: Առաւօտից մանր անձրեղ մայիսուայ պէս մաղում էր: Դուրսը թօն ու թօնջանք, ցելս-ձխանք էր: Իրիկնադէմ էր: Օրնի սայլերը ճուլթիով, գուլթիով շարան-շարան մտնում են գիւղ: Հինգ սայլ մի անգամից թափում էին Մարտիրոս-աղի մեծ կալը: Նրանցից մէկն էլ Գալօն էր: Մի ժամուայ մէջ զիւղից

1) Ծան. Մարաբա—սեփականութիւնից զուրկ գիւղացի, որ փողի տոկոսի կամ պարտքի տեղ ամբողջ ընտանիքով ծառայ են մտնում:

գարու անագին դէզը: Կարկուտը թարսի պէս գիւղի այն կողմը չէր գարկել, ուր Գալօի արտերն էին: Անտէր կարկուտն էլ, եղեամն էլ, ցաւ ու փորձանք, պատուհասն էլ խեղ-անճարի, թոյլ-աղքատի համար են միայն: Աստուած էլ կարծես հարուստի կողմն է պահում, պաշտպանում...:

Քանի Գալօն դռնէ դուռ մուրած, պարտքով գնած սերմով իր համար էր ցանում արտերը, կամ կարկուտն էր խփում, կամ երաշտն այրում, կամ եղեամը սառեցնում, մուկը կտրում, ճիճուն ուտում...), իսկ այդ տարին, որ էլ «դանակը ոսկորին հասած», անճար մնացած, Մարտիրոս աղայի համար էր ցանել, ոչ կարկուտ մօտեցաւ նրա արտերին, ոչ եղեամ, ոչ մուկ ու մօտեղև այդ արտերից Գալօն քսան սայլ բնձի պէս դարի քաղեց իր տղի ու աղջկների հետ ու պարտքի տոկոսի տեղ դիզեց Մարտիրոս աղայի կայր...:

Անձրեն արդէն կտրել էր ու մութ, քամի գիշեր էր, երբ Գալօն տուն եկաւ: Շաբթով կրակի երես չը տեսած թոնրի շուրջը սղայքն առել ձուարել էր խեղճ Նազուլն:

— Ել բրթուճրմ հաց բեր, ուտենք, քնենք, Նազուլ, էս վախոս ինչի՞ էք նստել...:

— Հաց բեր, կայ որ բերեմ... անօթի փորով քնել կըլնի՞...:

— Աղչի, անաստուածներն էլի՞ ալիւր չեն տուել...:

— Հացը թանգ է, կըսեն, քիչմ հատարով ապրեցէք. հայ, սև-մութ ըլլիւր էս ապրուստը, որ մենք կապրինք...:

Վերաւոր վագրի պէս խոր մոնչաց Գալօն ու սեան հետ դիք կանգնած մնաց:

— Ափարս եկա՛ւ... ապա ջան (մայրիկ), հաց չը բերեց...: Մինդրի տակից քաշքշելով, աչքերը ձմռելով կանչում են փոքրերը...:

— Քա էլ ինչի՞ մոլրար, մնացիր, գնա երկու հացըմ փոխ բեր դրկցանցէն, մէմ տղոցը ձէնը կտրենք, տեսնենք ետև ինչ կենենք...:

— Էրթամ, էրթամ... չիբուխը վառելով, խոր ներսից պատասխանեց խեղճ Գալօն...:

Դրկցանց տունը շատ մօտ էր՝ պատկից, բայց կէս ժամից Գալօն հագիւ տուն դարձաւ, կռան տակին մի քանի դարի հաց դրած: Աղքատի հացն էլի պիտի կշտացնէր աղքատին, թէ չէ հարուստի հացն էլ մարդ կլտացնէ...:

Մինտրի տակից վժվժալով դուրս թափան մանր ու խոշոր ու շրջապատեցին փոքրիկ, կտր խոնչան (հացի ցածոտն սեղան), որի վրա կաւէ բրէզանով պըպգել էր աղքատի սև օրուան ընկեր աղի դմին (կանաչ):

— Ապա (մայրիկ) էսօր պա՛ս է...:

— Պա՛ս է, բալա՛ս, պա՛ս, կերէք, քնեցէք...:

Խեղճ տղայք, ասան ուտիս երբ էիք տեսել, որ պասն էիք հարցնում...:

Գալօն ձեռք չը տուեց բերած հացին, թէև ամենից առաջ հաց ուզողն ինքն էր: Նա լուռ նստած սեան հետ, բոլոր ուժով չիբուխի կծու ծուխը ներս էր քաշում ու սրտի փոթորկից շըրթունքները կրծոտելով, քուլա-քուլա դուրս թողնում: Լուռ էին բոլորն էլ. ամենքն իր գործով էր զբաղված: Տղայքն անխօս, հարամու պէս գարի, չսր հացն ու դմին բրթուճ արած, հաւար-հաւար կոխում էին բերաններն ինչքան տեղ կար: Նազուկն էլ մօտերը նստած, մի պատառ բերանը դնելով, դանդաղ, կարծես ակամայ ծամծամելով, շարունակում էր թեշիկը պտտացնել, որ Մարտիրոս աղայի թոռներին գուլբացու հասցնէր...: Միայն քամին լպիրշ հռհռոցով քրքշում էր, կարծես խեղճ Գալօն սև բաղդն էր ծաղրում... սըրտից խօսում...:

Յանկարծ գիւղում դալմադալ ընկաւ. ինչ որ բղաւոց, ճղաւոց, մարդիկ սրտապատառ վազում, վազվզում են: Գալօն, շարախինդ ժպիտն երեսին, կարծես բնագդմամբ, վեր թռաւ տեղից:

— Դո՛ւ, էդ ի՞նչ դալմադալ է...:

— Ձե՛ս իմանալ... կրակը... կրակը... գոռալով դուրս թռաւ Գալօն:

— Կրակը... կրակը... եանդուն է... (հրդէհ) հասիք, Աստու սիրուն... նոր լավեց Գալօն յետքից դրսի հաւարը...:

«Եանդուն» էր: Ծուխն առել էր դիւղը: Գրունից դուրս եկողը վազում էր Մարտիրոս աղի մեծ կալը, որ մուխ ու բոցի մէջ կորել էր...: Քսան սայլնոց բրնձի պէս դարու դէզը, որ երէկ միայն Գալօն արտերից կրել, բերել, դիզել էին, դժոխքի պէս վառվում էր...: Քամին ու բոցը, բոցն ու քամին լպիրշ հռհռոցով գրկախառնվում, համբուրվում էին սև մութի մէջ...: Ամբողջ գիւղը գործի էր. որն եղանով, որը թիով, որը բահով, ծուխ ու բոցի մէջ նետված, աշխատում էին: Գալօն էլ նրանց մէջն էր. նոյն ժպիտն երեսին կրկնում, խառնխառնում էր օրանը: Բայց ո՞վ գիտէ հանգցնելն, թէ՞ կրակն աւելի գորխըցնելու նպատակով...: Եւ Գալօն խորհրդաւոր ժպիտը մենակ չէր: Ծուխ ու բոցի մէջ շատերի դէմքին վայլում էր նոյն շարախինդ ժպիտը...:

Հրդէհը քանի գնում սաստկանում էր, տարածվում ու իր սոսկալի ճարճատիւնը քամու վռոցի հետ միացած, խառնում կանանց ու մանուկների ճիչ ու վայնասունին:

Կրակը սրբեց, մաքրեց տարաւ Մարտիրոս աղի ամբողջ կախն ու խոտի դէզերն էլ կէս արել, լսփել էր, երբ հազիւ կարողացան մի կերպ հանգցնել:

Կէս գիշեր անց ամբոխը ցրվեց: Գալօն էլ գնաց տուն ու կեանքին մէջ գէթ մի անգամ թէև քաղցած փորով, բայց հանգիստ, հովցած սրտով քուն մտաւ...:

W Կրակը մարաւ... ու իր հետ քանի վառված,
Գալօի պէս դաղված սրտերի կրակ մարեց...:

W Բայց Մարտիրոս աղի մեծ կալից դեռ եր-
կար գալիս էր խոտ-օրանի խանձահոտը, որ իր
անգութ գէշ գործերի արժանաւոր խոռնկ-կընդ-
րուկն էր...:

1902 թ. մարտ

Սաթխա

«ՍԵՒ-ՄՈՒԹ ՀԱՐՍՆԻՔ...»

(Տաճկահայ գաղթականների կեանքից)

Մի ամիս էր, ինչ Ռէս-Սըքէի ¹⁾ որդին՝
Կրպէն մեռել էր: Ինչքան հեշտ է հեռուից ասել
«մեռել էր»... Մի մտէք գաղթական Ռէսի տուն,
տեսէք ի՞նչ լաց, սուգ ու շիւան էր ընկել... Ախր
խեղճը չորրորդ ջահէլ-Չիւան «բալէն» էր թա-
ղել...: Անտէր մահն էլ կարծես ջահէլն է սիրում
ու նրանցից էլ լաւը, քաջը միշտ շոկում... Տա-
րիքն առած, ոտքից-ձեռքից ընկած ծերը սլմն է
պէտք. մայն էլ նրան կարծես գոռով է տա-
նում...: Քանի անգամ ծեր Ռէսը արցունքն աչ-
քին ադաչել էր «հոգէտոին», պաղատել, որ իր
որդոց, բալիկների փոխարէն իր չոր հոգին աննէ
տանի... Բայց «գրողի» ինչի՞ն է պէտք չոր հո-
գին... Անտէր մահն էլ կարծես ջահէլն է սի-
րում...:

¹⁾ Ման. Ռէս՝ առաջնորդ, քեօխուա, գիւղի ա-
ռաջաւոր:

Իեռ «վաթանում»՝ անուշ երկրում խեղճ Ռէսի երեք որդին՝ Ղըրօն, Ափօն ու Մրտօն ընդհան «սարի» մեծ կռվում... Այն ժամանակ Ռէս-Սրքէն չը լացեց: Չազը կորցրած ծեր վագրի պէս նա կատաղեց, մռնչաց ու, երբ երեք «բալիկները» արիւնլուայ հսկայ դին պատուով, շքով սև-մայր հողին պահ տուեց, գերեզմանից էլ տուն չեկաւ...: Տարիներով պատեանի մէջ հանդիստ քնած կեռ թուրը մի անգամ էլ մէջքին կապեց ու «մեծ կռուից» ողջ մնացած գիւղի շահէլ կրտրիճներին իր շուրջն առած, մութ գիշերով վրա տուեց քիւրդ Հտասնի՝ իր քերուայի օբային...:

Հէյ, մութի մէջ ինչեր ասես չեն լինում... Արևն իսկի օր-ցերեկով այնքան արիւն չէ տեսել, որքան վախկոտ, դժգոյն լուսինն ամպի տակից մութ գիշերով է դիտել...:

Օբան քանդվեց... Մայր ու մանկի ճիչն ու լացը սար-ձոր բռնեց... Լերան լանջի ծաղիկ ու խոտ կարմիր ներկվեց, արիւն խմեց, մարդու արիւն, քրդի արիւն... և այդ արեան յորդ հեղեղը Ռէս-Սրքէի սրտի կրակն հազիւ մարեց, հանգցրեց...: «Արիւնի դէմ արիւն պիտի թափվի» ախր...: այդ է սարի վայրի մարդու դաւանանքը... Եւ Սրքէի սիրտը հովցաւ...: Բայց այն օրից այդ սարերում, արիւն-կրակ լեռներում էլ հայի հոտ չը մնաց...: Ռէս-Սրքէն էլ ամենից վերջ քօշը քաշեց սև սարերից, իր վաթանից ու իր տուն-տեղ՝ մալ ու ապրանք, իր պապերի, հին

քաջերի նուիրական գերեզման, դազան քրդին բաժին թողած, մանր ու խոշոր քիւլֆաթն առաւ հազիւ մի կերպ այստեղ ընկաւ...:

«Քօշը քաշեց»... Ինչ հեշտ բան էր քօշը քաշել, երկրից դաղթել...: Ախր էդ սուրբ վաթան-հողի, սար ու քարի, դաշտ ու ձորի, ամեն քերձի-քարափի հետ կապված է սուրբ մի յիշատակ — Ռէսի կեանքից մի արկած: Ապա այն իր պապի հիմնած «ժամն» (եկեղեցի) ու տճնը, մեծ Ռէսի բերդ օջախը...: իր պապերի, նախնիքների նուիրական շիրիմները... հեշտ էր թողնել ու հեռանալ...: Իսկ այժմ այստեղ, այս փուշ երկրում, վերան երկրում հոգուն մօտիկ, սրտից խօսող ինչ ունէր խեղճ, պանդուխտ Սրքէն... Հողն էլ օտար, շուրն էլ օտար, կարծես երկինքն էլ ուրիշ էր այս երկրում... այն լեռների, դիք լեռների պարզ ու յստակ կապուտակին նման չէր... և գիշերը դաժան-դժգոյն ծեր լուսինն էլ գաղթականին խոռ աչքով էր միշտ նայում...:

Եւ այս օտար երկնքի տակ խեղճ Ռէսի թև ու թիկունք երեսնամեայ ջահէլ-ջիւան Կրպէն մեռաւ... բալէն մեռաւ...: Սրքէն լացեց: Էն սարերի ծեր առիւծը, որ ապառաժ, ժեռ-քար սրտով ոչ մի քրդից յետ չէր մնում, այսօր նըստած, թև ու թիկունք գիրկը թափած աղի-աղի արտասվում էր...:

|| Կրպէն մեռաւ... էլ ո՛վ պիտի իր քուլֆաթին, քսաներկու ջան մեծ ու փոքրին հաց հասցնէ...

ծեր Ռէսը... քսան տարի էր խեղճը գործի ձեռք
չէր առել: Բա ի՞նչ անէր... թոռնիկները...
բալիկները...: Ենէր մուրաբ... Այն օջախի, դով-
լաթի տէր, հարիւր քիւրդ բէկ, շուն ու շուոր
կերակրող՝ կշտացնող Ռէս-Սըքէն դռներն ընկ-
նիր հաց մուրար... Վայ փշանաս, դու փոշ
աշխարհք... Դէ փուլ արի, էլ ի՞նչի ես շուռ
գալիս...

Եւ արցունքը, «դարիբի» դառն, յորդ ար-
ցունքը ծերի աչքից, արնոտ-դարտոտ կնճկների
արանքից հեղեղի պէս հոսեցին...

Կրպէն մեռաւ... պէտք էր թաղել, բայց ո՞ր
թաղէր, Ռէս-Սըքէն գերեզմանի տեղ էլ չունէր...
Օտար հողը, այդ սառն հողը բանդուխտի դին
ներս կաննէր...

է՛հ, օրօցքդ կոտորի, դարիբ, գերեզմանդ էլ
պիտի մուրաս...:

Դէ լաց, Սըքէ, մեծ սարերի ծեր Ռէս, լա-
ցիդ մէջ էլ մենակ ես... օտար սարեր, օտար ձո-
րեր խեղճ լացիդ էլ ձէն չեն տալ...

Մի ամիս էր ինչ Ռէսի որդին՝ Կրպէն մե-
ռել էր: Դաժան ձմեռ է, կատաղի ձմեռ: Քամին
վրո-հա վրո փչում է փչում, կարծես թէ ձմրան
սառնամանիքից սառած-փէտացած, մի ծակէ
փնդրում, որ լեղապատառ ներս ընկնի, տաքնայ...
Դաղթականի տան ծակ-ճեղն է պակաս... Վըզզ...

փչում է ներս, պատէ պատ խփվում, քիթ-բերան
Չարգում, ապա նեղացած կարծր քարերից, իր
պաղ թևերով տան մէջտեղ նստած, իրար ծոց
մտած խեղճ մանկիկների մարմինն է գրկում ու
ականջներին կարծես թէ ինչ որ բան է փսփսում:
Եւ մանկիկները գունատ ու նիհար, քիթ-երես
կապտած, քամու գէշ լեզուն կարծես հասկացած,
իրար են կպչում, խոտէ խախի կոշտ հովանու
տակ դողում, սնգանգում...

— Նանէ, ցուրտ ա... Ափօն չեկաւ... կըն-
ծըլնծալով կանչում է խեղճ Զայրիկը:

— Հա, բալէ ջան, Ափօն կ'իգայ, փէտ կը բե-
րայ, վառենք տաքնանք:

— Նանէ, Կրպէս ե՞րբ կ'իգայ...

— Կ'իգայ... բալէս... կ'իգայ...:

էլ խեղճ կնոջ ձայնը կտրվեց: Անտէր, թը-
շուառ, անբազդ մարդի միակ ընկեր դառն ար-
ցունքը ակոս ձգեց ցրտից կապտած ջահէլ կնոջ
թարմ դէմքին... Ծաղիկն էր դա՛ Ռէսի հարսը,
Կրպէի խեղճ այրի կինը:

Տան մեծերը, տղայ ու կին գնացել էին հա-
րևանի մօտ գոմերը տաքնալու, իսկ Ծաղիկը,
իբրև ջահէլ, սգուր այրի, տանն էր մնացել փոք-
րիկներին նայելու:

Երեկոյ էր: Խոլ-խաւարը խեղճի արցունք,
քաղց ու ծարաւ, հազար-մի դարտ, ցաւ ու տան-
ջանք, զեղիս հարուստի տուփանք, վայելք, խինդ,
հոհոց, ուրախ կանչեր գիրկն էր առել, իրար

* խառնել... Բայց խաւարը, ցուրան ու մութը
 ինչին են պէտք հարուստի: Թող գաղթական
 Ռէս-Սրբէն դարա անի, որ ճրագում մի վառելու
 ձէթ չունի...:

— Հէյ դու երկինք, ինչ կը լինէր որ այդ
 սև մութի ու ձմրան պէս մահն էլ մենակ խեղ-
 ճին տայիր...: Դաժան մահը հարուստին ի՞նչ սագ
 կուզայ... Բայց չէ... Լաւ է, այդպէս լաւ է...
 Տանջանք, տանջանք, գոնէ բոլորս էլ հողի տակ
 պիտի մտնենք... Գէթ մի տեղ կայ, ուր բոլորս
 էլ հաւասար ենք... Այնտեղ էլ խօսմ աղքատ, հա-
 բուստ, հոօր ու թոյլ լինելու չէ... Լուռ խորհում
 էր Ռէս-Սրբէն ցուրտ մութի մէջ: Կծու ծուխը
 քուլա-քուլա դուրս տալով, օջախի մէջ փրփրում
 էր թաց աթարի մի կտոր: Ծուխը լաւ էր, ախր
 կրակի սոսկ գոյութեան գէթ վկայ էր... Եւ Ռէ-
 սի քսաներկու ջան ընտանիքը այդ լոկ յուսով
 տաքացած, հազար պատառ փախախ տակ մի
 տեղ ժողովված պատրաստվում էր սև գիշերուան
 հանգստեան...

— Թրախկ... Թըրուխկ... դուռը զարկին:

— Ո՞վ ա, բալէ, էս վախտին...

Երկու հոգի մեծ մուշտակով փաթաթված,
 ձիւնակոլով ներս մտան: Մէկը գլաւա (գիւղա-
 կան տանուտէր) Փաշան էր, մէկն էլ հարուստ
 Միքէլ աղան...:

— Բարի իրիկուն, Ռէս-Սրբէ, էս վախտիս
 էլ մարդ պառկի:

— Աստու բարին, հազար բարին, Գլաւնի ա-
 դա, Միքէլ քեօխուայ... Հա՛, ուշացել ենք... ան-
 տէր մարդը շատունց պիտի հողի տակին պառ-
 կած եղնի...

Չափ-զարմացած անակնկալ հիւրերին, պա-
 տասխանեց Ռէս-Սրբէն ու խեղճ քնած մանկիկ-
 ների վրայից քաշեց չուլը, որ հիւրերին տայ
 նստեն...

— Պէտք չէ, Ռէս, պէտք չէ, լաւ է... Թոյլ
 չը տուին հիւրերը ու պաղ քարին իրար կողքի
 պըպըգեցին:

Գլաւան հանեց կուան տակից մի «գէստ
 լօշ» հաց, կարագ, մածոն ու մի կտոր էլ ճիւ
 պանիր դրեց տղոց չուլ վերմակի քղանցքին:

— Ռէս, պատմուտէ, տղաքը կուտեն...

— Շնորհակալ եմ, Գլաւնի աղա, Աստուած
 օջաղդ շէն պախա...

Ռէսը ապշած, զարմացել էր Գլաւնի աղի ա-
 ռատաձեռն ողորմութեան, չէ՞ աղաներն առհա-
 սարակ ողորմութիւնն օր-ցերեկով են անում, ին-
 չո՞ւ, «Գլաւնին» ուշ գիշերուան այդ պահուն էր
 «առատ» ձեռքը բաց անում...:

Մի քիչ դէսից-դէնից ասին, լսեցին, իրար
 «քէֆ-հալ», առողջութիւն հարցրին, կարծես ճիշտ
 որ շատ պէտք բան էր մէկի «հալը» միւսին...
 ապա անցան բուն գործին: Հէ, այդ մարդիկը,

մեծ մարդիկը, գիւղի ջուխտակ «կոլլոնները» ախր
ինչի՞ են եկել...

Ռէս-Սրբէի Ծաղիկ հարսը Գլաւայի այրի
տղին կուղէին: Պատառը լաւ, շատ լաւն էր...: Համ
գեղեցիկ, համ էժան...: Հարուստը որ այդ
«հաշիւը» չը գիտնայ, փողի տէր էրբ կը դառ-
նայ...: Ուրիշ բան էր թէ մսացու մալ անէին,
կամ լծու եզ, կամ կթի կով, ձի ու ոչխար...
«էդ ապրանքը վրա կը դնէ (կաւելացնէ), քեար
կը բերէ... Կնիկն ինչ է, ձեռաց հէճաթ (գործիք)
տանդ գործը եօլա տարաւ, հերիք է»...: Բայց
Ռէսի հարան ուրիշ էր... համ գեղեցիկ, համ է-
ժան...: դրա համար, «մուշտարիներն» այդքան
սրտանց, տաք-տաք կպան...:

Քանի, քանի մարդ դրկեցին, երբ չեղաւ,
այժմ Գլաւան ինքը անձամբ էր եկել:

— Գլաւնի, քիւ խօր պատանք սիրես, թնդ
գիս, ես խարս չունեմ կարգելու... էնտոր «կա-
րագ» գերեզմանն ա... սե գերեզման...:

Այդ միջոցին չուլ չարսաւի արանքից մա-
նուկները գաղտագողի տեսան հացը, կարագ, պա-
նիր...: տկլոր ու մերկ վժվժալով դուրս թա-
փան... Ռէս-Սրբէն խոժոռովեց. մէկ մի տղին, մէկ
միւսին գայրացաւ...: բայց ինչ հոգն է անմեղ
մանկան, թէ այդ հացի մի պատառը ինչ գին
ունէր, կամ ինչ մտքով էր բերած... էլ կը զըս-
պրվի՞ մանկան քաղցը, ճիչն ու լացը, երբ

տեսել է իր առաջին հաց ու պանիր, կարագ,
մածուն...

Գիշեր անցաւ...: Ճրագի գուլն էլ, ձէլն էլ
խառակ պարպել էր: Ռէս-Սրբէի հիւրերն ուրախ
«վացձուն» (60) մանէթ համրեցին, խօսակցելով
մութի միջից դուրս ելան...:

Քաղցը, սովը, ստիպեցին խեղճ ծերուկին
իր հարագատ հարսին ծախել...: Ռէսը լուռ էր,
ձէն-ձուգ չը կար... Սե մութի մէջ այդ գի-
շերուան սե անցքից, խեղճ ծերուկը քարա-
ցել էր, քար դարձել...: Լոկ չարսաւի, չուլ
չարսաւի արանքից մի կանացի մեզմ մղկտոց էր
գալիս...:

Երեկոյ էր, ձմրան պարզկայ մի երեկոյ: Նոր
լուսինը, ծեր լուսինը լերան լանջից ճանկաթե-
լով, վեր էր գալիս ու ստաղերին՝ նաժիշտներին
իր վաղորդեան «բարիիրիկուն»-ը տալիս, երբ Ռէ-
սի տունը մտան դաւուլ-գուռնով, դալմաղալով
գիւղի հարուստ Գլաւայի մաղրուորը:

Որբեայրու հարսանիքին գիւղի կարգով դա-
ւուլ-գուռնա չէ լինում... Բայց չէ որ կարգ, սո-
վորութիւն ու օրէնք միշտ աղքատի, չունկորի
համար են լոկ սահմանված...: Հարուստի ինչ հոգն
է կարգը, հին պապերի սուրբ աւանդը...: Գլա-
ւայի շատ պէտքն էր, թէ խեղճ Ռէսի արիւնուայ

սգւոր սրտում աւելի մեծ «դաւուլ-գունամ» է
խփում...:

Գեառի նման արաղ հոսեց: Մի անկիւնում
հարայ-հրոց, զայմաղալով խմում են, միւսում
դրկից մի քանի կին թալուկ հարսին, խեղճ Ծա-
ղիկին հազցնում, տան կանայքն էլ, մանր ու խո-
շոր շուրջը պատած հոնգուր-հոնգուր հեկեկալով,
աղիտղորմ ողբ ասում...:

Լուռ էր Սրբէն: Բոլոր ուժով, շրթունքները
կրծոտելով, նա զսպում էր փղձկող սրտի յառա-
ջանքը ու մեծ ճիգով խեղդում, ծածկում սրտի
դոներ՝ ջուխտ աչքերի դառն արցունք:

Արաղի մեծ բաժակն առած դարձաւ նրան՝
Գլաւան՝

— Ռէս, սաղ ըլլիս, աչքերդ լոյս... Ինչ ես
թթվել (տխրել) քէֆ էրէ...

— Էլ խերիք ա, Գլաւանի աղա, էս սաղու-
թեն խարամ եղնի... Իմ աչք շատունց խա-
ւարել ա, իմ տուն շիւան, սգւոր ա... էլ խէ-
րիք ա..., դացէք, դացէք, ձեր տուն խմէք, քէֆ
արէք...

Հարսը տարան...: Երկու կանայք գու-
նաս Ծաղկի ջուխտ թևերի տակն անցած կլ-
սակենդան նորահարսին բերին առաջ քար-
քաշան, որ Ռէսին՝ հին կեսրայրին ձեռքն համ-
բուրէ, օրհնէնքն առնէ, վերջին մնաս բարևն
ասէ...

Սիրտը փղձկաց Ռէս-Սրբէի, հոնգուր-հոն-

գուր հեկեկաց...: Նա իր կեանքում ոչ մի գիշեր
այդքան անխիղճ չէր տանջվել..., հարսի յետքից
վերջին օրհնէնքը մրմնջաց՝

— «Սեւ մուք խարսնիք» էղնի, բալէս... էդոր
խամար քե խեա բերի վաթանէն...

1902 թ. մարտ
Սաթխա

«ԴԱՏԱՍՏԱՆ ԿԱՅ...»:

—Սատժու սիրուն, իւզբաշի¹⁾, սունս աւ-
րել են, դուռս սե քարով են շարել..., ախր աշ-
խարհքն օրէնք կայ..., ալան-թալան խօ չէ...:

Արցունքն աչքերին գիւղի «սխօտի» (ժողով)
մէջ գանգատվում էր այրի Աննան, որի վեց հատ
անտէր-անտիրական որբերին կերակրող միակ
արտը կարապետ աղի հօտը կերել, արմատահան
էր արել:

✓
34
2

Չարմանալի բան է, կարծես ընդհանուր
օրէնք է, սրտեղ ինչ չը կայ, այնտեղ այդ մա-
սին ամենից շատ երագներ են տեսնում...

«Ախր աշխարհքն օրէնք կայ»... Յիմար կլն,
սրտեղ ես դու «օրէնք» տեսել խեղճի համար, երբ
է աղքատն «արդարութիւն» գտել այս փուչ աշ-
խարհքում, այն էլ գիւղում...:

Եօթն օրուան մեռած էր Աննայի ամուսինը,

1) Ծանօթ. «Իւզբաշի»՝ գիւղական տանտէրի
օգնական:

Ակօր հետ փախաւ, գնաց, կատղեցրեց գիւղի բոլոր հարուստներին: Ինչ էլ լինէր, եղածն եղել, անցել էր. երկու շաբաթ աղջիկ տղայ՝ Ակօն-Աննան գիշեր ու զօր մէն-մէնակ սար-ձոր չափել, ձևել էին...: Էլ ճարն ի՛նչ էր...: պսակեցին:

Բայց ի՛նչ օգուտ, չէ՞ որ Աննան դարձեալ սիրուն գեղեցիկ էր, իսկ դրացու ունեցածից ի՛նչ որ սիրուն, գեղեցիկ է, հէնց բոլորի աչքը գիւղում կարծես նրա վրա է: Եւ ով ուժեղ, հարուստ, գորեղ, «գօռբա» է միշտ կաշխատի դրացուց խել գեղեցիկը, կի՛ն է եղել, կով, թէ մի ձի միկնոյն է...:

Սիր կի՛նն էլ գիւղում «մալ» է՝ տպրանք է... Ահա այսպէս Աննան սիրուն, գեղեցիկ էր, իսկ Մարգարն էլ իւզբաշի, ձեռքը «օրէնք», իրաւունք կար, ի՛նչի չօգտվէր հանգամանքից, մանաւանդ որ Աննան այրի, տէր-տիրական էլ շունէր: Եւ Մարգարը ուզածին պէս օգտվում էր հանգամանքից...:

Գարուն էր, ապրիլի վերջերը: Փ... ղիւղը նեղ օրի էր: Յանքը դեռ չէին վերջացրել. մէկի սերմն էր պակաս, փող չունէր՝ առնէր, միւսը սերմը բնադոն էր արել (ուտելիք), այժմ՝ վիզը ծոած, դոնէ դուռ ընկած, հարուստները՝ սրանրա շէմէր մաշում, խնդրում, աղաչում, որ մի քանի մանէթ մուրհակով՝ շահով տան, սերմ

առնի, հաց առնի... երբորդը փող գտել է մի կերպով, հաց չէ ճարվում, որ գնէ, ճարվածն էլ թանգ—կրակ է, չորբորդի եզը դաբաղ է եղել լուծը գետինն է թողել, հինգերորդի արտ-չայիբը խել-տոել են, ո՛չ սերմ ունի, ո՛չ ցանքսի տեղ... և այլն և այլն և այլն:

Սերմի, հացի պակասութիւն... մալ, ոչխարի հիւանդութիւն... չէ, գիտէք թէ ի՛նչ կրակ—պատիժ է գիւղացի խեղճ մարդու համար... Ո՛չ մի բանի «չը կան» այնքան զգալի չէ գիւղերում, որքան հացի, հողի, մալի, խոտի «չը կան»՝ կարիքը...:

Նախորդ տարին հացը մրսել էր Փ...ում: Դէ, ով ունէր, ժամանակին՝ հէնց ձմրանօք գնաց առաւ գարնան սերմի, բնադոնի պաշարը: Բայց վա՛յն եկաւ շունկորի, խեղճ աղքատի սև հալին... ի՛նչով առնէր. անտէր տանն էլ ծախելու բան չէր մնացել: Մի ջուխտ եզը, մէջքից ծոած մի պառաւ կին, մէկ էլ ինքն ու արօրը...: Թէ գին տային հինգ-վեց մանրունք աղջիկներին, խեղճը այն էլ կը ծախէր, բայց այդ անտէր «ապրանքն» էլ չը կարմրած չէ ծախվում...: Միակ ճարը «ես ի ներքոյ...»-ն էր մնացել: Է՛հ, ի՛նչ անես, աղքատ-մաղքատ, խօս մնօթի մեռնելու չես: Յորեն-գարու բարաթի էլ կարգը գիտէք, «չարեքով» է մեր գիւղերում, չորս կօտ ¹⁾ մրսած, փտած

¹⁾ կօտը—մի փութէ մօտաւորապէս:

գարուն վեց ամսուան մի կօտ տոկոս պիտի տաս, մնացածն էլ «պիսիր» (զրագիր) աղան ու իր խեղճը...

Բայց մի դարդ կար, այդ դարդին հէջ ճար չը կար... Իւզբաշին ու խաղնաշին (զանձապահ) եկել մախթին (հարկ) կուղէին...

— Տիրացու Մարգար, ախր էն օրն ես տուի, դուն էլ ըսիր թէ վեց շահի (30 կ.) մնաց պահաս...

— Վեց-մեց չը գիտեմ, տուել ես բեր «կուխտանցիագ» (ստացական), քեզի կըսեմ երկու մանէթ է պակաս, մէ մանէթմ ալ «սաբալղէգ» (արենդ)... Ձե՞ս տայ՝ էգուան չափառ (СТРАЖНИКЪ) կուզայ, խաղէն կուտաս...

— Իւզբաշի ջան, Աստուած ունիս, խիղճ ունիս, չէ՞ դու ըսիր «կուխտանցիա» տպած չը կայ, պրիստաւէն պիտի գայ, որ գայ՝ կը տամ...

— Ձէնդ կարէ, շուն-շանորդի, ես քու փաբող «ատկիւմ» կէնեմ... բերնին աշէ... ես ի՞նչ ջերս դնելու չեմ, ախր խաղնան պիտի տամ...

«էգուանն» (էգուց) անցաւ. չափառն եկաւ, վնջ Փ... գիւղի էն աղքատի սև հալին, ով իւզբաշու խաթրին, քէֆին կամ թէ զէհին էր դիպել... Հորթ ու մողի, աման-չաման, էլ տանն ինչ որ ճանկ ձգեց՝ «տորգի» հանեց, ծախեց-ծխեց ու մի անգամ առած հարկը, որ Աստուած էլ, մարդն էլ գիտէր, թէ որ սև-մութ մկիտանի «խաղնան» մտաւ, երկրորդ անգամ հաւաքեց...

Բայց թէ առա՛ մէկը եղաւ ձայն հանող... Ո՞ւր ձայն հանեն, ո՞վ ձայն հանէ... Ախր գիւղի «խածանները»՝ աղաները իրանց բաժինն առաջուց մկիտանում վայելել են. անուշ արել...: «Շունը շընից, ախր երկուսն էլ մէկ տնից», էլ մըր ձէն-ձուգ կը հանեն... իսկ աղքատը, խեղճ թշուառը երբ սիրտ կանէ ձայն հանել, թէ հանէ էլ ո՞վ է նրա ձայնին լսող, իմացող, չէ՞ որ պիսիր հարկը տեղից կը «բամբեն», ձայնն հէնց բերնի մէջ կը խեղդեն...:

Խեղճ Աննան էլ հարկը պակաս տուողները դասից էր: Մի երեկոյ յոգնած-բեզբած արտից դեռ նոր էր տուն դարձել, երբ իւզբաշին ու խաղնաշին, հեաներն երկու չափառ առած, խեղճի դուռը կտրեցին: Բայց Մարգարն էլ ախր մարդ էր, խօսմ այդ այրի կնկան հետ էլ ուրիշի պէս վարվելու չէր... Դռնից ձայնեց, մի կողմ կանչեց, երկարբարակ խրատեց, որ թարսութիւն էլ չանէ, մի խօսք մենակ թո՛ղ իրեն տայ, մի անգամ «հա» (այո) բերնով պսէ, ինքն իր ջերից հանէ կուտայ հարկն ու խարճը և Աննայի «փէշքէաշն» էլ աշքին վրա, գլխուն վրա... պատրաստ է...

— Դու էդ խելքիդ «քշօ»՝ ըսէ, իւզբաշի... ես շան ծիծ չեմ ծծել մօրէս... իմ նամուսըս գլխէս վեր է, թո՛ղ անուսըս եխելուն, հողիս բերնէս եխէ, պըծնի... էդ քու փողդ էլ գլուխդ ուտէ, ձեռքէդ եկածն էրէ, ապրիս, ջնսիդ կըյնի (ցեղիդ վայել է), դատճդ տար արաղի տուր, զըխ-

տրվէ (խմիր) ... էդ անօթի փորդ պիտի կըշտանայ...

Սօսքը կիսատ՝ ապտակն եկաւ երեսին...

— Քալէք, ծօ ներս, էս դանջղին ունեցածը տարէք, ծախէք, մէկ էլ ընի խօսքը ճանչէ...

Քունջ ու բուջախ, տուն-դուռ իրար խառնեցին... երկու փոքրիկ փարխած գտան (պղնձէ աման) բանի պէտք: Աննան լուռ էր, աչքերն ուռած, սրտի ցաւից, բարկութիւնից շրթունքներն էր կրծոտում .. Բայց ի՞նչ անէր, ինքը թոյլ ու անզօր մի կին անպաշտպան, իսկ թշնամին ուժով, գօռով, լիրբ, անսամօթ անզգամ...:

— Ծօ, զզիր ես ինչ շան որդի, իսի ջուախն էլ առ տար, գարին կուտանք չափոններուն ձիւրուն, ախր էսոնց (սրանց) հարկին համար են եկել, ես խօսմբէս ապու չեմ...

Գզիրն առաւ, շալկեց տարաւ երկու կօնոց ջուալը, Աննան լալով ամուր բռնեց յետեից...:

— Ծօ, անաստուած, դու անհոգի, հարկիր երեք դաթը առար (եռապատիկ), էլ էդ գարին հըր կը տանես... տունս բուռն ալիւր չը կայ... արախ սերմէն յետ եմ առել, էս սղաքս չօն ուտեն...

Քաշեց, ձգեց ջուալը վայր: էլ ինչ եղաւ, չը գիտեմ...:

Միւս օրը արտը կիսատ, Աննան հիւանդ, քիթ ու բերան արիւնլուիկ պառկած էր. Սաթի

2

պէս սե, ջուխտ աչքերից արտասուքը աղբիւրի պէս հոսում էր ու կապուտկած շրթունքներով աղի-լեղի, արիւնլուիկ սրտի խորքից ինքն իրա հետ խօսում էր՝

— Դէ օրէնքի, խղճի տեսէք... համ մալս (ապրանք) տամ, ունեցածս քաշենք-քշեն, գօռով տանեն, շան պէս ուտեն. զխալին, համ ինձի էս օրը դցեն, ծեծեն, ջարդեն, արիւնլուիկ դարձնեն... փարս (փող) չունեմ, խեղճ աղքատ եմ, էս նամո՞ւս էլ իմս չէ... Հէյ. Աստուած ջան, ախր վերը «դասասան կայ»... օրէնք կայ... էդ անհոգի շուն իւզբաշու լակոսները իմ սոցոց օրին պիտի չը թողնես... թէ չէ կամար էդ կապուտը էլ ինչի՞ է... վերն էլ Աստուած հէչ չը կայ... էս աշխարհքը գողի, բողի, հարամգատի աշխարհք է... էս աշխարհքին Աստուածն էլ գողին, բողին կը պաշտպանէ... զրոյը տանի, թող վար անցնի, փշանայ... Վերի Աստուած, ես Քու դատիդ-դատաստանիդ կը թողնեմ... թէ՛ դուն էլ ես անգութ, անխիղճ, չար Աստուած...:

24

Այն օրը շատ վատ օր էր. յորդ անձրևը մայիսուայ պէս առնուտից մաղում էր ու զիլ բամին, մերթ ոռնալով, մերթ սուլելով, իր կատաղի ուժով, թափով մանր անձրևի տարափից բուք ու բորան բարձրացնում: Երկինքը ամպ, մթնել, սևցել, պառաւ կնկան կնճոտ երես էր դարձել:

Դուրսը ցեխ էր, ցեխ ու ճրխանք, մարդ չէր ուզում դրսի երեսը տեսնել: Արաւորն էլ արտ չը գնաց այդ օրը: Յուրա էր, շատ ցուրտ, աշնան պէս ցուրտ, մարդ-մալ խտակ կը սառէին:

— Դիմ-դիմ, դիմ-դիմ... տխուր հնչում է Փ... գլուղի եկեղեցու զանգակը:

Դէսից դէնից մարդիկ շապա եկեղեցու ցած-լիկ դռնից ներս են մտնում հաւարով ու խաչ հանում երեսները շապով: Մեռել կար, հէ, «Իւղոտ» մեռել... Հոգու հացին մի միծ եզն էր մորթված...

«Իւղոտ» մեռելն այն իւղբաշի Մարգարն էր:

«Խղճի մտօք» ժողված հարկը բաղաք տարաւ եկաւ թէ չէ, աջ աչքի մօտ «բէտնա» (ուռոյցք) ելաւ ուռեցաւ: Բէտնան մեծցաւ, կապուտկեցաւ... էլ Թանխաշներ, ծեծած քիչմիշ ճիճու խառնած, սատկած գորտ ու շան լակոտ... Ինչ կապեցին, դեղ արին, հէչ ճար չեղաւ... Երկ-օրուան մէջ այն ահագին հուժկու մարդը հալաւ, մաշաւ, պարպեցաւ...:

Փայտէ ջախսով ¹⁾, շալ կապերտով փաթաթած՝ եկեղեցուց դուրս բերին Մարգարին: Խուռն ամբօխը լուռ ու անձայն, իրար ձեռքից քաշքշելով, հրհրելով, շտապում են վերջին պարտքը

¹⁾ Ծան. Ջախս—փայտի հասարակ ընդհանուր դագաղ է, որի մէջ դնում մեռելը տանում են գերեզմանատուն և ապա ջախսը նորից յետ բերում: Ամբողջ գիւղը մի ջախս ունի:

տալ իւղբաշու աճիւնին՝ հողին յանձնել, շուտ թաղել, որ հերթը գար «Իւղոտ» ճաշին, հոգու հացին (քելէխ):

Երկու կանայք ջահէլ հարսի ջուխա թուերի տալն անցած, տուռ են տանում գժբաղդ հարսին, թալուկ հարսին քար-քաշան: Դա Մարգարի սևուր-սգուր այրի կինն էր, որ միակն էր թափո-րի մէջ սրտանց լացող, ողբացող...

— Փառք տուածիդ, Տէր, հազար փնօք...

Մի ինչ կըլնէր ամեն անգամ էսման (այսպէս) թէզով հախ-դատաստան (արդար դատաստան) էնէիր..., կանանց միջից կմկմալով մոմուաց մի պառաւ կին, — մեղայ Գեղ, Տէր, հող ու մոխիր բերանս, հըմը (բայց) գիտէք, տղաք ջան, էն անէճքը տարաւ էս փուշ Իւղբաշուն... Խեղճ Աննային անէճքը... Ախր վերը «դասասան կայ»..., էդման (այդպէս) դատիդ-դատաստանիդ մեռնիմ, Տէր...:

1902 թ. յուլիս

Սաթխա

02 Ի Խ Է Թ Ա Ն...¹¹¹

Մարդը՝ գաղաններից ամենաստակալին է...

Այն գիշերը գէշ գիշեր էր, շատ գէշ գիշեր...
Յերեկուայ բաց-պարզ երկինքը սև-սևցել էր,
սևաւորվել: Ամեն օրուայ աստղ ու լուսին՝ վերևի
վառ կերոններն այդ օրն իստակ մթնել, մարել,
կորել էին... Սևցած, մթնած, մռայլ ամպն էլ
կարծես կրքից, չար մարդերի գէշ գործերից կա-
տաղած, գոռում-գոչում, կայծ ու կրակ էր թա-
փում...

— Ու ու... ու... գոռում է Ջաւախքի գիք
ձիւնագագաթ Մբուլը քուլա-քուլա գլխին կիտ-
ված ամպերից ու չարանենգ պատգամի պէս,
«չար» լուրը տանում հեռոն, ցրվում հեռոն
սարէսար...

— Գրու... կարկուտ է... կանչում է զիլ
քարոս-քոչոս Գօրօղլին սևոր-սգւոր մութ ամ-
պերի արանքից ու կայծակի նետը խլած երկըն-
քից, ուժով նետում գէմ յանդիման իր թշնամի

Աբուլին, կարծես կռուի, անեղ մարտի կանչ է տալիս հսկային...

Եւ սարերի դե-քաջքերը, երկնքի սե-չարքերը արիւն-կրակ զէնք զրահով իրար եկան՝ կռուի մտան, զարկին, զարկվան, բոլոր ուժով, դևի թափով, մէկ Փարուանա լիճը մտան, մէկ Իլլի-գաղ սարը ելան, Դուման-դեօլում իրար առան, յաղթվողներն անով-դողով ժամին սարին Սուրբ Յովհաննու վանքը մտան, ինչ խօսեցին, ինչ ասացին, խօսք մէկ արին՝ հաշովեցին ու ինչ որ քէն, ոխ ունէին՝ «կաւ ու կճուճ» խեղճ գիւղացու գլխին զարկին, ջարդեցին...: Տարափն եկաւ, կարկուտ տեղաց Գ... գիւղի դաշտերում, հեղեղ ելաւ արա ու արօտ տակոյն արաւ սար-ձորում... Ո՞ր քաջասիրտ աղամորդին, քարէ հողին էլ սիրտ կանէր այն գիշերին, սև գիշերին գուրսը կենալ... Հովիւ, հոտաղ, մալ ու մաճկալ գիւղ թափան:

— Դիմ-դիմ, դիմ-դիմ... բօմ-բօմ, բօմ-բօմ... հաւանք, հաւանք, խեղճ ու մոլոր մղկատում է գիւղական խեղճ եկեղեցու լացի սովոր զանգակը... Եւ ողջ գիւղի աղերս-բերան զանգի տխուր, աղեկաւոր հեծկլտանքը, կարծես խղճի, զըթի բերեց սև երկնքի քաջք-չարերին, ժեռ սարերի չար-քաջքերին... Կարկուտն եկաւ տամար առաւձերտով անցաւ Գ... գիւղի վրայից, լոկ քչերին բաժին հանեց իր սոսկալի արիւն-բերան պատ-գամից...: Մանր անձրեր մայիսուայ պէս վրա ա-

ռաւ: Դուրսը ցեխ էր, ցեխ ու ճխանք, հէջ «ինս ու ջինս» սարում, դաշտում չը մնաց: Ներսը լաւ էր, չոր ու տաք, եփ ապուրն էլ՝ թան-ապուրը, դադրած-բեզրած, խեղճ գիւղացու թէյն ու ընթրիք, խօս կար ու կար...

Գիւղի հարուստ, գիւղի աղա Գէոնեց տան գերնդւորն էլ տուն դարձաւ: Թամամ հինգ հատ ջահէլ-Ղլւան, կարիճ քաղւոր անից կար, հասլա ըրդամ (բանւոր), հարս ու աղջիկ փոցխւճր... Մեծ օջախ էր, շատ մեծ օջախ Գէորգ ամու օջախը: Հինգ մանչերից մէկն ոչխարին, մէկը մալին էր նայում, մէկը հիւան էր, միւսը քարտաշ, հինգերորդն էլ՝ Գէորգ ամու կրասեր տղան՝ Նազար տացուն, իբրև «գիտուն», կարգացող, խանթուր էր գիւղի մէջ:

Մեր գիւղերում փոքրի խօսքը, «անց» չէ լինում առհասարակ, ո՞վ է նրան «մարդահեռաբ» հաշվողը: Բայց Նազարի խօսքն ուրիշ էր... Նրա խօսքին ո՞վ կարող էր դէմ դնել: Էլ քաղաքում երկու տարի ինչի՞ համար էր կարդացել, թուղթ ու գրի սև ու ձերմակը ջոկել, որ այժմ այստեղ իր «զըզում» հօր, «էջ գիւղացի» եղբայրների խօսքով շարժվէր, նստէր, կանգնէր... Չէ, այդպէս չէ... այդպէս չէ մեր գիւղի կեանքն ու օրէնքը... Ո՞վ «զօքբա» է, լիրբ, անզգամ, անպատկառ, տան մէջ նրա խօսքն էլ «անց» է անպատճառ...

Եւ Գէոնեց Նազար տացուն իր անձնական

փորձով գիտէր այդ վաղուց: Դեռ մանուկ էր, լղպոր տղայ, երբ իր լացով, բոռբոռոցով, շատ անգամ էլ ճանկութոցով, ստիպում էր տան մէջ բոլոր մեծ ու փոքրին իր քէֆն անել, սրտի ուզածը կատարել... Եւ հայրն ուրախ կրտսեր տղի ճարպիկութեամբ, ժրութեամբ, սիրտ էր տալիս, խրախուսում նրա ամեն մի արարքը, մի առանձին օրինական ձև տալով, իր քաջ տղի, զօջաղ տղի լրբութեան...

Երբ մեծացաւ, տասնհինգ տարին լրացաւ, հայրը նրան քաղաք տարաւ կարդալու: Գիւղում կարդալն այդ ժամանակ «մօզա» էր: Մեծ տէրտէրի երկու տղան «ղեմնագն» էին սովորում, Գէորգ աղան տէրտէրից խօսմ պակաս մարդ չէր... Նա էլ տարաւ տղան քաղաք դպրոց տալու, բայց ուր տուեց, Աստուած դպրոց համարէ: Գիւղական տան գէշ կրթութեան պակասը լրացրեց, զարգացրեց վատ դպրոցը և դեռ երկու տարին չանցած վիժվածքի պէս դուրս նետեց:

Գէորգ աղի «ուսում» առած Նազար տղան տուն դարձաւ: Երկու տարուան ինչ պիտ տանիր դպրոցից, այն էլ իրան միայն արժան փշացած, լիբբ ընկերներից... Լոկ անուանը մի բառ կցեց, գիւղի աչքում «տացու» (կարդացող) դարձաւ, տուն եկաւ: Էլ ինչ անէր. գիւղացու պէս աշխատելու, ճակտից ծոր-ծոր հալալ քրտինք թափելու հէջ սիրտ չունէր, ուրիշ բանով, մի այլ գործով պարապելու շնորհք չը կար..., մտաւ իր

հօր՝ Գէորգ ամու բզէզը, ինչպէս արեց, ինչպէս չարեց այդ ժեռ մարդուն, քարսիրտ մարդուն կամքը արեց խելքը գողցաւ, հազար մանէթ դուրս առաւ. գիւղում սիրուն խանութ բացեց, ինքն էլ մէկից «աղա» դառաւ:

Գիւղի մարդն էլ, ուրջան տգէտ, անուս լինի ամենն ունի իր կոչումը՝ մէկը՝ հովիւ, նախը չոբան, մէկն երկրագործ, ատախձագործ, մինը դատուոր, մինը քաղուոր, մինն էլ լափող «աղա»՝ փողուոր՝ ուրիշների արին-քրտինքը կեղեքող, — ամենն ունի իր արհեստը, պարապմունքը, որ երկինքը կարծես վերից դրոշմել է ճակատին և գիւղացիք այդ կոչում են «ճակատագիր» ամենքին...

Եւ Գէորգն Նազար տացուն շատ լաւ գրտաւ կեանքում իրա կոչումը: Խանթի գլխին զիք տնկված սխալ-մխալ երկտողանի ցուցանակը, կարծես հէնց իր՝ խանթուորի սև-մութ հոգու ցուցանակն էր՝

«Духан набидков
Назар Геворковъ»...

Եւ խկապէս նրա հոգին «գուխան» էր: Նազար տացուն, աղա-տացուն, մի անգամից երկու խանութ էր պահում՝ մէկը «գուխան» տեսակ-տեսակ խմիչքներով չորս պատի մէջ, միւսը սիրտը հազար ու մի շար խորհուրդով կրծքի մէջ... Եւ ոչ մինը իր յատկութեամբ չէր տարբերվում միւսից...

Գործը լաւ էր գնում խանութի: Աշտարակի արաղը բօլ, գինին էժան, մէկին երկուս էր վաստակում, թէ մի բան էլ խառնեցիր, կամ թէ մի բան գնից աւել հաշուեցիր, դէ մի բան էլ դաւթարիդ մէջ աւել-մաւել գրեցիր... Էլ ի՞նչ դժուար բան է վաստակ անելը... Եւ այդ բոլոր միջոցները շատ լաւ գիտէր Նազար տացուն: Գործը լաւ էր գնում խանութի, միայն տանը մեծ եղբայրը՝ տիրացու Կարօն շատ նեղ տեղն էր լծել խեղճին: Տասն օր էր ինչ հաշիւ, «դաւթար» էր պահանջում, թէ «այդքան փող որ առնում ես դրսից, տնից, ի՞նչ ես անում...», բեր հաշիւ տուր, ախր մենք էլ եղբայր ենք»...: Դեռ այս ոչինչ, տան բարաթներն իր ձեռքն առած, ո՛չ մի կողմէկ չէր թողնում, որ տանը փողից խանութին տան: Այն ինչ Նազարն աշխատում էր բարաթ-մարաթ կամաց-կամաց ձեռք գցել ու երբ հայրը՝ Գէորդ ամին բարեհաճիր դաղբած-յոգնած ձեր գլուխը վայր դնել, գերեզմանից դառնան թէ չէ, եղբայրներից բաժանվել և խանութը, ուր նախօրօք արդէն կիտված, պատրաստ կը լինէր իրանց ամբողջ կարողութիւնն, իսկոյն տիրել, յետոյ արդէն ինքնագլուխ «աղա» դարձած, հանգիստ նրստել, վայելել...: Այդպէս արել և անում են ախր գիւղի բոլոր հարուստ «աղա»-ները...: Երբ տան «մեծ» են լինում նոքա, աշխատանքի բոլոր արդիւնքն իրանց ձեռին, առանց հաշիւ-համարի, կամաց-կամաց սեփականում, «տակով» անում,

ու երբ մի օր հերթն համնում է բաժանվելու, իրանց աղքատ, շատ անգամ էլ պարտատէր են հրատարակում և առանձին վեհանձնութեամբ չեղած պարաքը իրանց վրայ են առնում, որ չարախօս, բամբասասէր գիւղը չասէ թէ զրկեց, եղբայրների արիւն-քրտինք հալալ վաստակն յափշտակեց... Սակայն տարին չանցկացած, նախկին աղքատ, պարտաբէրը արդէն «աղա» է դառնում...

Գիւղի այդ հին խաղն էր ուզում խաղալ նաև Նազար տացուն, բայց Կարօն էլ յիմար չէր... Նա շատ վաղուց արդէն «հօտը առել» էր ու ամեն կերպ աշխատում էր առաջն առնել: Նազար տացուն նեղ տեղն էր: Պէտք էր միջոց, հնար գտնել, այդ «արգելքը» վերացնել, էլ քաղաքում երեք տարի ինչի՞ համար էր կարգացել, «թուղթ ու գրի սև ու ձերմակը ջոկել», որ այդ «չնչին յիմար» բանն էլ, «բէճար» չանէր, գլուխ չը հանէր...

Այն գիշերը գէշ գիշեր էր..., շատ գէշ գիշեր... Երկինքը ամպ, խաւար ու մութ, սգուորի պէս սև ու մութ էր..., վարից-վերից ջրերն ելել, դարձել էին հեղեղուտ... Տարափն եկաւ կարկուտ տեղաց Գ... գիւղի դաշտերում, հեղեղն ելաւ արտ ու արօտ տակովն արաւ սար-ձորում... Մալ ու մաճկալ, հովիւ, հոտաղ գիւղ դարձան: Գիւղի հարուստ, գիւղի աղա Գէոնց տան

գերնդուորն էլ տուն եկաւ: Ոտքից—գլուխ թըր-
ջել, խխմել, թաց «պուրպատիկ» էին դարձել:
Բայց շուրն ինչ է, անձրևն ինչ է խենթ ու խե-
լառ «Չահէլին»... Խաղ ու տաղեր, ուրախ կան-
չեր, հանաք-չանաք, խինդ ու ծիծաղ խառնել են
իրար հարս ու աղջիկ՝ փոցխուոր, Չահէլ-Չիւան
գերնդուոր, չեն էլ ուզում տուն դառնալ: Տունն
ի՞նչ կայ որ, նեղ ու անձուկ չորս պատի մէջ,
մրից սեցած «առնոց» (առաստաղի) տակ...
Դուրսը լաւ է, սար-ձոր ազատ, լայն ու արձակ,
խաղիդ, կանչիդ, երգ ու պարիդ կուտան ուրախ
արձականք...

Եւ Գէոնեց գերնդուորի երգն ու ծիծաղն
արար-աշխարհք էր բռնել: Կարօ տացուն մե-
նակ լուռ էր, լուռ ու տխուր, երկնքի պէս ամ-
պամած... ճվ գիտէր ի՞նչ սև-մուկ մտքեր սև
օձի պէս կռծում էին խեղճ մարդու սիրտն ար-
նոտած...

— Գնացէք, տղաք, տուն գնացէք, հաց կե-
րէք, ինձ չը սպասէք, ես գործ ունիմ, կու-
շանամ:

Ու կարօն լուռ խանութ մտաւ:

Ներսը նստած Նազար տացուն էլ տխուր
էր: Մի հարս կանգնած «դախլի» առաջ ինչ որ
բազար էր անում.

— Նազար տացու, մեղք է ախր, խիղճ
ունիս, կէս փութ պանրի երկու արշին չի՞թ
կուտաս...

— Էդ էլ շատ է... չէ՞ս ուզել, տո՛ւր...
պանիրդ խօ չեմ կերել, ահա, առ տա՛ր, կեր-
սարոջդ կանչեմ կըսեմ, որ պանիր ես գողցել
տնէն...

Եւ հարսը լուռ, ձէն-ձուգ կտրած, օձ կեր-
սարոջ լոկ անունից սարսափած, շտապ ելաւ
խանութի դռնից լարինդած... Խեղճն ի՞նչ անէր,
գիւղում ախր որքան հարուստ, շէն տուն լինի
որդոց շորը մայրն իր «հաշուից», իր բաժինքից
պիտի անի... իսկ ինքն այնքան մամր ու խոշոր
տղայ ունէր, աղքատի էլ աղջիկ էր... էլ սը-
տեղից, ծէրը-ծէրին հասցնէր... Կրակի տէր,
հարուստ ու շէն դժոխք տան մէջ հինգ հատ
տղան մերկ, չըր-չըփլաղ են մնացել, դէմն էլ տօն
էր՝ Աստուածածին... էլ ճարն ի՞նչ էր, իր բաղ-
դակից շատերի պէս նա էլ դիմեց գողութեան...
Բայց այդ անխիղճ Նազար տացուն շատ քիչ
տուեց դէյրացուն: էլ ինչ արած, եղածն եղել
էր, ճար չը կար, պէտք էր մէկ էլ պանիր կամ
իւղ գողանալ...

Հարսը գնաց:

— Էդ ի՞նչ արիր, ծօ Նազար, ամօթ չէ՞...

— Հնապա... ի՞նչ է, հէշտ բան գիտես ա-
ռուտուրը... Ամօթ է՞... էս խօմ խոտ ու ցո-
րեն-զարի քաղել չէ՞...

— Չէ, ախպէր, չէ, էդ առուտուրն ինձի
պէտք չէ, էլ հերիք է... կամ կը կողպես կը

✓ վերջացնես էդ դժոխքդ, կամ կը բաժնիմ, էլ չեմ կենալ բու հետդ...

— Ի՞նչ կը խօսիս, կարօ տացու, ախր խելքդ չի կտրել, առուտուրին կարգն էդ է... հազիր դուն էլ ուրախ չե՞ս, որ «քեար» կենեմ...

— Չէ, ախպէր, չէ... էդ բու «քեարդ ու վաստակը» ինձի պէտք չէ... էդ վաստակ չէ, արիւն-թարախ, կրակ է, ես չեմ ուզել...

Ու խեղճ կարօն, մասամբ կատղած եղբօր անխիղճ վարմունքից, մասամբ մրսած թաց-ջուր կարած շորերից, սկսեց դողալ, դողդողալ...

— Դաւթարներդ ան, էլ երթանք տուն, հաշուենք, պրծինք, ես կը բաժնիմ, չեմ կենալ...

— Է, դու գիտես, կարօ տացու, բաժնուելուդ բան չեմ ասել, բայց, թէ լսես, չես բաժնուիլ, լաւ բան չէ... Օձի պէս նենգ ժպիտն երեսին պատասխանեց Նազարը:

— Չէ, ախպէր, չէ, էլ չեմ կըրնա...

— Մեղքը ճիտդ, դու գիտես..., բաժնինք... բաժնինք... Եւ այդ անհոգ «դու գիտես» ով Նազարն արդէն վճիռ դրեց առաւօտից տար ու բերվող մտքերին... Որսը գտած գայլի նման աչքերը վառ կրակ դարձան:

— Վրադ ի՞նչ է, տացու, ջուր է... խելքդ ու միտքդ բաժնավելուն ես տուել... մրսել ես, արի մէկ-մէկ արադ խմենք..., դու գնա տուն ես էլ կողպեմ, դաւթար-մաւթար կառնեմ կուզամ...

Եւ արադով լի բաժակը դրեց դախլին, եղբօր առաջ: Կարօն, թէև զարմացել էր Նազարի այդ չը տեսնուած առատութեանն, բայց միամիտ թասը դնչին դրեց մէկից, մինչև տակը դարակեց...

— Մէկն էլ խմե՛ս, կարօ տացու...

— Չէ, չեմ խմել... էս ի՞նչ լեղի արադ էր...

Դէ, չուշանաս, ես կերթամ...

— Չեմ ուշանալ, դու գնա...

Եւ եղբօրը «ճամբու դրեց» Նազարը...

Առաւօտ շատ վաղ, երբ քնաթաթախ երկիրը դեռ նոր ազամայ մութի սեպ-սև վերմակը մի կողմը նետած, նազան հարսի պէս մշուշ ամպերի մխրագոյն բողը մերկ մարմինն պատած, իր մեծ կեսրարոջ՝ երկնքի զրկած յատակ ու վրձիտ բուրալի ցողով երեսն էր լուանում, Գ... գիւղն արդէն ոտքի էր վաղուց: Հարս-աղջիկ ելել, տուն-դուռ են մաքրում, տանտիկիներն հաւար թնդիրն է մխում, որ կանուխ պրծնի, ժամ-պատարագի գէթ վերջին հասնի: Տան տղամարդիկ դեռ նոր լուացված, չուխի կոշտ փեշով քիթ-երես սրբում ու աղօթարան արևին դարցած, խաչակրնբում են: Բայց դեռ վաղորդեան պարտք «բարի լոյս»-ը իրար չը տուած, ինչ որ չարագուժ լուր են շնչում լուռ ու տխրամած՝

— «Գիշերս յանկարծ Գէոնեց կարօն մեռել է, տղաք»...

Ու ափսոսանքի մի տխուր յառաջ թռչում է կամաց ամենի սրտից՝

— «Ո՛Ֆ... , ափսոս, տղայ»...

Եւ դանդաղ ու լուռ, տխուր ու տրտում Գէոնեց տունն են քայլերը ուղղում:

Գոմին մեծ օդան բթնկոխ լիքն էր: Ողջ դուռ ու դրկից հաւաքվել, եկել, խեղճ Գէորգ— ամուն մխիթարում են: Բայց Գէորգ ամին ապուշ էր կտրել... Սոսկալի դէպքը իր խիստ հարուածով խեղճ մարդու աչքում արցունք չէր թողել և նա կողմնակի դիտողի նման հանգիստ ու խաղաղ, միամիտ, մէկ-մէկ պատմում էր անցքը, սև-մուրթ գիշերուան արնոտ անցքը...

— «Գիշերը ուշ էր, որ Կարօս եկաւ: Ասի ուր էիր, բախս, էս վախտիս, թէ՛ «խանութն էր»... ու յանկարծ չը գիտեմ ի՞նչ եղաւ-չեղաւ, կարծես թէ բերթի մեծ պատ էր բլաւ՝— «Ամի (հայրիկ), հերիք է, ես էլ չեմ կենալ էդ Նազարին հետ, պիտի բաժնավիմ»...— Ծօ, ինչի՞, որդիս, ի՞նչ եղաւ քեզի... , ասելս գիտցայ, մէկ էլ վայնասուն, մի լաց ձգեց որ... , թող տնից տեղից ողորմած Աստուած միշտ հեռու պահէ... է՛հ, մեղքս ի՞նչ պահեմ, ասի ո՞վ գիտէ, եղբօրն հետ էլի կուռել են, ինչ է, անզգամցել է... Ա՛խ, ձուռն էս խեղքիս... , էլ չը գիտէի, թէ ի՞նչ ալ կրակ թափել էր գլխիս... Մինչև լուսուղև

«Ո՛Ֆ, սիրտս»... կանչեց, ասի, Կարօ ջան, արաղ բերել տամ, խմիր մի բաժակ, թէ «էլ չեմ խրմել... , Նազարը տուեց... ես իմ բաժինս խմեցի .. պրծայ»... էլ բան չհասկացայ... Կէս ժամ էլ չանցաւ, անի, բախս ձեռքէս հաւքի պէս թրուաւ... , մոմի պէս մարաւ... Եւ արիւնլուիկ ծեր առիւծի պէս Գէոն մռնչաց...

Մինչդեռ ամբօխը որդեկորոյս հօր տխուր պատմածը աչքով ու յոնքով, դիւի շարժումով իրար հասկացնում ու մեկնում էին, ներսն ուրիշ պատկեր, ուրիշ տեսարան էր ներկայացնում:

Կարօի կապտած, սևցած դին դրել մի կտրած կամի (տախտակ կախելու) հայ-հաւար պատնում, պարտկում էին... Նազարը կանգնած, գոյն-մոյն թոցրած, շտապեցնում է, որ շուտով պատնեն մեռելը, պրծնեն, երեսը ծածկեն... Ու ինքն անհանգիստ շեմի մօտ կանգնած, չէ թողնում որ մարդ ներս մտնի այնտեղ: Միայն խնկրեւում մեռելից հեռու դեռ ջահէլ-Ղիւան այրի Գոհարն է ծալապատ նստած: Աչքերը չռած, ապուշի նման չորս կողմն է դիտում ձէն-ձուզը կտրած: Կարծես իր շուրջը կատարվածներից յանկարծ կախարդված, ապշել, քարացել, ժեռար էր դարձել... , արցունքն աչքերում չորցել է, ցամքել, լեզուն բերանում կապվել, պապանծել... : Հէյ, խեղճի դարդը սարի պէս մեծ էր, խորն էր ու անծէր... Այդ ջահէլ-Ղիւան ծաղիկ հասակին, ուրախ ու անհոգ թոթուուն սրտին,

սև-սև աչքերին այրիի արցունքն երբ սազ կը-
 գային... Այրիի... և այն էլ գիւղում, տագերոջ
 ձեռին... Ու ժեռ քարի պէս դարդը խորն ու
 մեծ խեղճ ջանէլ կնոջ սիրտը քար դարձրեց...
 Եւ գիւղի պառաւ փորձառու կանայք չորս կողմը
 պատած, աշխատում էին բերնից խօսք քաշել,
 դարդից խօսեցնել ու չորցած աչքից արցունք
 դուրս հանել, որ կակիծն յանկարծ չըլնի սիրան
 ընկնի, մէկի տեղ երկու դագաղ դուրս տանի...

Պատանը պրծան: Նազարն իր ձեռքով գլխին
 մոմ վառեց, մի աման խոնկ էլ վերևը ծխեց:
 Տէրտէրը եկաւ, «հոգոց»-ը ասաւ դռնից դուրս
 ելաւ: Չորս կողմից թափան, որ մեռելն առնեն,
 տանեն հողին տան, յանկարծ շանթահար խելա-
 գարի պէս գոհարը ճրչաց ու վրա ընկաւ՝ «էդ
 սուր կը տանիք իմ խեղճ Կարօիս...», Կարօս մե-
 ռած չէ... օձի խէքած է...», դեղ, դարման արէք
 իմ խեղճ Կարօիս...»: Խեղճ թալուկ հարսին, ու-
 շաթափ հարսին մի կողմ քաշեցին զօռով, քար-
 քաշան ու մեռելն առան, տարան որ թաղեն, ափ
 ու խուփ անեն... ոճիրը ծածկեն...

Բայց գիւղը դադանիք չէ սիրում երբէք:
 Աղջիկներն խկոյն գոհարի դարդից մի խաղ կա-
 պեցին, պարերգ շինեցին՝

Օձը խէթեց անուշ եարիս
 Ինձի թողել սուր կերթայ,
 Ո՞վ կը պահէ բալիկներիս,
 Որ թողել է ու կերթայ...

Ա՛խ, էս գիւղի, էս չար գիւղի
 Ո՛չ մի բանին միք հաւտայ,
 էն հարազատ եղբօր տուած
 Դեղ-դարմանին միք հաւտայ...

Օձը խէթեց անուշ եարիս,
 Ինձի թողել սուր կերթայ...
 Ո՞վ կը պահէ բալիկներիս,
 Որ թողել է ու կերթայ...

Բայց տարին չանցած ամեն ինչ մոռցան:
 Գիւղում այդպէս է լինում ամեն բան:

Երկնքի նման յանկարծ գոռում է գիւղը կա-
 տողած ու բուք ու բորան բերանը առած զիլ
 կարկուտ թափում, մէկ էլ գետինը դեռ չը չորա-
 ցած, բացվում է, պարզում, արև է դիպչում...
 Մենակ Գոհարի սիրտը չը բացվեց, արև չը ծա-
 գեց, սև-մութ երկինքը միշտ ամպոտ մնաց... Բայց
 նրա սրտին, նրա լաց կոծին սիլ ուշք դարձրեց...

Սիրուն այրիի «մուշտարին» շատ է... Եւ
 «սևուր-սգուր» հարուստ Գէոնեք երեք հատ սի-
 րուն «հարրնոց» հարսին «գլխազին» առան
 ու խեղճ Գոհարին իր բալիկներից հեռու քշեցին,
 զօռով կարգեցին (ամուսնացրին)...

Եւ Նազար տացուն խիստ հանգիստ խղճով,
 պատուով ու փառքով «աղա» մարդ դարձաւ խեղճ
 եղբայրների արիւն-քրտինքով...

1903 թ. յուլիս
 Գանձա

Ը Ն Կ Ն Ա Ի Ո Ր Ը:

«Ես ինչ կենեմ վանայ փաշին, կարմիր ֆէ-
սին, նախշուն օգին...»

Ղուրբան կեղնիմ իմ Հասօի ծակ քօլօզին,
ձեռի փէտին, չարխի որմին»...
Փողով. երգ.

1.

Վաղ առաւօտ էր: Արևն «աժդահա» (հսկայ)
քնից արթնացած, թեթիկունք պարզած, անուշ
յորանջով, թարմ ծաղկանց ցողով քնկատ աչքերը
դեռ նոր լուացել, կաս-կապոյտ լճի պարզ հայե-
լու մէջ իր դէմքն էր դիտում, որ չը լինի յան-
կարծ անփոյթ աղջկան պէս իր արդ ու զարդից
գէթ մէկը պակաս դուրս գայ լուս-աշխարհք ու
բծախնդիր, խելառ ամբօխի ծաղր ու ծանակին
առարկայ դառնայ... Մայիսուան շքեղ, տօնական
զգեստ հագած ու կապած, նորաբարսի պէս գուգ-
վել, զարդարվել, կապուտակ լճի գեղանի ափին,
սիգաւէտ լեռան անառիկ լանջին, ըմբոստ մար-

դերի արիւնոտ խաղից յոգնած, բեզարած, կը-
թնել է հսկայ ամբողջ ամենի՝ բերդը Քեօրօղլու,
որ բազմահոշակ գեղեցկուհու պէս տարիածու-
ների ձեռքից ձեռք անցած, իսպառ գառամել,
կմախք է դարձել...

Բայց գեղեցկուհին, թէև պառաւած, այդ
հասակումն էլ կարծես քմածին գիտէր պճնվել:
Չորցած իրանը սիրուն կանաչի, մախմուր խո-
տերի քողով խուլուլել (փաթաթել), պսպղուն
գետի արծաթ գոտին էլ մէջքին է կապել, որ չը
լինի լսիւրը, անպատկառ քամին բանայ իր խոցոտ,
ազեղ մերկութիւնն արար-աշխարհքի ծաղը ու
ծանակին առարկայ շինի...

Շէկ արևն արդէն գառիվեր ուղին վերև
բարձրացած, կրակ է թափում: Օդ չը կայ կար-
ծես, խիստ շոգ ու տօթ է, քամի էլ չը կայ, որ
շրնկ-շրնկալով հետը օդ բերէ, հով ու զով անէ...
Ամեն արարած, ամեն շնչաւոր արևից փախած,
քաշվել է մի ձեղք, քարի ու քերծի, խոտի ու
թփի շուաքը մտել: Հաւք ու ճիւ լուել, ձէն ու
ձուգ կտրել, կարծես պապանծել ժեռ քար են
դարձել...

Կուպուտակ լճի սիգաւէտ ափին, Քեօրօղլու
լանջին գետին է փռվել, իրար ծոց մտել ձեպ-
ձերմակ հօար ու մըշ-մըշալով, գլուխներն իրար
բրթի մէջ թաղած, լուռ հեվ-հեվում են խեղճ ոչ-
խարները: Լիճն էլ խաղաղ է: Ալիքներն անշարժ
ապակու նման իրար են կպել ու պարզ-թափան-

ցիկ հայելու փայլով գառ-վառ արևի շողքն ար-
տացուում: Չորս կողմդ լուռ է, լուռ է ու խա-
ղաղ..., միայն աւերակ ամբողջի միջից մէկը եր-
գում էր սրտի խորքերից՝

«Ես ինչ կենեմ վանայ փաշին, կարմիր ֆէ-
սին նախշուն օղին, վոյ, վոյ, վոյ...
Ղուրբան կեղնիմ իմ Հասօի ծակ քօլօղին,
չարխի սրմին, վոյ, վոյ, վոյ»...

Սարերի գաւակ սիրահար հովուի անպաճոյճ
երգի անոյշ կըլ-կըլոցն օղը ձեղքելով, անցնում էր
հեռուն, թուշում էր հեռուն, անսիրտ անզգայ
ժայռերին դիպչում...

Հովիւ կարօն էր երգում աւերակ ամբողջի
միջից: Քարէ կոշտ-փափուկ բարձին թինկ տված,
երգում էր սրտի գառը վշտերը, արնոտ, խոցոտ
կակիժ վէրքերը, իր անյոյս սիոյ անուշ երագներ
սարերին պատմում, կաս-կապոյտ լճի անդունդը
նետում, որ այնտեղ խեղդվին, յաւիտեան կոր-
չին..., կամ թէ հրաշքով իցէ թէ մէկը իր լացը
լսի «Սուրբ Սարգսի» պէս թև առնէ թուշի, օգ-
նութեան հասնի...

Հէ, գիտէք ինչ է անյոյս սիրելը... սիրել
ու գիտնալ, որ ինքը երբէք սիրված չէ եղել, որ
իր սիրելին ուրիշի սիրով պիտի յղպանայ, ուրի-
շն ձեռին խաղալիք դառնայ..., գուցէ և տան-
ջվի առանց սիրելու..., մի բռնակալի բիրդ
բազուկներում թոյլ թուշնիկի պէս գերվի, կաշ-
կանդվի...

11 Ի՞նչ անէր Կարօն, վաղձեց սիրում էր իրա
«աղայի» չքնաղ աղջկան՝ սիրուն Զարօին... Սի-
րում էր, այն, խենթի պէս սիրում... Բայց մեր
գիւղերում սիրել, չը սիրել սով է հարցնում...

2 Հարուստ աղայի գեղեցիկ աղջիկն սով կը տայ
աղքատ հովուին, մշակին... Բայց ժողովրդի գու-
սան՝ աշուղը ազատ աղայի կաշկանդող գորքից,
գնդ-գնդան ոսկու հմայիչ շողքից, անվախ երգել
է վիրաւոր սրտի արդար բողբոջը, խեղճ սարկու-
հի աղջկայ բերնից «խաղ» (երգ) շինել կանչել՝

«Ես ի՞նչ կենեմ Վանայ փաշին, կարմիր ֆէ-
սին...»

2 Դուրբան կեղնիմ իմ Հասօի ծակ քօլօ-
գին»...

Եւ այդ անպաճոյճ, սրտաբուխ երգի բո-
ղբն ու յառաջ քանի Կարօի, խեղճ ու թշուառի
«հայր մերն» է եղել, յոյս ու սիրտ տուել, սփո-
փանք դառել...

Երգում էր Կարօն, երգում, երազում, աչ-
քերը փակած Զարօին տեսնում, Զարօին զրգովում,
ազատ սարերի ազատ կատարին պաշտած դիցու-
հուն, իր աստուածունհուն խոր երկրպագում...,
ոտները ընկած ասում, աղերսում՝ «Մ. խ...», ի՞նչ
կը լինէր, սիրուն, անգին Զարօ ջան, գէթ մի օր
դուն էլ այս սէգ սարերի ազատ կատարին զուլխդ
ծնկիս անվախ կանչէիր՝

«Ես ի՞նչ կենեմ հարուստ տղին...»

Դուրբան կեղնիմ իմ Կարօն»...

Ու այնուհետև հողիս աննէիր, հէնց ոտքե-
րիդ տակ թէկուզ փորէիր սև գերեզմանս»...

Թէև չը գիտեմ ի՞նչպէս է լինում, բայց
յաճախ մարդու հողին, թէ սիրտը նախատեսնում
է գալոց օրերի, չեղած դէպքերի նախապատ-
կերը...

Յանկարծ շները հարայ-հրոցով ամենն իր
տեղից վազեցին դէպի մերձակայ ուղին: Վայ այն
ճամբորդին ով այդ վայրենի լեռների գլխին
կնկնի ոչխարի շների ճանկը... Եւ Կարօն, իբրև
վաղուցուան հովիւ, մահակը խից, խկոյն վեր
ցատկեց: Բայց շներն հանգիստ, որը պըպըզած
ճամբորդի ձիու առաջն է կարել, որն էլ բար-
ձրացած յետի ոտներին, ճամբորդի իրա ոտներն
է լիզում ու կարծես խնդրում, որ այդտեղ մնայ,
առաջ չը գնայ... Կարօն դարմացաւ, սով մտքից
կանցնէր, թէ այդ լեռների «անկոչ» այցելուն
սիրուն Զարօն էր... Կարօն շրջվեց, տեղն ու
տեղն ապշած, քարացաւ մնաց, խնդրկապ ե-
ղաւ...

— Ծօ, Կարօ, ի՞նչ ես կայնել մնացել... էս
խենթ շներդ ճամբաս կարել են, ի՞նչ կուղեն ին-
ձէն, չեն թողնել երթամ...

Կարօն կոշտ փեշով ճակատը սրբեց ու նոր
համոզվեց, որ իր տեսածը երազ չէ, ճիշտ է...

— Զարօ, էս սուրբից կուգաս էս շօղին...

— Արաբ հաց տարայ, դարձայ կարճ ճամբով
ըսի տուն երթամ...

—Վոնդէ (հեռացրու) իսոնց (սրանց) երթամ
ես Կարօ, տես, ձիս կը խրտի...

—Շներս ինձէն խելացի են... էդ ի՞նչ է
հալդ, էս շոգ-կրակին մարդ ճամբայ կերթայ...
տես ձիդ էլ ինչպէս քրտնցուցել ես... Դէ ի՛ջի,
ի՛ջի, ձիդ քիչըմ հանգչի, ես էլ կաթ կըթեմ,
խմէ ու գնա...

Չարօն ցած իջաւ: Կարօն ձին քաշեց բերդի
շուաքը, կապեց որ արծէ, ինքն էլ գուշն ¹⁾
առաւ կաթ կթեց, բերեց տուեց Չարօին ու կող-
քին նստեց... «Ու կոխքին նստեց»... Երկու խօսք
է դա, լեզուով ասելն էլ շատ հեշտ ու դիւրին...
բայց պատահել է ձեզ երբ և իցէ լեռներէ ծո-
ցում, ամայի դաշտում ջահէլ կնոջ հետ, սիրած
կնոջ հետ մէն-մէնակ նստել... Թէ պատահել է
կը հասկանաք թէ ի՞նչ օրի կը լինէր խեղճ հովիւ
Կարօն... Ապուշի նման խելքը թոցրել, կաս-կար-
մրել էր, կարմիր-թուճ կտրել ու ջերմօտի պէս
այդ շոգ-կրակին ձեռք ու ոտք դողում, լեզուն
կապվել էր, կապ ընկել իստակ...

Չարօն էլ կարծես իրա հալին չէր... Աչ-
քերը յառած զառ-վառ խոտերին, մէկ կաթն է
խմում, մէկ խղճուկ հովուի չոր հացը կրծում...
Կարծես մի բանից կապված, կաշկանդված, համ
ուզում է շուտ պրծնել ու փախչել, համ էլ շատ
մնալ այդ կախարդական աւերակի մէջ... հէնց

¹⁾ Ծան. Գուշ—փայտի աման, որ միշտ հովիւ-
ներն ունեն իրանց հետ:

այդպէս մնալ... Ինչո՞ւ... չը գիտեմ... Բայց ինչ
որ անուշ հոսանքի նման կարծես թէ մի բան,
խմած կաթի հետ թմրեցնող մի բան պատուաստ-
վում էր իր երակների մէջ...

Մի քանի ժամում ինչ անցաւ-չանցաւ այդ
կախարդական աւերակի մէջ... էլ ես չը գիտեմ...
միայն կապուտակ լիճն արտացոլեց համբուրվող
երկու մատաղ պատկերներ և այդ պատկերից ա-
րևը վերից կարծես ամաչած, շողքը յետ քաշեց,
ամպի տակ մտաւ, քմծիծաղ տալով, բթի տակ
ինդաց, քողն առած դէմքին...

II.

Երեք ամիս էր դեռ անցել այն օրից, երեք
ամսում դեռ սար ու ձոր, ժեռ-քար ու քերծ
չէր կշտացել վառ արևի տաք համբոյրից, երբ
ձիւնն եկաւ հանդ ու արօտ, քաղաք ու դիւղ, ա-
րար-աշխարհ իր պաղ թևի տակն առաւ: Գետը
սառեց, քարացաւ, լիճը լռեց, պապանձաւ... էլ
սար ու դաշտ, հանդ ու հովիտ ամայացել, դա-
տարկվել էր, հէչ «ինս ու ջինս»՝ մարդ անա-
սուն չէր մնացել: Չէն-ձուգ կտրել, իստակ լռել,
խաղաղել էր, կարծես վհուկ չար պառաւի գա-
ւազանի հարուածով ողջ աշխարհքը միսպաղաղ
ճեպ-ճերմակ քար էր դարձել...

Հով Բեօրօղլու աւերակից ուժգին քամին զիլ ոռնոցով, մղկտոցով փչում է, ու կարծես գէշ, բամբասասէր պառաւի պէս ջանէլ զոյզի սիրոյ անուշ գաղտնիքները սաղ աշխարհքին յայտարարում՝ «չաւ անում»...

Երեք ամիս էր անցել... երեք ամսում աւերակում ինչեր ասես չէր անցել... Բայց գաղտնիք էր, սիրոյ գաղտնիք, ո՞վ գիտէր... Բնութեան մեծ, խորն ու անծէր վիճ ծոցում քիչ գաղտնիքներ են պարակվում...

Ցուրտ գիշեր է, նախըթողի (գեկտեմբեր) գիշերներէից: Աստղ ու լուսին ցրտի ահից, երկիւղից քաշվել են մութ ամպերի տաք գիրկը մտել, խուլուկվել: Գիւղական խեղճ խրճիթներն էլ մըրսում են, նրանք էլ ձիւնի հաստ վերմակի տակ են կորել, գուլուկվել (փաթաթվել)...

Ցուրտ է գուրսը, ցուրտ ու մաւթ: Ներսը լաւ է, գոմերը տաք, մարդ անասուն, որ միշտ դաշտում իրար ընկեր, թև ու թիկունք են եղել, այժմ էլ գոմում մէկտեղ պառկած իրանց շնչով տաքացնում են մէկ-մէկու: Գոմն էլ մութ է, մութն ու լուս... Դիշերուան այդ ուշ պահուն գիւղում արթուն չեն մնում: Կուշտ-կուռ իերած, տոգած մալը ներքեից, անհոգ, անփոյթ լերթին (մէջքին) ընկած տէրը վերից խումբալով, մըշմըշալով խառնուկնթոր մարդ ու կնիկ, ձեր ու տղայ իրար կողքի վայր թափված, մեռելի պէս քնել են:

Բայց Սէյրանենց գոմին օդան դեռ արթուն են: Երեկոյեան բաւական ուշ, հաց-մաց կերել, պրծել էին, դրսի դուռը յանկարծ զարկին:

— Բարի իրիկուն, Աւէն ափար...

— Աստու բարին, խնամի Զաքար, բարով եկար, հագար բարի, վեր հրամմէ օջղին կուշտը էս ինչդ (ինչպէս) եղաւ, էս ո՞ր քամին, խելառ թեփին քշեց-բերեց մեր տունը...

— Էսպէս լաւ է, Աւէն ափար, բարեկամին տունը պիտի ուշ երթաս, որ անուշ դառնաս, խօսքդ էլ անցնի, խաթր ունենաս...

Զաքար խնամին օջղի կողքին ծալապատիկ պղզղզեց, զուժիկն հանեց, հաստ պապիրոզն ու լորեց ու ծանր ու մեծ, գործով եկած մարդու ձևով դըմբ-դըմբալով, կըմ-կըմալով, կծու ծուխը քուլա-քուլա ներս քաշելով, շատ հեռուից սկսեց՝

— Է, խնամի, էլ ի՞նչպէս էք... հացդ էս տարի խմանալուս շատ լաւ էր... ոչխարդ էլ ի՞նչ լաւ ես պահել, մաշալա...

Մինչ այս մինչ այն «չայը» բերին: Զարօն ժանգոտ «պոտնոցն» (մատուցարան) առած, վըրան երկու բաժակ թէյ ու մի ափսէ էլ շաքար դրած, նախ իր հօրը՝ Աւէն ափօրն, ապա հիւրին հրամայուց:

— Զէ, օղուլ, (որդի) չէ... ես չեմ խմել, շնորհակալ եմ... ես խօսք ունիմ հօրդ ըսելու...

— Դէ լաւ, ախպէր, չայըդ խմէ, էլի ըսէ ինչ որ ունիս...

—Չէ, ափար ջան, ոչ չայ կուգեմ, ոչ ձեր հացէն բրթուճ (պատառ) կաննեմ, տեօր (մինչև) խնդիրքս չը կատարես...

—Էլի ի՞նչ է... ըսէ, աշենք, խնամի ջան, «առկիդ (ատամիդ) տակը բանըմ կայ»...

—Կըսեմ, կըսեմ, Աւէն ափար, կըսեմ... հըմը (բայց)... խօսքս պիտի չը կոտորես..., հազարէն մէկ դուռդ եմ եկել ինձի դարտակ չը ճամբես...

—Ախպար, ըսէ, աշենք ի՞նչ է..., թէ ձեռքէս գայ խօս գիտե՞ս որ հոգիս ուզես «չէ» չեմ ըսել, հանեմ կուտամ, չեմ խնայել...

—Դէ, փառք Աստծու, դուն էլ գիտես ես էս օջիին դուշմանը չեմ, լաւը կուգեմ..., տեղն էլ որ գայ ձեզի համար «գլուխ դնող» (անձս զոհող) աղայ եմ..., հիմի, աղաս, իմ խնդիրքս էն է, որ լաւ է իմ էն ջուխտ աղաքս սող-սող թաղես... ինձի ամօթով չէնես...

—Ինչի, ախպար, հեռի բեզնէն, հեռի բեզնէն...

—Ես եկել եմ, Աւէն ափար, ձեր բաղչեցէն մէ ծաղիկըմ քաղելու...

Հարս ու պառաւ, որ օդայի վարի թախտին հաւաքված, որն իր գուլբան էր գործում, որը թեղիկն ոլորում, որն էլ գլուխը քարշ գցած, աչքերը փակ, խումբացնելով հրեշտակների հետ խօսում..., ձեռքի գործը բաց թողած, աղանջները

որեցին ու աղնապիշ մեծ աչքերը պատգամախօս Չաքար խնամուն յառեցին:

Չարօն չը կար..., նա հասկացաւ, որ խօսքն իրա մասին է, որ քաղվելու հասած «ծաղիկն» իրանց բաղչում ինքն է մենակ...—կարմրտակեց, մինչ աղանջներն ալ-վարդ կտրած, գոմի դռնից դուրս փախաւ:

Չաքար խնամին մէկ—երկուս կծու ծուխը ֆստացնելով ծանր ու բարակ շարունակեց՝

—Տանըերկու առաքելոց օրէնքով, երեք հարուր վածընըվեց հայրապետաց կանոնով, Աւէն ափար, բեր աղջիկդ տուր Սահրատենց կարօին...

—Բան չեմ ըսել, Չաքար ջան..., քթի տակին խընդմընդալով, պատասխանեց Աւէնը—Դուն էլ գիտես, որ ես քեզի աչքիս լսին պէս կուզեմ... հըմը..., ախպար, էդ քու ըսած աղիդ համար մեր բաղչան հէջ մէ ծաղիկըմ չէ բուսնել... Գիտես, որ էդ «ջան-բազար է» (կեանքի առևտուր), «մալ-բազար» չէ (անասունի առևտուր), որ խաթերդ բանըմ պակաս, բանըմ աւել, վերցնեմ տամ... Չէ, խնամի, բարով եկար հազար բարի, գլխուս վրա, աչքիս վրա... հըմը (բայց) ես էլ խնդրեմ կը որ ադ խօսքը դու մէկ ըսիր, մէկ էլ չըսես...

Երկար խօսեց Չաքար խնամին, «միջնորդ» գցեց հարս-խանումին՝ տանտիկինին, աղին դովեց, գովաբանեց... բայց Աւէնը խօսքի չեկաւ..., «չէ»... ասաց ու դէմ առաւ... Խեղճ Չաքարը

գնաց, եկաւ, մի օր, երկ-օր, երկու շաբաթ, Աւէն խնամու շեմը մաշեց, ինչքան խնդրեց Սէյրանենց տան մեծին, փոքրին, էլ խոստումներ, սպառնալիք՝ թէ «էդ ջահէլ-Ղիւան գոյգը իրար կուզեն, էդ խեղճ տղան կը խելոխի (խելագարվի), սաւղաքեար է (սիրահար) սար-ձոր կընկնի, Չարօն լսէ տամլա (կաթուած) կենէ կը մեռնի... մեխք է ախր, էդ ալ-վարդը կոկոն-կոկոն սև հողին տակը փթի... վերն Աստուած կայ... կը պատժէ»...», բայց իզուր... Աւէն խնամին լսել անգամ չէր ուզում, որ իր «թառլան»՝ սիրուն Չարօն, աչք-յունքը սաղ, ձեռք-ոտք առողջ իր «չոբանի» (հովուի) կինը դառնայ... Աչքերից մինը կոյր լինէր, կամ ձեռք-ոտքը կաղ ու չողախ... «այ, էն վախտը ուրիշ բան էր»...», իսկ թէ Կարօն «սաւղաքեար է», խենթ Չարօն էլ նրան կուզէ... դրանք սարսաղ, խենթ ու խելառ բաներ են... Աղջիկը ինչ...», ուզելը ինչ... նրա ուզելն հօրը կամքն է...

Գիշեր ու գօր Սէյրանենց տանն հանգիստ չը կայ. մեծ տներից, հարուստ տեղից, նոյն իսկ մօտիկ քաղաքից մէկը միւսի յետքից եկող խնամախօսներն իրար գլուխ են պատռում... Դուռ ու երթիկ գօր ու գիշեր միշտ լիքն են. ողջ գիւղն իրար է եղել, թէ էդ «իւղոտ», չաղ պատառը սև բերանը պիտի ընկնի... Խեղճ Չարօին ու Կարօին «հալն» հարցնող հէջ չը կար... Չաքար խնամին էլ չէր գնում ու գալիս, «բէխէր» գոնից

էլ «մուրագ» չէր աղերսում... Նա անպատված, խօսքը կոտրած, պատգամների շարքից վաղուց էր վճռված... էլ ինչ կըլինէր խեղճ աղջկան օր-արևը... Ողջ գիւղն իրար էր եղել, բայց Չարօի հէջ հոգն էլ չէր, թէ սև կընկնէր ինքը «բաժին»... Կարօից դատ սվ էլ լինէր փեսացուն, նրա աչքին «Ղին ու փերի» (դև) կերևէր... Բայց ինչ լաւ է, որ կին մարդուն, խեղճ ու թոյլին մեր գիւղերում գոնէ լալու իրաւունքից չեն զրկում... Եւ խեղճ Չարօն լալիս էր...

Կացը լաւ է...», շատ լաւ է...», մանաւանդ երբ հաստատ գիտես, որ մենակ չես լացիդ մէջ, քեզ հետ լացող սրտիդ մօտիկ ընկեր ունես...

Կարօն միայն մի օր լացեց: Երբ Չաքարը իմաց տուեց, թէ «էլ ճար ու իլլած չը կայ... հէրն անիծած էդ աղջկան, մտքիցդ հանէ, ուրիշն ուզէ... երթամ ձեռաց նշանեմ, դամ, թշնամուդ աչքն էլ հանեմ»...—Կարօն միայն դառը ժպտաց, ծիծաղեց... Բայց, երբ մի օր ընկերներն էլ, որոց համար քանիցս անգամ կեանքն իսկ վտանգի էր մատնել, ուզած աղջիկը փախցրել, սրտակոտոր, վզերը ծուռ չէր թողել,—երբ հէնց այդ իսկ ընկերները նոյն խնդիրը կըլինեցին, թէ ուրիշն առ, «Չարօն չըլնի, Մարօն ըլնի»... Կարօն կատղեց, լցված սիրտը փառի նման պատուկեց...

—«ՄՕ, անհոգի, անաստուածներ... էդ սաւդան (սէրը) խօ սեր-կարագ չէ սև հետ ուզես՝ նստես ուտես, սև ուզենաս՝ վերցնես տաս...

իրեք տարի էդ աղջկան սիրեմ, ուզեմ, սրտիս մէջը ես պահեմ... սար-ձոր չափեմ, զօր ու գիշեր մտքէս չը հանեմ... հիմի ուրիշն առնէ, տանի, ես հեռուէն կայնիմ աշեմ... մեռնիմ լաւ չէ»...

Ու սարի պէս հսկայ աղան հոնգուր-հոնգուր հեկեկաց...

Բայց իզուր... Լուսադէմին գաւուր-գուռնան գուժեց գիւղին, թէ Մէյրանեհնց Զարօին «գօռով» (բռնի) տուին մեծ-տէրտէրանց Մկօին...

III.

—Շուն, շանորդի, հարամգադն, էսօր մօրս ինչ ես ասել...

—Քն, ինչ ունիմ որ ինչ ասեմ... եկած օրէս մօրդ երեսը հըլը (դեռ) շիտակ չեմ աշել...

—Ես քու շիտակ հէրդ ու մէրդ, քու մեռելդ ու կենդանիդ...

Եւ յոնի կակուխ, կարմիր ճիպոտը գալիս է գալիս Զարօի գլխին, քիթ ու բերանին ու լիբը գիւղացու անսպառ աղբիւր լպիւր ճայնոյանքն, հարուստ մեռելի շարականի պէս թափվում անխընայ...

Տէրտէրանց Մկօն «տղամարդ» դառած կնոջն էր ծեծում...

Այդպէս է դիւզում: Հախ-տղամարդու (խակահան, քաջ տղամարդու) շէնք ու շնորհքը ծեծն է, բօթակը, լիբը հայնոյանքը... թէ չէ «էլ ինչի՞ն տղամարդն է նա, որ շաբթէ-շաբաթ» գոնէ չը փորձէ բիրդ բազկի ոյժը խեղճ կնկան վրա...

Եւ զարմանք բան է, գիւղացի կինն էլ կարծես հէնց ինքը պահանջ է զգում ամուսնի ծեծին՝ «ինչ էրիկ-մարդ է, որ մի տարի է կրնկան չէ ծեծել»... արհամարանքով բոլորն հեզնում են այն հազարից մէկ գիւղում պատահող բաղդաւոր կնկան. որ գէթ մի տարի չէ արժանացել ամուսնի ծեծին...

Այդպէս է «էզը», միշտ իր ընկերով՝ իր «ործի» մէջը դերակշռող մի բան է պտրում, մի ոյժ որոնում... Եւ ուրիշ ինչ ոյժ գիւղացի կնկան աւելի ազդու, զգալի կը լինի քան իր սեփական գլխին տեղացող բիրդ հարուածները...

Ծեծում են գիւղում, անխնահ ծեծում, հարուստն՝ աղքատին, պաշտօնեան՝ փոքրին, աղան՝ ծառային, հայրը՝ իր տղին, ուժեղը՝ թոյլին... բայց ամենից շատ մարդն՝ իր կնոջը:

Դեռ առագաստի գիշերը չանցած, Մկօի հայրը, երկու հատ կոնծած, մի օր կանչեց իր մի հատիկ տղին.

—«է՛, բարձ, գիտե՛ս ինչ կայ աշխարհքը... մեծ շնորհք չէ հօր փողերով սիրուն կնիկ առ-

նելը, մեծ շնորհքը կնկան կնիկ շինելն է... Սիրուն կինը քեհլան ձի է, բռնելը դեռ հունար (շնորհք) չէ, մեծ հունարը բերանին սանձ դնելն է, նրան թամբել, փորքաշները պինդ բաշելն է... թէ չէ գիտե՞ս էնպէս գետին կը զարնէ, որ եօթը դաթ գետնին տակը կ'անց կենաս... Սիրուն կինը սարի ջէյրան-մարալ է..., բռնելուդ պէս դիք պողերը քօքից (արմատից) պիտի դուրս հանես, թէ չէ լերթդ ու թոքդ իրար կը խառնէ... է՛, բալամ, էդ ջէյրանը ես բռնել եմ, տուն եմ բերել, դէհ, տեսնեմ քեզ հիմի պէտք է գլուխը սանձ անցկացնել... կնկան սանձը՝ քօթակն է... նոր որ բերիր՝ օրն եօթն անգամ, յետոյ երեք, յետոյ քիչ-քիչ պակասցրու... Տեսնում ես դեռ քաւթառ մօրդ էլ բազի-բազի դնգսում եմ, թէ չէ, բալամ, պառաւ ձին էլ դարի կուտէ... Սիրուն կինը հրեղէն է, թևեր ունի, կը թռչի»...

Ու այն օրուանից թէև անցել էր մի տարուց աւել ու գիւղի պարծանք գեղեցիկ Զարօն սարկի նման միշտ գլուխը կախ, լուռ-մունճ տանում էր ամեն նախատինք, բայց դարձեալ գիւղի «կարգ ու կանոնով» ամենօրեայ ծեծն անպակաս էր միշտ խեղճ հարսի գլխից: Մանաւանդ Զարօն «չըբեր» էր, ախր... Տարին վաղուց էր անցել, գլորվել, տէրտէրանց հարսը տղայ չէր բերել... և կեսուրն ինքը թէև նախօրօք արար-աշխարհքին յայտարարեց թէ «հարսը չը բերէ...», բայց բամբասակէր գիւղի չար լեզուն ուրիշ կերպ մեկնեց

տէրտէրանց հարսի «չը բեր» լինելը: Նշանված օրից դուռ-դրկից գիւղում լուռ փսփսում էր՝ «ափսոս, խեղճ աղջիկ, հօրդ աշուին քօնար, էս լէն աշխարհքում էդ խատում (անընդունակ ամուսնութեան) տղին քեզ արժան տեսաւ...»

Զատկի օրերն էր: Գիւղի հազուադէպ ուրախ օրերից: Շատ քիչ է լինում, որ գիւղում մարդիկ օրերն անարցունք, ուրախ անցկացնեն: Եւ այդ հազուադէպ ուրախ օրերին, կարծես երկնքից յաւիտենական լացի մատնված երկրագնդի այդ խաւար խորշը՝ մերձիմահ հիւանդ մօռացված գիւղը, ինքն էլ յուսահատ էլ մի կողմ նետած իր դարդ ու ցաւը, իր հազար ու մի ժանդահոտ վէրքի մըմուռ կսկիծը, անկեղծ ու սրտանց ուրախանում է, անձնատուր լինում իր կեր ու խումին, խաղ ու խնդումին...

Հին ու նոր հարսներն հարանցն հաւաքված, կեսրանց խուզարկու հայացքից հեռու, կապանքից փախած թռչնիկի նման, հայրական յարկի ջերմ հովանու տակ ուտում են խմում, սրտանց ծիծաղում, պարում, թռչկոտում...

Բայց ուրախութիւն Զարօին չը կար... Հարանցն երթալու դարձեալ չը թողին: Նոյն իսկ մայրն եկաւ, աչքերն արցունքոտ ինչքան աղաչեց, որ գէթ մի օրով թողնեն աղջկան «գայ հէչ չէ հիւանդ հօրը տեսնելու...», ճար, հնար չեղաւ...

— «Մեղքս ինչ պահեմ, ես աչքիս լսին չեմ

հաւտայ հարսիս... ով տեսնել կուզէ թող գայ իմ տունս...» կոշտ-կոպիտ մերժեց Չարօի սեւիրտ վհուկ կեսուրը:

Կանաչ կիրակի երեկոյեան էր: Աղջիկ ու փեսայ հաւաքված մի տեղ, պառաւ ու ջահէլ իրար խառնվել տօնն էին տօնում, հաւկիթ կըրվացնում, ուրախ թռչկոտում, երգում ու պարում «գատիկ» են անում: Հանաք ու չանաք, էլ խինդ ու ծիծաղ խառնել են իրար: Ու խառնիճադանչ այդ հոհոցից քիչ մնար գիւղի մթազնած սեւմութ երկինքը դողար...

—Վայ, մարիկ ջան, Աստու սիրուն, տուն հասիք... հարսը խտակ խելու է...

Յանկարծ գոռալով, քիթ բերան արիւն գամ ընկաւ Մկօն:

—էդ ինչ է, ծօ..., հարսն է ծեծել... ծիծաղելով վրա թափան Մկօին:

—Ծեծելն ինչ է... մէմ տուն հասիք, տունը վառեց...

Բոլորն ապշած տուն թափան:

Գզգզված մտղերն երեսին թափած, աչքերն արիւնոտ, չոր գեանի վրա նստել էր Չարօն: Գլուխ-մուխ բաց, կրծկալը քանդած, ամաչկոտ Չարօն, որ մի տարի էր հարս եկած օրից ոչ ոքի երես շիտակ չէր նայել, անամօթի պէս փրուվել էր գեանին ու տարօրինակ մի թնդիւր միսած պսակի սիրուն շորերը մէկ-մէկ լցնում է վրան... Ալ-բոցն ահուելի վիշապի նման լափում

է մէկից ճանկն ընկած որսը ու կարծես դարձեալ անօթի-քաղցած բարձրանում է վեր ցած-լիկ առիքի (առաստաղ) մրերը լիզում, նոր որս պահանջում... Եւ Չարօն անթարթ, կարմրած աչքերն յառած կրակին, սիրով տալիս էր իր վերջին դարդը քաղցած վիշապին... ու ամեն անգամ մի շոր նետելիս կարծես թէ սրտից մի դարս էր ընկնում, ցաւից պակասում...

—Աղջի, ինչ կենես..., խելա՞ս ես ինչ ես... չորս կողմից թափան, բայց նա ահուելի մի հըռ-հըռոցով կրակը ցանեց կեսրանց երեսին... ու մուխն ու մութը լցվեց ողջ տունը...

Ու դուռ ու դրկից իմացան թէ չէ թափեցան եկան, խսկոյն ախրացու-տէրտէր կանչեցին, Չարօին մի կերպ գօռով բռնեցին, անկողին դրին:

Տէրտէրանց հարսը «գարկուրել էր, չարոց էր եղել»...

Եօթ կանոն սաղմոս եօթ անգամ ասին, քառասուն գիշեր նարեկ կարդացին, «մասունքը» բացին... ճար-հնար չեղաւ..., խեղճ հարսի լեզուն նոյն իսկ չը բացվեց...

Վերջապէս մօտիկ թուրք գիւղից բերին Փաթմա խանումին: Եօթ գօր-եօթ գիշեր գիտուն պառաւը դուռ-երթիկ փակած հիւանդի կողքին էլ «ուամ» պցել, էլ «գարի համրել», էլ «թասի նայել»... ողջ գիտութիւնը խեղճը գօրծդրեց, հազիւ որոշեց, որ թէ «ճար ըլի Սուրբ

Յովհաննէսի վանքիցը կըլնի... սև դոչըմ տարէք՝
դուռը մատղեցէք... բալբի (կարելի է) մէ լու-
սըմ, մէ դուռըմ բացվի»...

Թէև թնրք, Փաթման ամենին իրեն կը-
նին «յարմար» դեղ-դարման կուտար...

IV.

Ք... գիւղի դիմաց կանաչ-սիգաւէտ բլուր-
ների մէջ ամենից բարձր, ամենից շքեղ կան-
գնած է սարը Սուրբ Յովհաննէսի, որ նորա-
պրտակ թագուհու նման դառ-վառ խոտ—ծաղ-
կի ծիրանին պցած հպարտ ուսերին, հին մա-
մրոպատ Սուրբ Յովհաննէսի մատուռն էլ զըլ-
խին դրել է պսակ...

Ք... գիւղից վերև տափարակ դաշտում Տա-
փարուան լիճն է ավերը կըծում...

Ք... գիւղից ներքև սարերի ծոցում Գու-
ման-գեօլ լիճն է եզերքը լիզում:—Ու կարկա-
չահոս, խենթ-խելառ գետը ժայռերից խրտած,
ավերից փախած, հազար-մի աղբիւր, ճրովըտան
առուակ առած իր հետը, աւերաէրի պցած նարո-
տի նման կապոյտ լճերը կապում է իրար, խոտ-
նում է իրար... ու ինքը բեզբած, թև-թիկունք
թափած, նետվում խոր լճի գիրկը անյատակ...

Եւ հին դարերի պարեպաշտ մարդոց ձեռա-

կերտ վանքը, երկու լճերի մէջ տեղը կանգնած,
ծաղրում է վերից՝ իր հսկարտ գահից կարկաչուն
գետի խենթ-խելառ խաղը...

Որքան սիրուն ես, զրոյի տարած կանաչ
լեռնաստան...

Վարդաւառի շոգ կիրակի օրն էր, Սուրբ
Յովհաննէսի մեծ տօնը՝ «դերին»... Կէս օրը վա-
ղուց անցել էր արդէն ու բոց-արևը, իր բաց-
կապուտակ ասպարէզն անցած, ոսկէգօծ դե-
ղին գաւազաններով գառամ ու յոգնած ծե-
րուկի նման կոթնել է ամուր ֆեօրօղլու բեր-
դին: Բայց հին օրերի, շահել օրերի յոգներն մի-
շելով, աչքը նետել է Սուրբ Յովհաննէսի սի-
րուն կատարին...

Սուրբ Յովհաննէսի սիրուն կատարին ինչեր
չեն լինում այդ շքեղ տօնին...

Է՛հ, խեղճ գիւղացու աղքատիկ կեանքում
այդպիսի օրեր շատ քիչ են լինում, երբ հրա-
շագործ արաղի զօրքով խելք-մելք թոցրած,
դարդ ու ցաւ մոռցած, աղքատ ու հարուստ իրար
խառնվել, ասում են, խօսում, երգում են, պարում,
ինչ որ ոյժ ունեն խմում, խենթանում...

Սիգաւէտ լեռան ծաղկաւէտ լանջին կարմիր
կակաչը շիկնել է—գեղնել գեղջկուհու փարթամ
ալ-վարդ թշների, մախմուր շրթունքի փայլից ու
ցուրբից և ամօթահար տարին մի անգամ այդ
օրուայ տօնին նարգիզ ու շուշան խամրած, զըլ-
խիկոր տեղի են տալիս, խլվան կուսի սիրուն

աչքերին: Արտուտ ու սարեկ լուել են իստակ, և ի՞նչ էլ երգեն ձեռք-ձեռքի բռնած պարոզ աղերանց ու աղջիկների երգի գէմ յստակ...

Հէյ, ինչ հայացքներ, սուր-սուր սլաքներ նետում են իրար աղջիկ ու աղայ... ի՞նչ գաշն ու պայման, մեծ-մեծ խոստումներ, որից մեծ սարն էլ քիչ մնայ դողայ... Եւ պարզ ու անկեղծ սիրվող զոյգերի սուրբ գրաւական լինում է միայն մի-մի մատանի, հասարակ, անշուք մետաղի մատանի...

Սպիտակ ու նաշխում վրանների տակ սարը կորել է, ծածկվել իստակ: Շատերն էլ սայլի թևերը անկել կապերա ու չուխա վերան են փռել ու վրան շինել, շուաքում նստել, սուփրան բաց արել:

Ահա մէկուսի թափորի ծայրին կանգնած է հեռուն Տէրաէրանց սպիտակ վրանը սիրուն: Այնտեղ չեն խմում, այնտեղ չեն պարում... Նոյն իսկ ամբոխը այն կողմն անցնելիս, ինչ որ փրփրում, քայլերը յանկարծ արագացնում են: Տէրաէրանց չարոց, «ընկնաւոր» հարսն էր վրանում նստած: Լրման մօտ դալուկ լուսնի պէս գունատ, հեղնական հպարտ ժպիտն երեսին, նայում էր Չարօն սարի հանդէսին:

Կարծես թէ ինքը օտար էր այդտեղ. ծանօթ չէր նրան տղերանց պարը, աղջկանց խաղը, խինդն ու ծիծաղը... Խորդ որդու նման կարծես թէ միայն սոսկ հանդիսատես կանչված էր նա:

Եւ ճիշտ որ նրան Փաթմա խանումի խորհրդով միայն ուխտ էին բերել:

Ու քսնի թշուառ, հիւանդ անկեալներ այդ տօնի օրը Սուրբ Յովհաննէսի դռներն են մաշում:

Խեղճ, անդամլոյժ պառաւ կինն հագիւ քարփաշան հասած մատուռի դրան, քարերն է ճանկուում, լիգում, լիզվութում, հին սրբավայրից փըրկութիւն հայցում, հրաչք է խնդրում...

Այնտեղ, մատուռի վէմ քարի առաջ մի շուխտ մոմ ձեռին ծնկի է չոքել դեռ ջահել «չբբեր» հարսը գեղանի: Ա՛խ, թէ կատարվի խորհուրդը սրաի... Սուրբ Յովհաննէսը աչքը քաղցր անի մի տղայ «բաշխի»... ահանջ չի դնի կեսրոջ խօսքին, ճակախց կը կտրի դեղին մեծ ոսկին (դիւխի դարդ) ու մատաղ կանի Սուրբ Յովհաննէսին: Ու սրտատրոփ ձեռքի մէջ սեղմած փոքրիկ քարն ահով նա մօտեցնում է մոմոտ վէմ քարին: Քարը կպչում է... Հարսն ուրախացած, որ սրաի ուխտը Սուրբ Յովհաննէսը լսել է արդէն, աչքերն արցունքոտ, քարն է պաշ-պըչում... քիչ մնայ խելիսը թոցնէ խեղճը...

Յանկարծ ամբոխը շանթահարի պէս յեռ-յեռ է քաշվում: Տէրաէրանց հիւանդ «ընկնաւոր» հարսին ուխտի են բերում: Կեսուրն ու Փաթման թևերից բռնած, չորս հինգ աղամարդ չորս կողմը փաթտած, հիւանդ Չարօին եօթն անգամ ժամի շուրջը պտտեցին, մատղած սև զօշի կարմիր

արիւնից ճակտին քսեցին, ապա ներս տարան մատուռը ուխտի:

Փաթման իր ձեռքով հիւանդի ճակտից կըտրեց մեծ ոսկին, աջհամբոյր տուեց վէճ քարի կողքին նստած տէրտէրին ու ինքն էլ քաշվեց մի անկիւն չոքեց:

Ամբոխն հայ-հաւար խոնվում է ներս, ամենքն ուզում են տեսնել տէրտէրանց ընկնաւոր հարսին: Վազուց գաւառում լուր էր տարածվել, թէ տէրտէրանց հարսն այնքան սիրուն է, որ դե-չարերը, ջին-փերիները տիրապետել են...

Ու Չարօն կանգնած, տխուր դիտում էր: Տխուր դիտում էր այդ «հետաքրքիր» ամբոխն անզգայ, որ մարդուն դրսից լոկ զիտէ գննել ու երբէք չը հարցնել, թէ ներսը ինչ կայ... Յանկարծ մի սրտանց «անխ» քաշեց հիւանդն ու հեկեկալով փովեց չոր գեսնին: Ամբոխը սոսկաց... Հազար բերաններ հետը անխ քաշեց, ափսոսաց սիրուն, նորատի հարսին... ու կարծես զժգոհ տօնին «անվայել» այդ միջնագէպից, ամենքն շտապեց իր ուրախ քէֆին, խաղ ու խնդումին...

V.

Քեօրօղի լերան ստորոտներում հին-հին դարերից հազիւ մնացած աւերակների բեկորների մէջ

դիմ-դիք կանգնած է մի հսկայ ժեռ քար: Գրեթէ երկու մարդու հասակով բարձրանում է նա կապուտակ լճի ապառաժ ափին ու դաժանակիր պատժի մատնված հսկայի նման, զօր զիշեր անքուն հսկում է լճի ալիքների մէջ լուռ փսփոսացող ջին փերիների լացն ու ծիծաղը: Ու թէև այդ դիք-ապառաժ քարը ամբողջ գաւառում հռչակվեց իբրև զօրաւոր ու Սուրբ Սարգսի գերեզման, բայց ոչ ոք «բէվախտ» իրիկնապահին չէ համարձակվում ոտ դնել «բէխէր» սև լճի ափին:

Սև-լճի ափին ամեն իրիկուն ինչ որ զարմադալ, կռիւ է բռնկում: Ալիքներն հուժկու ու փրփրազէզ իբար կոծելով, իբար ճանկոծելով, մէկ-մէկի մազից, մէկ-մէկի բաշից ամուր կախ ընկած, թռչում են ափը, հասնում են ափը, ժայռերին դիպչում, քիթ-բերան ջարդում, լճի տակն անցնում, անդունդն են իջնում, որ հանգստացած, ուժ ու թափ առած, նորից վեր ելնեն, կռուի բռնվեն... Սև ու մութ լճի ջին-փերիներն են զարկում, զարկվում, կռիւ են մղում Սուրբ Սարգսի հետ... Կապուտակ լճի ալիքներն հազած, եօթ զօր վեց զիշեր նոքա կովում են, մինչև վերջապէս շաբաթ իրիկունն յիշտեկի մթին ափ են դուրս գալիս, որ տիրապետեն ու լիճը տանեն սիրուն զօրավար յաղթված Սուրբ Սարգրսին, որ ողջ շաբաթուայ կռուից թուլացած, զէնք-զրահ թափած, էլ խոստանում է յիշտեկի մթին անձնատուր լինել ջին-փերիներին:

Եւ անա յաղթված Սուրբ Սարգիսն անեղ մի թոյլ ու անզօր խեղճ աղամորդու իր «դուին» է (ծառան, գերին) արել ու Սուրբ Յովհաննու բերանով յայտնել, որ ամեն յիշտեկ խոռնկ ու մոմ բերէ իր գերեզմանին ծխէ ու վառէ, որ քանի մարդիկ մատուռ չեն շինում, տաճար չեն կանգնում իր գերեզմանին, գոնէ երկինքը յիշէ իր յաղթված քաջ զօրավարին մի գունդ հրեշտակ զրկէ օգնութեան ամեն շաբաթուայ յիշտեկի միջին:

Եւ Սուրբ Սարգիսը իրեն «դուր» միջնորդ բնարեց տէրտէրանց սիրուն Չարօին: Ֆաթմա խանումը վարդաւառի մեծ տօնի օրն այդպէս յայտնեց ու մեկնեց Չարօի «քատակն» (ներշնչում) արար-աշխարհին, որ Սուրբ Յովհաննէսն իբր իրա բերնով յայտնել էր «դուլին»՝ իր «ընկնաւորին»...

Եւ երբ, յիրաւի, պատմածի նման ճիշտ լճի ափին գտնվեց հսկայ ժեռ-գերեզմանը Սուրբն Սարգսի հողի մէջ կտրած ու դիբ անկվեց, էլ կասկած չը մնաց Ֆաթմա խանումի ճիշտ գուշակութեան:

Ու այն օրուանից ամեն շաբաթ օր, երբ միջնադրը գետին էր իջնում, Չարօն շապով խոռնկ ու մոմ առած, քայլերն ուղղում էր սև լճի ափը:

Ու սև-մուխ լճի ալիքներն անեղ, կարծես աւելի կատղած-փրփրած, ճիշտ մարդու ձայնով ինչ որ խլվում, իրար հետ խօսում, մերթ գողգողում են, մերթ ձէն-ձուգ կտրած լուռ փափսում են...

Եւ մարդիկ անով ու պատկառանքով շաբաթ օրերը իրիկնապահին, երբ տեսնում էին տէրտէրանց հարսին, մի կողմն են քաշվում ու լուռ փափսում՝

— «Ծօ, «ընկնաւորն» է, Սուրբ Սարգսի դուր... յիշտեկ է էսօր, խոռնկ-մոմ կը տանի տիրոջը դուռը»...

Ալիքներն անեղ գոռում են, գոչում ու գողոցին հետ Սուրբ Սարգսի տակից ինչ որ փափրսոց, շշուկ են բերում... Կարծես Սուրբ Սարգիսն իր դուլի հետ է խօսում, փափսում...

Ու տարին չանցած վարդաւառի մեծ դերուց՝ կերակուց, այն «չբբեր» Չարօն մի սիրուն տղայ բերեց, բալալուկեց... Եւ որովհետև Սուրբ Սարգսի «տուրքն» էր անունը Սարգիս գրեց տէրտէրը...

1903 թ: սեպտեմբեր
Գանձա

«ՎԵՐՆ ԱՍՏՈՒԱԾ ԿԱՅ...»

—Եթ տարեկան եթում էի, վարժապետ ջան,—այսպէս սկսեց մի օր ծառաս՝ Սահակը իր սև կեանքի աղի-լեղի պատմութիւնը,—երբ հայրս ինձ տարաւ իր մօտ՝ Չաղացքը: Ինձ թուեցաւ, թէ հրաշքով յանկարծ դժոխքից—դրախտն եմ ընկել: Նէ, վարժապետ, գիտե՞ս ինչ է մեր գիւղերում անմայր, անտէր, խեղճ եթումի (որբի) օրն ու հալը... Հայրս մեռնէր, մի գարգ կանէր, մայրս իսկոյն թուխս հաւի պէս շուրջը կաննէր փոքրիկներին, սև-մրութ կանէր օրն ու արև, ինչպէս վնէր, քաղցած թէ կուշտ, մերկ թէ հագած, կը փայփայէր, կը պահպանէր, մինչ «հաւ անէր թառը դնէր», որ ամուսնու հին օջախը, սև օջախը չը մարէր... Բայց իմ ախր մայրս էր մեռել ու մեզ չորսին՝ երկու աղայ, երկու աղջիկ եթում թողել...

Մայրս աղքատ էր, շատ աղքատ. ուրիշի պէս նա չը թողեց ոսկի գարգեր, բարաթով փող, որ հայրս իսկոյն, էլ ամեն ինչ մոռացած, ինչպէս

անում են գիւղերում, տանէր մէկին տար ու բերէր մի «Չաղու» կին նստեցնէր, խորթ մօր ճանկը մեղ գցէր... Պարտքով փող էլ ո՞վ կը հաւատար խեղճ հօրս... որբկայրու կարգվելուն (ամուսնանալ) մեր գիւղերում չորս-հինգ հարիւր է պէտք ախր...

Խորթ մօր ճանկից՝ բուրբակիան կրակից ազատվեցինք, բայց ի՞նչ օդուտ... Անտէր որբը երբ է օր ու արև տեսել այս սև ու մութ աշխարհքում, այն էլ գիւղում...

Մեզ յանձնեցին հօրեղբօրս խնամքին: Հայրս վաղուց Չաղացական էր, քաշվեցաւ իր Չաղացքը ու տարեկան մեր կերմանը (ուտելիք)՝ երկու սոմառ դարի ալիւր հօրեղբօրս տալուց դատ, ո՞չ մի բանի չէր խառնվում...

— Էստից ետև դուն ու բու Աստուածդ, Եղօ տացու... ասաց հայրս մեծ եղբօրը — ես Չաղչէն էլ տուն չեմ գալ... էս տղաքս քեզի կուտամ, քեզի ա էն Աստծուն... Դու էլ էդոնց հօրօղբար չես, հայր ես, մայր ես, ամեն ինչ ես...

Հէյ գիւղացու, խեղճ գիւղացու անխիղճ Աստուած, էդ ի՞նչ օրի թողիր մեզ...

Բայց... գիւղում Աստուած կա՞յ որ, վարժապետ, թէ որ լինէր էլ ի՞նչու է հայրը աղին, տըղան հօրը, կինը մարդուն, մարդն իր կնոջ, եղբայր ու քոյր, էլ զրացի, էլ ազգական թէ օտար, անխիղճ կերպով իրար արիւն են միշտ ծծում... Չէ, վարժապետ, գիւղում օրէնք, խիղճ, դատաստան

տան հէջ չը կայ, էլ ո՞ր անխիղճ Աստուածն այնտեղ կը մնայ... Աստուածն այնտեղ լուկ ժամուսն է, չորս պատի մէջ բանդարկված ու գիւղացոց արիւնյուռայ գործերում իսկի ձեռք չէ թաթախում... Թէ չէ գիւղում, էս մեր գիւղում խեղճ Աստծուն էլ կը խեղդէին... |||

Եւ հօրեղբայրս՝ Եղօ տացու ու իր Աստուածն առան մեզ՝ խեղճ որբիկներին իրանց թևի՝ հովանու տակ... Դրանից յետոյ էլ քոյրերիս ու եղբօրս ողջ վարնանը ամառ, աշուն տանը խակի չը տեսայ: Մերթ գլխաբաց, չուլ Ֆէրէճիկը (չալէ վերարկու) փաթաթված, մերթ բողոտն, քիթ ու բերան կապուտկած, հայհոյելով, ծեծկոթելով, թոն (անձրև) ու քամուն, ցուրտ ու ցեխին քշում էին հօրեղբօրս արան հօտուրթեան: Սաղ ձմեռն էլ բուք-բորանին խեղճ քոյրերս փողով վարձած ծառայի պէս միշտ շուր էին կրում տանը՝ հօրեղբօրս մարդ ու մալին:

Փոքը քոյրս բաղգաւոր էր, մի տարի էլ չը զիմացաւ էդ տանջանքին, հիւանդ պառկեց: Ներսի գոմը հինգ օր հաղիւ մեծ քրոջս գողցած հացով ապրեցաւ (կուշա փորով հաց, գարի, ցամաք հաց էլ չէին տալիս ուտելու) ու մի օր էլ քոյրս աղբիւրից երբ տուն եկաւ, գնաց տեսաւ որ մեռել էր...

Է՛հ, ի՞նչ անենք, մեռել, մեռել... Ո՞ւմ հոգն էր... Քոյրս ու եղբայրս այդ գիշերը մի քիչ լա-

ցին, ես էլ նրանց լացից լցված մի քիչ աչքերս
թրջեցի ու ամեն ինչ վերջացաւ...

211 Գիւղում աղջիկն ախր պատիժ, պատուհաս
է... հոր-մօր համար...

Բողոքը սև է աղջկան... Միւս օրը հայրս ե-
կաւ, տէրտէրի հետ տարան մօրս ծոցը դրին,
թաղեցին... Խեղճ եթումի տեղն էնտեղ է, էն
սև ու մութ ցուրտ գերեզմանն... էս աշխարհ-
քում եթումն ու խեղճն, աղքատն ու թոյլն ինչ
բան ունեն, վարժապետ...

212 էս աշխարհքը, փո՛ւնչ աշխարհքը զօրբայինն
է՝ ուժովին...

Եօթ տարեկան եթում էի, վարժապետ ջան,
երբ հայրս ինձ տարաւ իր մօտ՝ շաղացքը: Ասենք
հայրս էլ խօ չը տարաւ..., հօրեղբօրս անից մի
օր ես փախայ ու ինչ արին էլ շաղացքից տուն
չեկայ: Ախր հոգուս էր հասել... Գոյրս վաղուց,
հակառակ մեր հովանաւոր հօրեղբօրս «սուրբ»
կամքին, փախել էր իր սրտի սիրած տղի հետ,
խեղճ տացուխ շահին գիպել, գէհին դիպել...
Ախր գիտե՞ս, թէ որ քոյրս չը փախչէր, քանի մա-
նէթ հօրեղբայրս «հաղէմասի»¹⁾ պիտի առնէր...

1) Ծան. «Հաղէմասի»՝ «հա» ասելու վարձ, զըր-
խագին, այն փողն է, որ նշանվող տղի տէրը տալիս է
աղջկայ հօրը կամ խնամակալին համաձայնութիւն առ-
նելու համար: Հաղէմասին սկզբներում շատ էր 100-ից
մինչև 200 նոյն իսկ երբեմն 300 բուրլի, բայց այժմ
50—100-ից չէ անցնում:

Մեծ եղբայրս աւելի վաղ դուրս էր եկել,
գիւղում մէկին հօտաղ մտել, հօրեղբօրս կատ-
ղեցրել: Կարճ էի ես էլ էդ տան մէջ ապրել...
բոլոր վրէժն ախր ինձնից կառնէին... Ես էլ փա-
խայ, շաղացք մտայ: Այնտեղ լաւ էր:

Առաւօտ վաղ, երբ արեւը իր մօր ծոցից՝
Ելլիսի դաղի սիրուն լանջից դուրս էր գալիս, ես
էլ հօրս հազար կտոր, ալըագուլուլ չուլ անկող-
նից մկի նման իսկոյն դուրս էի ցատկում: Առանց
շորի, լոկ մի շապկով, չըր-չըփլաղ, (ասենք շոր
էլ չունէի, ինչ հագնէի) լոկ մի կտոր սև սաճի
հաց կրծելով, վազում էի խաղալու:

Ո՛րքան լաւ էր, որքան սիրուն էր դուրսը...
Չէնց շաղացքի դրան առաջից գոռգոռալով, ոլոր-
մոլոր շտապ հոսում էր խենթ ու խելառ գե-
տակը: Վերից-վարից, ամեն կողմից կըչ-կըչալով,
վրժ-վրժալով, մէկ իրարու խառնվելով, ափերի
հետ պագվտելով, մէկ էլ շորած (խռոված), բա-
ժան-բաժան հազար ճիւղի ճեղճոված, յորձանք
տալով, փոքրիկ ծոցի, փրփուր ծոցի զիճ-բարերը
լիզվոթելով, թռչկոտում են առուակները, պարզ
ու վճիտ աղբիւրները, վազում, փախչում, անյետ
կորչում, գետն են լցվում, չքանում...

Հանգ ու հովիտ, դաշտ ու արօտ, քար ու
քարափ բազր քնից արթնացած, վաղ-վաղոր-
գեան անուշ ցողով լաւ լուացված՝ զովացած,
ծաղկի, սէզի հազարերանգ հագուստ հագել, վառ
արևին առաւօտուայ «բարիլոյսն» են առաքում:

Եւ արտուարիկ, սիրուն սարեկ, ծիա ու ճպուռ, հազար հաւքեր, գորտ ու թիթեռ, ճանճ ու մլժեղ, հորթ ու գառներ, հովիւ-հօտաղ անուշ ձկներն իրար խառնել, տաղով—խաղով օգն են լլցնում, ճլվլում, հին նշանված, երկինք-գետնի մեծ հարսնիքն են կատարում...

Ո՛րքան սիրուն, գեղեցիկ ես, գրողի տարած դու գարուն...

Կիրակի էր, «ծաղկակոխի» կիրակին, միակ օրը, երբ զիւղերում ծածուկ երեսնորահարսներն ու նշանած աղջիկները ազապների հետ հաւասար ուրախ, ազատ վազում են դաշտ, խուզարկու սուր աչքից հեռու, թուշկոտում են, կանաչ-ծաղիկ կոխկրտում, երգում, պարում, վանդակից դուրս թռած-փախած թռչնիկի պէս խաղում, խնդում, ծլվլում...

Շարան-շուրան խումբ-խումբ եկան «ծաղիկ կոխող» աղջիկները, խումբ-խումբ եկան ջաղջի մօտի մեծ կամուրձից անցկացան:

— Հը՛ պը... ջաղացք կուգաս, այրոտ մուկ..., աշէ կերթանք մենք ծաղկակոխ... դու հող (այգ-տեղ) ջրերը լրկէ...

Քէն ու ռխով կարծես լցված, յանդիմանեց հօրեղբօրս մեծ աղջիկը: Նրանք էլ խմբով գնում էին ծաղկակոխ:

— Օ՛խ, դու չունիս... կաշես ինչըղ (ինչպիսի) արխալուղ (հագուստ) է կարել մարս...

Սկսեցին ինձ դրգուել փոքրերը:

— Ա՛յ, ոտնամաններս... տացու քաղբէն է բերել, դունա ունի՛ս... վրա բերեց հօրեղբօրս միւս տղան:

— Ձըլտօ շապկին, իդոր (դրա) հալին աշեցէք... Ձունը գլխուդ, այրոտ մուկ, մեր տնէն ա փախաւ եկաւ...

Ապուշի պէս հացի կտորն ամուր բռնած, մէկ մի աղի, մէկ միւսի արխալուղին, ոտնամանին էի նայում, բերնիս ջուրը կամաց-կամաց վազեցնում:

Խումբը գնաց, ես մնացի նստած տեղս քարացած: Մի բան ներսս օձի նման կրծում էր: Էլ սիրուն դաշտ, սար ու ձորեր, էլ գետ-առուակ, արև-երկինք, խոտ ու ծաղիկ, ո՛չ մէկը ո՛չ իսկի աչքիս չէր երևում... Նոյն իսկ նաշխուն քարերս էի գետի ավին մոռացել... Կարծես շուրջս հէնց բոլորը՝ քար ու քարափ, էլ գորտ ու հաւք ամենը մի կանաչ-կարմիր, ալ արխալուղ հագերին, ինձ ծաղրում են ծիծաղում:

Սիրտս լցվեց, աչքերս իրանք-իրանց թրջան ու ես լալով, ձեռքիս հացն էլ վայր գցած, ջաղացք մտայ հեկեկալով...

— Ի՞նչ է, բալաս, ինչի՞ կուլաս... վե՛վ ծեծեց...

— Հա՛, ինչի՞... չեմ, ես ա կուզեմ...

— Ի՞նչ է բալաս, ի՞նչ կուզես...

— Ալ-արխալուղ, ոտնաման... Պէտօն, Արշակն ունէին...

—Փարա չը կայ, գառս, սւրտից... երբ մեծընաս փող կուենեսաս, դուն ա առ...

—Հն, չեմ, ինչի... ես ա կուգեմ... Պէտօն, Արշակը խօ մեծ չեն... էնոնց տացուն է առել...

—Չը կայ, ձագս, չը կայ, քընը (գնա) հալաւդ (շորերդ) հագի...

Էդ աւելի սիրտս ծակեց, էլի պիտի էն շորերս, չուլ շորերս հագնէի, որ ծաղկակոխ գնացողներն յետ գալիս էլի «չըլաօ, ալրտս մուկ» կանչէին: Տղան «չըկան» ինչ գիտէ.. Անդգամ-ցած գետին ընկայ ու սկսեցի բոբբոռալով ձեռ ու ոտս գետնին դարնել, ձանկոթել...

—Չէ, Սահլօ ջան, չէ էլ, կառնեմ... քեզ ա կառնեմ... դէ էլ, մի լա...

Գուրգուրելով բարձրացրեց ինձ հայրս ու խնամքով, որ չը պատի, անձս ձգեց միակ շորս՝ չուլ չուխաս: Բայց ես դարձեալ լալիս էի:

—Դէ, հերիք է, ամօթ է... Մի լա, երթանք աշենք, տացուդ փարա պիտի տայ, առնենք խանթէն քեզ ա հալաւ-մալաւ գնենք... էլ ինչ էնեմ, փարա չը կայ իմ քովս...

Մի բիչ չեմ-չում, նագ-տուղ արի, հօրեղբօրս անը սիրտս էր, բայց ինչ անեմ, ախր սիրտս նոր շոր կուգէր...

Գնացիւք: Հայրս առաջից կծման տալով՝ քերվաելով, ես ետեից մըռ-մըռալով, թըս-թըսալով, մտանք Եղօ տացուենցս մեծ տունը: Տացուա

Թոնրի շրթին նստած մեծ չիբուխն էր Ֆրաս-Ֆրաս-ացնում, կիսն էլ կողքին արծաթ դութկից թէժ բոնոթին մեծ պողուցով քիթը բաշում:

Սովորական «բարև տացու», «ասու բարին» -ից յետոյ, հայրս էլ հանեց իր մախոսքի մեծ քեսան ու թմպիկին ¹⁾ պըպըգելով, ուզածին չափ սկսեծ լցնել, մատով կոխել մեծ լիւլան: Ես էլ կողքին, անով-դողով կուչ եկած, խիստ անհամբեր ինքս իմ մէջ բարկանում եմ, թէ հայրս ինչի փող չէ ուզում ու վախեցած, որ չը լինի թէ մոռացաւ, կողքից բոթում, բոթբոթում եմ, թէ շուտ արն, դէ պըծի...

—Հն, դորթ (ճիշտ), տացու ինի փարլն շահը (տոկոս) տայիր հէչ չէ տղին հալաւ-մալաւ (շոր) առնէի... չըր-չըփլաղ է (մերկ)... հէչ հագնելու բան չունի...

—Փարին շահը... վէր փարան է ծօ... ինչ-քան է...

—Քանի տարուան բան է, եսսիմ, դու չիտէս, բաժնովելուս որ դու ինձի պարտք մնացիր...

—Պարտք մնացի... թուխար քովդ է, բեր աշենք...

—Քովս է... անան, առ հաշվէ...

Հայրս հանեց շապկի ջեբից «մասունք»-ի պէս հազար ու մի փալասի մէջ փաթաթած, աղ-

¹⁾ Ծան. Թմպիկ—մի արշին բարձրութեամբ պտտ է, որ թոնրատունը (թնդրափը) բաժանում է տան միւս մասից՝ «տան երեսից»:

տից սեցած բարաթը ու դողալով, դողդողալով առեց եղբօրն հաշվելու:

Գիտեմ, որ դէ՛հ, վարժապետ ջան, 50 – 60 մանկե՛ն ի՛նչ է՛ ձեզ համար, բայց էդ անտէրն ախր հօրս ողջ բաժինն էր իր հայրական մալ ու մուլքից, Ահօհնց մեծ օջաղից, որի համար մեծ եղբօրից բաժանվելիս, այնքան կռիւ-վէճից յետոյ լով այդ բարաթն էր ստացել:

Տացուս առաւ, շուռ-մուռ տուեց, կարդաց, հաշվեց, խոր մտքի մէջ ընկածի պէս, մեծ գլուխը տարաւ-բերեց, երկար չիբխից կծու ծուխը ներս ծծեց... յանկարծ չը գիտեմ թընդրից ի՛նչ բոց, ալ-բոց ելաւ շուրթն ի վեր...

Հայրս իսկոյն էն գէշ օձի խէթածի պէս տեղից թռաւ, գոյն-մոյն նետեց, սպրտնեց...

— Էդ ի՛նչ էրիր, Եղօ տացու... ախր դու հէջ խիղճ-գուլթ չունէս... չէ՛ վերն Աւսուած կայ ախր...

— Ի՞նչ գուլթ, ի՛նչ խիղճ, ձօ, սարսաղ... խելքդ խօ չէս թուուցել... ձօ ես քեզի փարա էրբ եմ տալիք եղել, որ եկել ես հիմի կուզես, ցնդել ես...

Հայրս կանգնած տեղը մնաց, քար կտրաւ... Յետոյ ձեռքիցս ամուր քաշեց, դողդողալով դուրս ելաւ...

Հօրս այլայլած գէմքը ինձ էլ ապշեցրեց... բան չը հասկացայ, բայց բնազդմամբ ինձ էլ ինչ որ երկիւղ, սարսափ էր տիրել: Մինչ ջա-

դացքը ոչ մէկս ձայն չը հանեցինք: Ապա նա լուռ նստեց ջաղչի քարի կողքին, մեծ չիբուխը սուս-փուս հանեց, լցրեց-քաշեց, քաշեց-լցրեց, ամպի-ծուխը, կծու մուխը քուլա-քուլա իրար յետքից ծծեց, շնչեց... կարծես սրտի թէժ անթեղն ¹⁾ էր գործարել (բռնկել)...

Ես էլ տեսայ, որ ո՛չ հարցիս, ո՛չ էլ լացիս լսող կայ, ձէն-ձուգ կտրած, կողքիս ընկայ, քունս տարաւ մնացի:

Չը գիտեմ ի՛նչքան էր անցել, յանկարծ ինչ որ աղի-ողորմ մի սուր ճիչ քնիցս վեր թոցրեց:

Տեսայ հայրս կողքիս ընկած, գէմքի կէսը կապուտակել էր, սև-սևցել... Վրա ընկայ լաց ու կոծով, «հարիկ, հարիկ», կանչեցի, անփոյթ ընկած, չոր փայտ կտրած ձեռքը առայ, համբուրեցի, աղաչեցի՝

— «Ա՛խ, հարիկ ջան, ես էլ հալաւ չեմ ուզել, հարիկ ջան, ել, ես հէջ բանմ էլ չեմ ուզել»...

Լացի, լացի, հոնդուր հոնգուր հեկեկացի, լսող չը կար... Անշունչ փայտը վեր կելնէ... չայրս «դամլա» էր արել... (կաթուած):

Լերթին փռված, կապտած-սեցած շրթունքները կարծես դարձեալ կրկնում էին՝

¹⁾ Ծան. Անթեղ—Տանտիկինը թնդերը մխելիս մի աթար է (մալի աղբից պատրաստած վառելիք) թաղում մոխրի տակ, որ հետեւեալ օրուան կրակ մնայ թնդերը մխելու, դա կոչվում է «անթեղ»:

— «Գուժ, խիղճ չունես... վերն Աստուած կայ»... ու աչքերը ուժով չռած, կարծես վերեն՝ հեռու, անսիրտ կապոյտին մէջ «գլխոս խղճոս» Աստծուն էր որոնում...

Բայց թէ գիւղում Աստուած կայ որ, վարժապետ..., թէ որ լինէր էլ ինչո՞ւ է հայրը՝ տղին, տղան՝ հօրը, կինը՝ մարդուն, մարդն՝ իր կնոջ, եղբայրն՝ եղբօրն, էլ ազգական, թէ օտար լուկ մի կտոր հացի համար սև օձի պէս իրար խէթում... խէթ-խէթում...

Չէ, վարժապետ, գիւղում օրենք, խիղճ, դատաստան հէջ չը կայ..., էլ ո՞ր անխիղճ Աստուածն այնտեղ կը մնայ...

Գիւղում Աստուած էլ չը կայ...

1903 թ. դեկտեմբեր
Գանձա

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ս...

(Հովվի յուշատետրից)

Մեր գիւղը վաղուց թշնամի էր դրացի Ս... եցոց հետ: Եթէ ձերքերիցս գար ու մէկս մէկից չը վախենայինք, իրար արիւն կը խմէինք...

Մեր վէճը կրօնական հակառակութեան պտուղ չէր, թէև թշնամիներս թուրք էին: Նրանք մեզնից սոված, մենք նրանցից քաղցած, սով ժամանակ ունէր «հոգու փրկութեան» կամ «լոյս հաւատը» տարածելու մասին մտածելու...

Մեր վէճը հողային էր... և հողը գիւղացիներիս համար հոգուց շատ թանգ բանէ... Եւ ինչպէս էլ թանգ չը լինի, մի կտոր ուժասպառ, քաւթառ պառաւի երես դարձած հող ունես, չորս կողմից հարիւրաւոր գայլի աչքեր են տնկած վրան... Տանը մանր ու խոշոր՝ կին ու երեխաներ բերաններն հարամու պէս բացած, հաց են ուզում այդ արտից, պարտատէրդ աչքը չորս արած, քաղվելուն է նայում, որ դեռ ուտելիք բնադոնդ ներս չը լցրած, փողի տոկոսի

տեղ քաշէ տանի... խանթւորն այդ արտի յուսով է «նխիա» (ապառիկ) նաւթ ու սապոն տուել ու այժմ դեռ արտդ չը հնձած, «Կօտ ու կիսնոց» կօտը (հացի չափ) ձեռքին առաւօտ-երեկոյ զուռդ է կարոււմ, որ չը լինի արտդ հնձես ու բերքն ուրիշէ բերանն ընկնի... իւրբաշէն՝ (տանուտէրի օգնական) առասպելական «դաւթարը» ձեռին, գլխիդ տալով, խարճն ու մախտին է պահանջում... տէրտէրն ամեն օր անուշ-անուշ «ողջոյն, որդի» ասելով, կալիդ գլխին կանգնում, «տարի հախն» (վարձ) է ուզում... ես ինչ գիտեմ, էլ չարչի (մանրավաճառ) ու դարբին, դորուղչի (հանդապահ) ու նախըջի (հովիւ), էլ մուրացիկ ու անցորդ, բոլորն աչքերը անկած, իրանց «արդար ու անարդար» բաժինն են ուզում... էլ ինչպէս հողը հողուց թանգ չը լինի... Հողին ինչ է... մի հոգէտու հրեշտակ կայ ուզող, այն էլ մի անգամ կտունէ կը պրծնես ձեռքից, խօ ամեն տարի. ամեն օր գլխիդ վերև չի կանգնի ու հարիւր անգամ վճարած պարտքդ նորից պահանջի...

Հողը թանգ է մեզ համար, շատ թանգ... և Ս... եցիք խլել էին մեզնից երկու հարիւր օրաւարից աւելի հող... Դեռ այդ ոչինչ, այսպէս թէ այնպէս մարդիկն յաջողեցրին, գործին որոշ օրինական ձև տուին... թէև ողջ գաւառն էլ գիտէր, որ այդ օրինականութիւնը կայանում էր լոկ 70 բուբուլ մէջ, որ երեք սալիտակ բեխմորուքով ձերունիներ, մէկը նոյն իսկ մեր գիւ-

ղից, վերցրին ու առանց ամաշելու զնացին դատարանի առաջ երդվեցին, թէ վիճելի տեղը Ս... եցիներին է... Մեր մէջ կան, շատ կան կարմրելու ընդունակութիւնը կորցրած մարդիկ...

Ասում եմ դեռ այդ ոչինչ, եթէ Ս... եցիները ոչխարների ահագին հօտերը ոսնատակ չը աային մեր արտ ու արօտը, քոքահան չանէին հարիւրաւոր խեղճ մարդոց վերջին յոյսը...

Յունիսի վերջերն էր, գիւղի գութնոցն ու քաղոցը: Մի կողմից հաւար-հաւար քաղում են հարոս, չայիր ու դեռ խոտը չը վերցրած, քաղւորի յետևից գութանն օձի պէս ձգվում, սողում է վարից-վեր, վերից-վար ու սև աղոսներն հատոր-հատոր տետրակի դրած սողերի պէս կողքէկողք շարում մոխրագոյն արտի երկարութեամբ: Յան արտերն էլ փոված, որը կծղել քիստ է քշում, որն էլ դեռ կապոյտ ծովի պէս ծրփ-ծրփալով, գնում-գալիս, քամու հետ գաղտուկ շընգ-շըգալով, ինչ որ բաներ է փսփսում...

Եւ որքան անուշ, գիւրեկան է այդ շնգ-շընգոցն ու փսփսոցը մարդու ախանջին..., կարծես կեանքն ինքն է փսփսում այնտեղ, գիւղացու վախկոտ, ամեն քամուց տատանվող, երերուն, թոյլ կեանքը... Վերը մի փոքր ամպ բարձրանայ, բաց կապոյտը մթագնի... վարն այդ կեանքը կը դողայ, կը սարսափի՝ «չը լինի՞ յանկարծ կարկուտ գայ»... իրիկնագէմ թէ ամպերը չը քանան ու երկինքը հայելու պէս պսպղայ... թոյլ

ու երկչոտ կեանքը դարձեալ կը սոսկայ՝ «չը լինի՛ յանկարծ լուսադէմին եղեամ, գայ»... է՛հ, այդ կեանքը թշնամիներ շատ ունի՛ կարկուտ, եղեամ, ցուրտ ու երաշտ, մուկ ու մորեխ, որթ ու բզեզ... հոգէառն են այդ կեանքի... Բայց ի՞նչ արած... այդ դեռ ոչինչ, ինչ երկնքից է գալիս ուղես-չուղես համբերութեամբ պիտի տանես... Երկնքը շատ ուժով է..., երկնքի դէմ խեղճ գիւղացին ի՞նչ անէ...

Սահայն, երբ թոյլ, ամեն քամուց երերացող այդ կեանքի թեղն է կտրում քեզ նման խեղճ գիւղացին... մարդ կատաղում, գազան դարձած, էլ ինքն իրան մոռանում է... դէմդ հարազատ եղբայրդ որ կանգնած լինի, տաք արիւնը կը խմես, էլ ս՛ւր մնաց Ս... եցիք, որ աղգով էլ թուրք էին...

Վեանքն այդպէս է... սեփական կեանքն անուշ է...

Յունիսին էր. ցորեկ դեռ նոր էր անցել: Վարի չայիրներն էինք քաղում: Այլ ու խաշ-խաշ քաղւորից ու փոցխւորից ասեղ զցելու տեղ չը կայ: Կին ու աղամարդ թափել, հայ-հաւար քաղում էինք, հաւաքում, որ աղատենք մալ ոչ խարի բերանից: էլ հանաք ու չանաք, էլ խինդ ու ծիծաղ խառնել էինք իրար, սար ու ձոր դըրդում էր. ազատ ու վէճ լեռների հարսնիքն էր կարծես...

— Ծժօօ... Ս... եցոց ոչխարին նայեցէք... ս՛ւր եկաւ... յանկարծ գոռաց մէկը:

Նայեցինք, յիրաւի, լերան լանջը մշուշի պէս փաթտած, ահագին սպիտակ հօտն իջնում էր ցած: Մահմանը վաղուց էր անցել, սարը մերն էր, բայց դարձեալ ցած էր գալիս...

— Հէ-հէյ... ս՛ւր էք քշում, շուն-շան որդիք, անհոգի, անաստուածներ... գոռացինք, կանչեցինք... լսող չը կայ... Հօտն արածելով իջնում է ցած: Մօտեցաւ ցան արտերին. մի երկու հօտ էլ լերան միւս կողմից ելան...

— Ի՞նչ անենք, տղէրք... հաւաքվեցինք իրար մօտ. մէկն ասում էր գնանք գլաւային բերենք, գանգատ անենք, միւսն ասում էր գիւղ մեծերին իմաց տանք, երրորդն առաջարկում էր ոչխարը քշել գիւղ տանել... չորրորդ՝ ով արտ չունէր այդ կողմը, խորհուրդ էր տալիս «նալաթ տալ չարին», թո՛ղ արածեն, չքուին, երթան, «չար կը հօտի էզ շներից...»

Մինչդեռ ամենքը տաք-տաք իր առաջարկութիւնն էր պաշտպանում ու մեծամասնութիւնս արդէն գլաւային գանգատվելու կողմն էինք, յանկարծ, կարծես գեանից, գլխներիս վերև բուսան չորս-հինգ ձիաւոր մեր գիւղի մեծերից:

— Թաղեմ ձեզի պէս ջահէլը, թաղեմ... ձօ ինչ իշի պէս կանգնել բերաններդ բաց նայում էք... չէք տեսնում շան ոչխարն ս՛ւր եկաւ, արտ ու արօտ աւրեց...

— Ի՞նչ անենք, Բաղարամ աղա, բոլորս կարմրած, միաբերան հարցրինք:

— Ի՞նչ անէք... գետինը մտէք, ի՞նչ պիտի անէք... ամօթ չէ՞ մեր գեղին աննանը, որ էսքան շահէլ-Ղիւան կտրիճներ կանգնել էք ու քթերիդ առաջ Մ... եցոց ոչխարը ձեր մանր ու խոշորի «գիւլիկը» (ապրուստը) կը կտրէ... գետինը մանէք լաւ չէ՞... քաշեցէք գերնդիներդ, գնացէք էս սահաթիս, զարկէք, ջարդեցէք, էդ անաստուած շուն-շան որդոց մարդ ու ոչխար, քշեցէք, գիւղ բերէք... էդոնց արունքն իմ վզիս... ինչ որ «Չառմա» (տուգանք) պիտի գայ, ես կուտամ... միք վախենալ, մենք էլ ահա յետևներիցդ կուգանք...

Ու մենք քաշեցինք գերանդիներս, մերկացրած սրերի պէս պսպղացնելով օդի մէջ, վազեցինք...

Խենթ-խելտու շահէլ, մի փոքր բամի էր պէտք որ թռչէինք...

Ես վազում էի ամենից առաջ, յետևիցս կրնկկոխ հե-հեալով հետևում էր շունս՝ Չեմբարը, որ միշտ հետս արան էր գալիս, որ երեկոյեան գնանք գութնին մալը պահելու, ապա 10—12 հոգի «Շահէլ-կտրիճ» քաղւորներ գերանդիներն ուսերին վազում էին բոլոր ուժով... Դեռ լերան լանջը չէինք հասել, որ փորձված, խորամանկ հովիւները ոչխարի բերանը վեր դառուցին: «Շրախկ»... յանկարծ բացվեց հրացանն

ու ոչխարն հեղեղի պէս տափնելով ծովի պէս ծփացող շարքով ցան արտերը, խրանեց լեռն ի վեր... Փախցրին... Ձի քշես խրանած ոչխարի յետևից չի հասնիլ... Վերջին ուժերս հաւաքած, առանց յետ նայելու գոռ տուրի օտներիս... Երեք հօտն արդէն չը կային, կորան... կարծես թե ունէին թռան... Մի հօտ մենակ սահմանի վրա փոված, հանդիստ արածում էր: 17—18 տարեկան անփորձ պատանի հովիւն էլ, գլուխը դրած քարին, անուշ քնած էր... երևի խեղճը բանից «բէխաբար էր»...

— Շուն-շան որդի, մինչև հիմա արտերն էիք աւրում, հիմա սուտ բուն ես եղել, կարծես հօրդ տանը լինես... գոռացի գլխի վերև ու մինչև խեղճը քնաթաթախ աչքերը ճմուռով առաջն արածող ոչխարն էր որոնում, որ քշի վեր, կարծելով թէ յերաւի ցան արտի մէջ է... «գրամբ»... բոլոր ուժով գերանդին վրա բերի գլխին... Հովիւն ընկաւ, ես հօտը կիսեցի ու կռուի դաշտից յաղթակա՞ն փառքով դարձող հերոսի ինքնաբաւականութեամբ քշեցի ցած, դէպի մեր սահմանը:

Ես գիտէի, որ դա այն հօտերից չէ, բայց միևնոյն էր, այսօր չէ երեկ աւրած կը լինէր մեր արտերը, վերջապէս բաւական էր, որ Մ... եցոց էր, մեղաւորն ու անմեղը ճվ էր փնդրողը... Սյդպէս է մեր՝ գիւղացիներին դատաստանը... Հեռուն, չայլրներում երևում էր հաւաքված

կին ու տղամարդոց բազմութիւնն ու ես հրըճ-
ուանքով պատկերացնում էի, թէ ինչպէս պիտի
գովեն-գովաբանեն գիւղի աղաներն ու քաղցր
ժպտալով պիտի նայեն ինձ ջահէլ հարս ու աղջիկ-
ները...

Ընկերներս չը կային, երևի նրանք միւս՝
փախած հօտերի յետևից գնացած կը լինեն,
մտածում էի ես, բայց սրբան ուրախ կը լինէի,
եթէ նրանց չը յաջողվէր... փառքի պսակը մեն-
մենակ ինձ կը մնար...

Յիմար, խենթ ու խելառ ջահէլութիւն...

Ամբողջապէս մտքերիս հետ տարված, հա-
ւար-հաւար քշում էի ոչխարը լեռն ի վայր, երբ
յանկարծ մօտիկ ձորից դէմս դուրս եկան 15—20
ձիաւոր Ս...եցի թուրքեր... Միբոս դողաց, ոտներս
թուլացան ու ակամայ աչքս ընկաւ մեր չայիր-
ները... Մօտ էին: Նոյն բազմութիւնն արձանի
պէս կանգնած դիտում էր իմ կողմս... Ձիաւոր-
ները մօտեցան..., միւս կողմից էլ գիւղապետով
անագին կոպալներն (մահակ) ուսերին լեռն ի
վայր պրծաւ Ս... եցոց եայլաւորը... Վտանգն
անխուսափելի էր, բայց ես դեռ քշում էի, բաց
չէի թողնում ոչխարը... ախր մերոնք էլ մօտ էին,
օգնութեան կը հասնեն, մտածում էի...

— Ո՞ր ես քշում... հարամդադա...

Առաջս կտրեցին ձիաւորներն ու ձիերի
առաջ խառնած, սկսեցին ֆոխ-ֆոխ պտտացնել
ինձ արտերի մէջ... Ձեռս պաշտպանվելու ոչինչ

չունէի, գերանդիս հովվին խփելիս կտորվել, մի
կողմ էր ընկել ու բուռս մնացել էր կողքի՝ կիսատ
նաթը (գերանդուկոթ): Միակ միջոցը մնում էր
փախչել... Բայց ո՞ւր փախչէի... ամօթ չէր...
Արնկեր թշնամու ոչխարը բերել, հասցրել էի
այդտեղ, գիւղի պատուաւոր «աղաներն» ու
«ջահէլ կտրիճներն» անագին բազմութեամբ ընդ-
ամենը կէս վերստ հեռու կանգնած, ես փախ-
չէի...

Կատուի պէս ցատկուտում էի մի ձիու առաջից
միւսի առաջ ու գլխիս տեղացող հարուածների
դէմ դատարկ ձեռքերս բռնելով, ամեն անգամ
աչքս ակամայ գցում մեր չայիրները... Նոյն բազ-
մութիւնն անզգայ արձանի պէս կանգնած, դիտում
էր մեր կողմը... Մենակ շունս էր լեղապատառ
հաչելով մէկ մի ձիու պոչից կախ ընկնում, մէկ
վազում դէպ մեր չայիրները, կաղկածում, կարծես
օգնութեան կանչում...

Էլ ոչինչ չեմ յիշում... Երբ աչքս բացի գի-
շեր էր արդէն..., քիթ-բերան արիւնլուիկ, բոլոր
ոսկորներս ջարդ ու փշուր, լերթիս ընկած էի մի
արտի մէջ... Բոլորած լուսինն հպարտ, յաղթա-
նակը տարած հերոսի պէս ինքնաբաւական ժը-
պիանս երեսին, լերան լանջից բարձրանում էր
վեր ու խոշոր աչքերն յառած, կարծես ինձ էր
հեզնում, ծաղրում...

Մենակ էի ամայի դաշտին մէջ, մեն մենակ...
Ինձնից մի փոքր հեռու ընկած էր սատկած

շունս՝ Չեմբարը... երևի անպէտաններն սպանել էին խեղճին... Մենակ նա էր մնացել մօտս: «Ընկերներս», տեսնելով վերահաս վտանգը՝ ձորը մտնող ձիաւորներին, կէս ճանապարհից փախել էին, առանց նոյն իսկ ինձ ձայն հանելու, իմաց տալու թշնամու գայլուստը...

Մենակ էի ամայի դաշտին մէջ, մեն-մենակ սատկած շանս հետ ու այդ մենակութեանս կըս-կիծն աւելի խիստ էր քան փշրտոված մարմնիս հազար ու մի արիւնլուփի, պաղած վէրքերի մըռ-մուռը...

Ախ՛, ի՞նչ կը լինէր մարդիկ գոնէ շան կիսի չափ հաւատարիմ ու պարտաճանաչ լինէին ըն-կերութեանս մէջ...

Բայց... ո՛չ, շան նման քեզ «քսի» կը տան, կը քշեն կրակի դէմ ու իրանք յետ կանգնած կը ծաղրեն նոյն իսկ, կը հըռ-հըռան վրադ...

Թո՛ղ պատուեն քեզ, բզիկ-բզիկ անեն... ո՛ւմ հոգն է... «Ամեն մարդու ջանին իր շապիքն է մօտ»...

Ողջ գիւղով նոյն իսկ մի գերանդի չը տու-ին կտարված գերանդուս փոխարէն, որ ոչխարի ոտքի տակ փչացած արտս քախհանէի տունս պահէի...

Այդպէս են մարդիկ... աղպէս է այս փուչ ու դատարկ կեանքը...

1904 թ. սեպտեմբեր
Շչիզրի, Կուրսկի նահանգ:

ՏՈՒՆ ՇԻՆՈՂՆԵՐ:

— Աղջի, էգուց օրնէ... ի՞նչ անենք... էլ չի սպասել էդ անխիղճը...

Կարծես ծանր ու մեծ բեռի տակ տնք-տնքա-լով, ինքն իրա հետ քթի տակին մոմուալով, հար-ցրեց Եղօն իր կնոջը:

«Էլ չի սպասել էդ անխիղճը»... հարցն ան-ծանօթ, նոր բան չէր, բայց թունաւոր իժ օձի պէս դաժան էր, սև դեի պէս անուի, ու կար-ծես շանթ-կայծակի պէս խոր լուրթեան միջից անցաւ ու դիք ցցվեց խեղճ Եւայի սրտի մէջ:

Դարձեալ լուռ էր, գոմը խաղաղ, խաւար ու ցուրտ, միայն դրսից լիբբ, անամօթ քամին ուժով փչում է ու դուռ-երթիկի ծակ ու ծուկից սուլելով, կարծես թոյլի, խեղճ աղքատի մեր-կութիւնն է ծաղրում, հեգնում, հոհում ու մերթ կատողած վայրենի գէշ գայլի նման ուլուլալով, ոռնալով, աւելի վատ, սև-մութ օրեր գուշակում...

Բուք ու բորան սև մութի մէջ լաւ բան չերբէք չէ ստվում... Մութի մէջ միշտ կարծես

չար կայ, դե կայ նստած... զրոզը տանի սև մութին...

Յածլիկ գոմի մի անկիւնում Ծառուկենց շէն, «գովլաթւոր» տան տասնուհինգ շուխտ մարալ մալից յետ մնացած մէնակ մի գոգ լղար եզը փոնչալով, մշմշալով որոճում են, նեղլիկ գոմը տաքացնում ու դրան դէմ օջախի մէջ թաց աթարը թսթսում, լոկ ծուխ անում, որ «գուշմանը» չը լինի ասէ, թէ Ծառուկենց շէն օջախի մութը մարաւ, քար-քանդ եղաւ, աւրաւ...

Չուլ ու չափուկ մինդրի վրա, աղտոտ կապերտը վրան լուռ ներհում է օջախի կողքին Եղօի խեղճ շուխտ աչքով կոյր պառաւ մայրը:

Դրսի բուքը, ներսի մութը, թաց աթարի կծու մութը, պառաւ կնոջ խոմբոցը, շուխտ եզների մշմշոցը, կարծես ծածուկ գաշն կապած, խօսք մէկ արած, փսփսում են, մոմոռւս՝

— «Էլ չի սպասել էդ անխիղճը, ի՞նչ անենք»...

Բայց պատասխան տուող չը կայ ու չը կայ...

— Մարի, Եւան ձէն չի հանել, դու ի՞նչ կըսես, ի՞նչ անենք...

— Ի՞նչը, բալսս, ի՞նչ ըսիր...

— Փարան կուզեն, մարի, էգուց, ի՞նչ անենք...

— «Փարան կուզեն»... Քարի պէս էլ ձէն չը հանեց պառաւը, չուլ կապերտը քաշեց գլխին, կուչ եկաւ: Նետը խեղճի վէրքին դիպաւ, ինքն

խրանից ամաչեց ու դարտն առաւ չուլ կապերտի տակ մտաւ...

Չայն կըմնար, որ հանէր: Հարուստ Ծառուկենց կրակի տէր Թորոս աղի միակ տղից՝ Եղօից փարան կուզեն, պարտքը կուզեն... Քանի հոգու Թորոսն ինքն էր հարիւրներով պարտք տուել, քանի հոգու Թորոսն ինքն էր ձեռք բռնել այդպիսի նեղ, սև մութ օրից ազատել...

Երազի պէս մէկ-մէկ եկան դէմը կանգնան անցած կեանքի, փայլուն կեանքի պատկերները... Մէկը գալիս մի բուռ ալիւր, մի գտալ իւր, միւսը հակիթ կամ հիւանդի «կամակ»¹⁾ խընդրում... և Խանումը բանիքների խուրճը առած, օձի կաթ որ ուղէին, հանէր, կուտար իր բթընկոխ լիք մառանից, խեղճ ախրատի աչքը դուռը չէր թողնի... «Չըկան» ի՞նչ է— Խանումն երբէք չը գիտէր... Բայց աշխարհքում, էս սև ու մութ, փուչ աշխարհքում բազդը մարդու միշտ չէ ժպտում, փայփայում... Ոչինչ չը կայ էս աշխարհքում անվերջ, անծէր, մնայուն... Ու մի անգամ թէ փորձանքը տուն մտաւ, էլ վնյն եկաւ էն տան գլխին արևին...

Սարի բուքին Թորոս աղի ջահէլ-ջիւան շուխտ տղան փայտ բերելիս մոլորվեցին... խելսովեցին... Տարին չանցած մի գիշեր էլ գողերն

Ծանօթ. 1) «կամակ»-հիւանդի սրտի ուղածը-միւրդ և այլն:

եկան, գարկին, տարան թորոս աղի քէհլան ձին
 ու եգները... Սրտի ցաւից մարդն էլ չապրեց...
 բայց Սանուսին «չօռ» չը գիպաւ, «կնիկ մարդը
 հոգի չունի, դարդ ու ցաւ շատ կը տանի»...
 Այնքան կակիծ, ցաւից յետոյ լուի աչքերը, կու-
 րացան... էլ կոյր աչքով խեղճ Սանուսը այգքան
 ցաւ ու կրակից յետոյ, որդու դարտը ինչպէս
 լար, արցունք էլ կա՞ր որ ողբար...

—Մարի... էգուց տանիմ ծախեմ-ծըլեմ եզ
 ու արօր... էլ ճար չը կայ, ինչ անեմ... Հարցը
 նորից կրկնեց Եղօն, ինչ է մէկը մի խօսք ասէր,
 ախր սիրտը կը պատուէր...

—Տանես ծախես եգները... խեղճ Եւային
 ինչո՞վ պահես... բալա ջան, ես հէ՛չ, ասենք,
 փթած փայտ եմ, թո՞ղ վար անցնեմ, փշանամ...
 չէ՞ խեղճ Եւան ախր մեղք է, ջահէլ-ջիւան, շէն-
 տան աղջիկ, լաւ մեծացած, ինչ եկել է օր ու
 արև չէ սեսել... Չէ, բալաս, չէ... համբերէ...
 էլի Աստուած ողորմած է...

—«էլի Աստուած ողորմած է»... Էհ, մարի
 ջան, Աստուած էլ նո՞ր պիտի մեզի ողորմէ...
 Աստուած շատունց մեզի մտքէն հանել է... մե-
 զի համար ողորմութիւն էլ չը կայ... Ծախեմ-ծը-
 խեմ, կերթամ ես էլ մշակ կը լինեմ... էլ ամօթ է...
 մէկ պարտքս տամ, էդ անխղճին ձեռքէն պրծնեմ,
 թէ Աստուծ ու սիրտը նորէն գու՞թ ընկնի, եզ տալը
 խօ էնոր համար գժուար չէ...

—Հն, օղնւլ, հա, յոյսդ Աստուծէն մի կտրել,

մահացու մեղք, պատուհաս է... Չես տեսնիլ,
 որ էս աշխարհքը «ներդիւան» է (սանդուխտ),
 բալա ջան, մէկը կելնէ, մէկը կիջնի... յոյսդ
 ինչի՞ կը կտրես... Ախր մի օր Աստուած մեզ էլ
 կողորմի... Հօրդ աննանը ամօթ չէ, որ մշակ
 լինես... բալա ջան...

Խեղճ կնիկ մարդ, հօր անուն էր որոնում...
 էլ չը գիտէր, որ պարտատէրն անուն-մանուն
 չը գիտէ... Ու դանակը խեղճ Եղօի ոսկո-
 րին էր հասել արդէն... էլ չէր կարող մարդու
 պատկեր գազան դարձած պարտատիրոջ հազար
 ու մի լիբը, անամօթ խօսքերն ուտել, համբերել...
 Քանիցս անգամ ողջ գիւղի մէջ իր ականջով էր
 լսել, թէ «էդ կնիկդ իմ փողովս ես առել,
 զիտես... դու իրաւունք չունես հետը ապրելու»...
 Եւ խեղճ մայրը կարծում էր, թէ այս աշխարհքում
 իրանց համար գեռ «հօր անուն» է մնացել...

Ինքն իրանից ամաչելով, Եղօն ելաւ սև-մութի
 մէջ առանց կրակ-ճրագ անելու, շորերն հանեց
 ու պառկեց, որ վերմակով գոնէ ծածկէ սրտի սև
 դարդն, ամօթը... Սակայն իսկոյն խեղճը յիշեց,
 որ այդ անտէր չուլ վերմակն էլ իրեն չէ, «աղի»
 փողով է գնած... Ու բաց աչքին թերթեւունքն
 էլ վրա չեկաւ...

Գարձեալ լուռ էր, գոմը, խաղաղ, խաւար
 ու ցուրտ, միայն քամին, լիբը անամօթ քամին
 ուժով փչում է ու դուռ-երթիկի ծակ ու ծուկից
 սուլելով, կարծես աղբատ խեղճ Եղօի մերկու-

Թիւնն է ծաղրում, հեզնում, հոհում ու մերթ կատղած վայրենի գէշ գայլի նման ուլուլալով, ոռնալով, աւելի վատ, սև-մութ օրեր գուշակում...

Գիշերուանից շատ էր անցել, բայց Ծառուկենց ցուրտ գոմի մէջ դեռ ոչ որի աչքին քուն չէր վրա եկել: Քուն կը տանէր, երբ առաւօտ պարտատէրը՝ հոգէառ սև-սատանի պէս դուռը պիտի կտրեցնէր...

Յանկարծ դրսից գուռը զարկին: Երեք հոգի գոմումն իսկոյն լսեցին, բայց ոչ մէկը ձայն չը հանէց: Ամեն մարդ իր սև մտքովն էր զբաղված, էլ ժամանակ միջոց չը կար ուրիշ մէկին լսելու...

— Թըրախկ... Թըրուխկ..., գուռը զարկին նորից նոր, քիչ է մնում տեղից հանեն կրնկկոխ...

— Եղօ, բալաս, գուռը զարկին..., զարթիր, մի տես էդ սիւ կը լինի էս վախտիս...

— Հն, մարի, զարկին..., եհեմ, էս բէվախտին սիւ կը լինի...

Եղօն ելաւ, մենակ չուխան անձը ձգեց, հաւար-հաւար վագեց դրսի գուռը բացեց:

— Բարի իրիկուն, Եղօ ախպէր, մեզի զոնախ չէս անել...

«Ղոնախ»... Եղօի մօտ... գիշերուան այդ բէվախտին..., և այն էլ սիւ... Ալէք աղան՝ իր հոգեհան պարտատիրոջ կրասեր տղան... Եղօն ապշեց..., հրձք էր, ինչ էր... Եւ յիրաւի մեր գիւղերում «հրաւի» յաճախ այդպէս բէվախտ կէսգիշերին է պատահում...

— Ձէնդ ինչի՞ է կտրել, Եղօ, ինչ է զոնախ չէս ուզել...

— Ղոնախը... դէ... Աստուծոնն է... հրամմէ աղան, ներս հրամմէ... ինչ ձէն հանեմ, տունը քուկդ է... Եղօն ապշած քթի տակին մոմոաց:

Բայց Եղօի մոմոցին սիւ էր նայող: Ձիերն արդէն քանդած էին սիրուն թեթև սահնակից ու մինչ Ալէք աղի ծառան նեղլիկ գոմում տեղ էր անում ձիերին, Եղօն օդան ¹⁾ հաւար զցեց՝

— Վէր էլ, Եւայ, տեղ-մեղ ժողվէ, Աղան եկաւ, Ալէք աղան...

«Ալէք աղան»... հարս ու կեսուր տեղերի մէջ ապշեցին: Ալէք աղին ախր իրանք ինչ լայեղն են... Նրա համար զիւղում քանի հարուստ ու շէն «զոնախանա» (հիւրընկալող) կան պատրաստ... իրանց նեղլիկ խեղճ խճիթում Ալէք աղան կը հաւքի (տեղաւորի)...

— Վէր էլ, աղջի, էլ ինչ շուարար մնացիր... աղան կուգայ... ամօթ է...

Բայց ինչ ամօթ, «աղան» ամօթ երբ զիտէ... Ա. ու ու ամօթ, նամուս ու խիղճ խեղճի համար են միայն... Ալէք աղան ներսն էր արդէն: Թաւ յոնքերը վրա բերած սատանի սև աչքերին, ուշի ուշով կարծես ինչ որ որոնում էր իր շորս դին: Որսկան շունը սուր աչք ունի, «որսին» իր

Ծանօթ. ¹⁾ «օդա» գոմի մէջ անասուններից տախտակով բաժանված սենեակ:

մութ որջի մէջ էլ կը տեսնի... Եւ յիրաւի Ալէք
աղան իր փորձառու սուր աչքերով շատ շուտ
գտաւ շորերն հագնող Եւային: Որսը լաւն էր...
շատ լաւը... Շարմաղ դէմքը շէկ մազերի ալէ
ծածան ծովի միջից, լրման մօտիկ լուսնի նման
բոլորել էր, գունատել: Ճերմակ ճակատ, կեռ-
կեռ յոնքեր, շուխտակ խոշոր, ծովի պէս խոր,
խորն ու անձէր խաժուժ աչքեր, մայիսուան զարդ
ալ-վարդ թշեր, ու գոյգ կլոր շամամ ծծեր նախի-
ջևանի նուան նման փովել էին մառ-մառ կրծքին...
Ալէք աղի նման առփոտ, գագան մարդը որ տես-
նի էլ կարող է դիմանալ... Եւ այդ չքնաղ, սիրուն
դէմքը նա տեսել էր շատ վաղուց, բայց ոչ մի
կերպ ճանկ չէր ընկել մարալ «որսը» Ծառուկենց...

Քանի, քանի ջադու-պառաւ միջնորդ էին
եկել Ծառուկենց Եւային, ալ-շալովի (գլխակապ),
մի մեծ ոսկի, նոյն իսկ մահուդ խաս «չուխացու»
(հագուստ) խօստացել, որ մի անգամ, շատ չէ
գոնէ լոկ կէս ժամով հարանց տունը, կամ թէ
ջուրը գնալիս, գայ իրանց մօտ... Ախր էդպէս
հարուստ մարդու, աղա մարդու խօսքը կտորել
չիլինի... հազարից մէկ էդպէս բաղդի չի պատա-
հիլ... Սակայն Եւան սարսափահար այդ «բաղդն»
երբէք չէր ուզել ու ամօթից միշտ լուռ ու մունջ,
ոչոքին բան չէր ասել...

Եւ զայրացած Ալէք աղան իր առաջին
այս անյաջող փորձերից, այժմ վերջին ճիգն
էր թափում, վերջին հնարքն, իր շնորհքը բա-

նեցնում: Դէ, որքան էլ մեր զիւղերում ոյժը՝
օրէնք, փողը՝ Աստուած, աղի խօսքը, աղի կամ-
քը անդառնալի պատգամ լինի, պէտք է ախր
գործին մի կերպ գայլի նման օրինական ձև
արվի... Ալէք աղան այդ լաւ գիտէր և եկել
էր այդ «բէվախտին», այդ սև ու մութ կէս գի-
շերին գայլ ու գառի հնադարեան դատաստանը
տեսնելու... Սև գործերը, գէշ գործերը սև մութի
մէջ, գիշերով են գլուխ գալիս...

— Բեր տեսնենք, ծօ, խուրճինը բեր, ծօ կա-
րօ... կանչեց աղան, օջաղի կոխկին բաղմելով:

Եւան արդէն շորերն հագած, քիթ ու բերան
ամուր կապած, եկաւ հիւրի ձեռքն համբուրեց,
բարի գալուստ բարեմախտեց ու չուլ մինդարն
լրբև պատիւ, բարձրապատիւ մեծ հիւրի տակը
փռեց, որ բազմի: Ալէք աղան յարմար ըստէն
բաց չը թողեց ու Եւայի փափլիկ ձեռքը ամուր
սեղմեց, կարծես ուզեց հասկացնել, թէ քեզ
համար, տես, ես ինչքան եմ ստորացել, որ իմ
ստորուկ Եղօի մօտ իմ ոտքովս էիւր եմ եկել...
Եւան սոսկաց, բայց լուց, ձայն չը հանեց...
ամօթ էր... Ամենքն հերթով հիւր աղային բարի
գալուստ մաղթեցին, խանում արլան անկողնի
մէջ նստած տեղից, Եղօն հեռուից, բարև բռնած
դրան կողքից:

Ծառան բերեց մեծ խուրճինը դրեց աղի առաջին:
— Էլ ի՞նչ կանգնար, արաղ հանիր, հաց
հանիր, անօթի եմ, ցրտից սատկայ, չէս տեսնում...

Նւան բերեց կլոր խոնչան (հացի սեղան),
կարօն հանեց հաց ու պանիր, մատղաշ գառի
խաշլաման, մի մեծ շիշ էլ ճաճի արաղ խոնչին
գրեց, յետ քաշվեց:

— Արի, Նո՛, էդտեղ ինչի՞ ես նստել, արի
«հետս» հաց ուտենք...

«Հետս» խօսքը Ալէքն այնպէս շեշտով ասեց,
որ բարձրն էլ հասկացան, թէ աղան սրտանց
կուղէ պատուել Նոյին:

— Շնորհակալ եմ, Ալէք աղա, անուշ արա,
ինձ ամօթով արիք էսօր... ի՛նչ անեմ... քէսի-
բուլթեան մէջքը կոտրի, երբ ամօթով չէ եղել...

— Ծօ, խենթ մի լինի, արի աշենք, քէսի-
բուլթիւն տուող Աստուածն հարստութիւն էլ
կուտայ..., ի՛նչ գիտես թէ գլխիդ էգուց ի՛նչ
կուգայ...

է՛հ, աղա, քեասիրին հէջ Աստուած էլ միտք չի
բերել... քեասիրն Աստծու ինչի՛ն է պէտք... ո՛չ
խունկ ունի, ո՛չ մոմ, ո՛չ ժամ, պատարագ...

— Քեսիրութիւնն ի՛նչ է, ծօ, Աստուած
մարդուն խելք է տուել... խելք ունեցող մարդը
ինչի՛ քեսիր կըլինի... Այ, դու կուղէս հարստա-
նալ... իմ խօսքէս դուրս մի ելնել, ինչ որ ասեմ
կատարիր, տես ինչպէս քեզ հարստացնեմ...
ան, մարի շան, ան մի ստաքան անուշ արա,
կըսեն արաղն ախր «ծերոց գաւազանէ»...

— Շնորհակալ եմ, Ալէք աղա, էլ հերիք է...
դու հրամմէ, անուշ արա...

Բայց և այնպէս խանութ աբլան այդ հինգ-
երորդ թասն էլ առաւ:

— Հայ վախ հայ..., «կըսեն արաղն ախր
ծերոց գաւազան է»..., գաւազան էր էն վախան,
շողւլ (որդի), որ տունս շէն, դուռ ու երթիկ
բլթնկոխ լիք... մութն ու լուսուն, երբ տեղէս
վեր կեցնէի, Աստուած հոգին լուսաւորէ..., շիւ-
շան (շիշ) կառնէր թորոս աղան, մէկ կը լցնէր
ինքը խմէր, մէկ էլ լցնէր ինձի կուտար... Ու
երբ քեզ պէս աղա-զաղա մարդիկ գային, իրենց
պատուին, անուան լայեղ կը շահէինք (պատուել),
կը ճամբէինք... էհ, որդի շան, էն օրուանէն
ի՛նչս մնաց... Արաղ ու շայ չենք ուզել... մի
պատառ չոր, գարի հացի կարօտ ենք...

— Է՛հ, բան չը կայ, խմէ աշենք, խանութ
աբլա, Աստուած իրեն ստեղծածը չի կորցնել...,
ողորմած է... Նւայ, Նւայ, արի էստեղ խոմաթ էրէ
(ծառայութիւն), ի՛նչ կանգնել ես... առ արաղը
Նոյին տուր, լից ինձի տուր... էդ է ձեր տան
կարգ-կանոնը...

Նւան կանգնած մնացել էր, կարծես գեանին
մեխած էր: Նոյն խէթ-խէթ յետ նայեց.

— Չէս իմանալ, աղջի, շան ձագ, արի աշէ
Ալէք աղան ի՛նչ կըսէ...

Նւ ախամայ Նւան եկաւ: Խեղճ կլինն արդէն
վաղուց գիտէր, թէ շուն աղան «ինչ կըսէր»...,
բայց ի՛նչ անէր, ամօթ էր... Հէյ, ամօթը, այն
էլ շահէլ-Ղիւան հարսի ամօթը... մեր գիւղերում

գիտէք ի՞նչեր է անուամ... Մէկն անպատկառ թէ խօսք սասեց, անպատուեց, ձեռքը սեղմեց, համբուրեց... քանի դեռ մարդ չէ տեսել, «խելօք կի՛նը ձայն չի հանել, նամուսն առնել դուրս չի նետել, ամօթ է»...

Եւ խեղճ Եւան, թէև շատ լաւ գիտէր Ալէք աղի միտքը... բայց ի՞նչ անէր, ձայն չը հանեց, իր նամուսին, անուան խաթեր պապանծից, ամօթ էր...

Շիշը մօտ էր վերջանալու, բայց ի՞նչ փաստ, Ալէք աղի մեծ խուրճինը սաղ լինէր... Բոլորի էլ գլուխն արդէն տաքացել էր, նոյն խիկ Եւան, այն ամաչկոտ, չը խօսկան հարսն իր ամուսնու ստիպմամբ երեք բաժակ դատարկել էր տակետակ...

— Է՛, ծօ Եղօ, Խանուամ արլա՛, հէջ չէք հարցնէ՛լ, թէ էս վախտիս ձեր տունն ինչի՛ եմ եկել...

Իսկոյն սև-մուրթ պարտքն ամենքի միտքն ընկաւ:

— Ոտքիդ հողն ենք, Ալէք աղա... ի՞նչ հարցնենք, մեր մտքէն հէ՛ջ չի ելնել, «պարտքը տալով, մեղքը լալով»... վերն Աստուած էլ գիտէ չունենք, ի՞նչ անենք... քանիմ ամիս ժամանակ տուր, Աստու սիրուն, Ալէք աղա, դո՛ւ գիտես...

— Չէ, մարի ջան, էս անգամ ես ուրիշ բանի եմ եկել...

— Չարդ տանի, տար ինչ կուզես, աղա ջան... Միասիտ կին, իսկի չէր էլ մտածում, թէ

իրանց խղճուկ, աւեր տան մէջ բան արժեցող էլ ի՞նչ կայ որ ի՞նչ տանի...

— Չէ, մարի ջան, էս անգամ ես ուրիշ բանի եմ եկել... խիստ գործնական մարդու տօնով սկսեց Ալէքն իր ճառը, — Քաղքէն ելանք տուն կերթայինք, չը գիտեմ ինչի՛ մանկութ օրտուն կերթայինք, չը գիտեմ ինչի՛ մանկութ օրտուն կերթայինք, էն հօրս հե՛տ որ կուգայինք երս միտքըս ընկան, էն հօրս հե՛տ որ կուգայինք, ձեր տունը... հայ վախ հայ... էն ինչ օրեր էին, արլա՛, միտքդ է, Եղօ, տուն խօ չէր էս ձեր տունը, բերդ էր (ամբոց) իստակ, կատարեալ բերդ... տուն-դուռ լիքը, ինչ ուզէի՛ր՝ կը գտնէի՛ր, օձի կաթն էլ կը ճարվէր... Է՛, հիմի տես... ինչ է մնացել... իստակ աւեր, սև խարաբա է դարձել... ասի, ախպէր, մահը մարդուն համար է, էս սև ու մուրթ փուչ աշխարհքէն ես հետս ի՞նչ պիտի տանեմ... էդ օջախի աղ ու հացը շատ եմ կերել, մեղք է ասի, որ պարտք մնամ, արի ես էլ ձեռքէս եկած մարդկութիւնը չը խնայեմ, էդ Եղօին մարդ շինեմ... ու ձին շիտակ էս բէվախտիս ձեր տան դուռը քշեցի՛: Հիմի, մարի, թէ որ Եղօն ինձի լսէ, իրեն մեծ եղբայր հաշուէ, ձեր էս քար-քանդ օջախը նորէն պիտի «սուն շինեմ», առաջուան պէս շէն առատ տուն...

— Վայ, աղա ջան, ոտքիդ մեռնիմ, գալած ճամբիդ ես դուրբան, Եղօն ի՞նչ է, որ քու գէմդ ձէն հանէ... կուզես մորթէ, ոտքիդ տակը մատաղ էրէ...

— Թող քօռանան Եղօն, աղան, ... էդ ինչ ըսիր, ես ո՛վ եմ, որ քեզ պէս մարդուն չը լսեմ... դորթ են ասել՝ «մեծ մարդը մեծ սիրտ կունենայ»... սրտիդ մեռնեմ, Աստուած վկայ, Ալէք աղա... հաշուէ, թէ քու փոքր եղբայրդ իմ... ինչ որ ասես ես պատրաստ եմ...

Հէ, խեղճ Եղօ, գլուխը տաք, իսկի մըտքիցն էլ չէր անցնում, թէ հարուստի՝ աղա մարդու «եղբայրութիւնն» ինչքան դժուար, գէշ լան էր... Աղան սրտեղ, Եղօն սրտեղ... ինչ իր բանն էր...

— Որ էդպէս է արի հարսս, արի Եւայ, արադ ինչ... խորհրդաւոր ու ինքնագոհ ժպիտն երեսին կանչեց աղան Եւային—Արի, արի ասննեմ, էդ չինար բոյդ ափսոս չէ, իմ սիրուն հարսս, որ չուլ—չափուկ էդ շորերի մէջ փաթտես... մի սպասիր, սրանից յետոյ տես թէ ինչպէս պիտի ապրես...

Շնփեշ (անառակ) մարդիկ շատ լաւ գիտեն կնոջ «թելն ու դամարը...». երբ գովեցիր շահէլ կնոջ բոյ ու բուսաթ, աչք-յոնքը սև, մազերը սաթ... Թշներն ալ-վարդ... էլ ամեն ինչ վերջացաւ, խելքը գլխից այն վարկեանին դուրս թռաւ...

Այս անգամին էլ Եղօի հայհոյանքին կարիք չեղաւ, ինքն իր կամքով, քթի տակին քմցխտալով, Եւան եկաւ արադ լցրեց, աղին տուեց:

— Մէկ դու խմիր, խանսում հարսս, յետոյ ինձ տուր, կարելի է թոյն ես խառնել...

Եւան ժպտաց, լուռ համբուրեց աղի ձեռքը, թասը առեց սկեսուրին:

— Չէ... էդ չեղան... էդ իմ թասս է... էդ դու պիտի խմես, Եւայ...

Եւան կանգնեց նազկթտելով:

— Շատ լաւ կըսէ Ալէք աղան, իշու ձագ, չիմացար որ Ալէք աղան մեծ տագրդ է... էստից ետև դու էնորն ես... իմս չես..., շուրը ձգէ խօսքէն պիտի դուրս չեղնես...

— Ախր, Եղօ, էլ չեմ կարող..., հարբեցայ... Եւան կամաց մոմաց:

— Որ սասկես էլ, պիտի խմես...

Եւան խմեց: Եւ այդ մի թաս արադով, կարծես խեղճի օր-արևը խաւարեց... Եղօն ինքն էր վճիռ դրել՝ «էստից ետև դու էնորն ես, իմս չես»... Ալէք աղի անուշ լեզուից կախարդված, գլուխը տաք, խեղճը ինքն էլ չէր հասկանում, թէ լեզուն ինչ է բլբլում...

— Եղօ, գիտէս ինչ կայ, ախպէր, ահա բարաթդ էս օրուանէն կը պատուեմ, (հանեց ինչ որ մի գրած թուղթ պատուեց)... դէ գիտես որ յիսուն մանէթ, շահն էլ հաշուենք հէ ինչ կանէ... էդ փողի տեղ դու մի տարի գնան մեր տունն աշխատէ... Տանդ հաց-մաց... մի բան կանենք, եօլա կերթայ... Մի վեղրօ էլ արադ կառնեմ, տուն կը դնեմ, թող հարսս՝ Եւան քիչ-քիչ ծախէ:

քեարն (օգուտը) հաւաքէ, շատրցնէ... ախր, ախպէր, մարդը խելքով տուն կը շինէ... տեսնենք Աստուած ինչ կուտայ... Խանում արւս, էս իմ խօսքիս ինչ կըսես...

— Ես ինչ ըսեմ, Ալէք աղա, դու գիտես... կէս նիրհելով քթի տակին կոյր պառաւը մումրուաց...

— Դէ, էլ, Եղօ, թասդ խմիր ու եսլլա... (գնա) որ գիշերս մեր մալին հէջ նայող չը կայ... Սանքան լծէ, Կարօն քեզի թող տուն տանի, որ յետ դառնայ, առաւօտ վաղ ես ուրիշ տեղ պիտի երթամ, գործ ունիմ... Կարօ, հետդ արագ վերցրու, որ չը մըսիք, կէս սահթուան (ժամում) կը հասնիք...

Եւան մի քիչ «չեմ-չում» արեց, ընդդիմացաւ Ալէք աղի վճռին, ինչ որ ծածուկ բաներ ասաց իր ամուսնի ականջին... բայց ո՞վ լսեց... ո՞վ իմացաւ... Եղօն իսկի չըզգաց էլ, թէ ինչպէս ինքը Ալէք աղի փափուկ «սանքին» բազմել է...

Փլփլացող աղօտ ճրագը հանգաւ ու մութ գոմի մէջ մնացին մեն-մենակ ջուխտ աչքով կոյր, արդէն հարբած, Մորփէոսի գիրկը ընկած մի պառաւ կին ու «գայլն ու գառը» միասին...

Խաւարը շատ թանձր ու մութ է, իր մէջ շատ բան է պարտկում... և այդ անտէր սև մութի մէջ լաւ բան երբէք չէ լինում...

Չմբան գիշերն էլ երկար է... շատ երկար... լուսանալու դեռ ինչքան կար...

Չորս կողմդ լուռ, խաւար ու մութ, արարաշխարհն էր նիրհում... Սև մութի մէջ լոկ խեղդվող մի հեծկտոց էր լսվում... բայց ամօթ էր...

Դարձեալ լուռ էր, գոմը խաղաղ, խաւար ու ցուրտ... Միայն քամին, լիբբ, անամօթ քամին ուժով փչում է ու դուռ երթկի ծակ ու ծուկից սուլելով, կարծես անտէր, խեղճ Եւայի մերկութունն է ծաղրում, հեգնում, հռնում ու մերթ կատղած վայրենի գէջ գայլի նման ուլուլալով, ոռնալով, սւելի վատ, սև-մութ օրեր գուշակում...

1905 թ. յունվար
Շչիպրե

«ՈՒԹԻ ՈՒՐԲԱԹ» ¹⁾

— Թիփի է, վարժապետ, թիփի... դոնից
դուրս գալ չի լինի... կը խեղդվենք, մեղք ենք...
Գիշերն էլ մնւթ, լուսին չը կայ, աստղ չը կայ...
Ճամբան կը կորցնենք, ես էլի ոչինչ, դու ջահէլ
ես դեռ, կեանքդ ափսոս է...

Համոզում էր գիւղացի կառապանս, բայց
ինձ անհրաժեշտ էր այդ երեկոյ հասնել պաշտօնա-
տեղիս: Առաւօտ պարապմունքի օր էր, հարիւր
քսան սղայ ու աղջիկ ուսումնարանի փակ դրանը
ցրտից դողդողալով ինձ պիտի սպասէին: Առանց
այն էլ գիւղի ուսումնարանական տարին երկար
չէ... Եթէ տօն, կիրակի դուրս գանք, «հարիւր
օրեայ» պարապմունք հաղիւ թէ մնայ... Բայց
ինչ էլ լինի, միւս գպրօցներն առաջ են գնում,
դուն էլ պիտի յետևներից հասնես, թէ չէ դուրս

¹⁾ Մանօր. Ուրբաթ օրը մեր գիւղերում համար-
վում է չարագուշակ, անյաջող օր և կոչվում է «Ութի
ուրբաթ» (Յուդայի ուրբաթ), որովհետև այդ օրը Յու-
դան մատնեց Յիսուսին:

կը շարտեն ասպարէզից իբրև անպէտք պաշտօնեայ ու գնահատան ասն ժամանակ ինչ ուզում ես արա... Ո՞ւմ հոգն է, թէ դու այն յարմարութիւնները, այն պայմանները չունես, ինչ որ միւս դպրոցներն ունեն... Կեանքն այդպէս է՝ անողորմ, անխիղճ... Ո՞ր յետ մնացողը տեղ ունի կեանքում...

Մահնակը լծած էր, ոչխարի հասարակ մորթուց տաք մուշտակս հագայ, դժբախտ ¹⁾ փափուկ ձեռնոցներս, որ աշակերտուհիներին ընծայածն էր, անցուցի ու հայդա...

— Մեղքը ճիտդ, դ՛ու գիտես... ես տէր Աստուած... Նեօօօ...

Մեղքն իմ վզիս բառնալով, նստեց կառապանս՝ Վարդանը:

Գնում ենք: Գիւղում թիփին այնքան էլ խիստ չէր: Երբեմն միայն կատաղի քամին այս ու այն ծակից, բունջ ու բուշախից դուրս գալով, վրձնացնում էր, թէ ես էլ այստեղ եմ ու կտուրների ձիւնը լիզելով, երեխի հետ հանաք անողի պէս ժպտալով, երեսներին շրփփացնում, բարի ճանապարհ մաղթում և ապա մեզմ շուացնելով թռչում, սլանում հեռուն, հեռուն, ո՞վ գիտէ ուր...

Մինչդեռ Վարդանս փորձված կառապանի հմտութեամբ մէկ մի կողքին, մէկ միւսին կռու-

1) Մանօք. Դժբախտ—այժի փափուկ աղուամաղ:

լով, աշխատում էր սահնակի հաւասարակշռութիւնը պահպանել, որ գիւղի նեղլիկ, ձիւնով լցված ծուռն ու մուռ փողոցներում շուռ չը տայ ու խեղճ վարժապետին ձիւնագուլուլ շինի, ես տաք մուշտակիս մէջ փաթաթված, կուշտ մարդու ինքնաբաւականութեամբ, մտածում էի «առաւօտուայ» անելիքներին մասին ու կշտամբում՝ Վարդանին, թէ էլ ի՞նչ մեղքէր էր վզիս բարձում, ես աւելի թիփիններ էի տեսել ու լսել, որ «ընկերներս աւելի վաս եղանակներին են նանապարհ գնացել ու այնուամենայնիւ տեղ են հասել»... քիչ էր մնում ճանապարհիցս յետ կանգնեցնէր, յիմարբ... է՛հ, գիւղի մարդ է, չի լինի ախր, պիտի մեծացնէ, մէկն հազար շինէ...

— Տեսնում ես, Վարդան, ինչ լաւ ենք գընում, ասում էիր կը խեղդվենք, չը գիտեմ ինչ կը լինինք...

— Հէ, վարժապետ ջան, մագերս էս ճանապարհներին են ձերմակել, դեռ ջահէլ ես, արիւնդ տաք է, ի՞նչ գիտես, ամեն կարմիր աչքիդ ալ վարդ կերևայ... լաւ եղանակ չէ... գայլերի ամիսն է, օրն էլ չար է... ութի-ուրբաթ... Աստուած բարին կատարէ...

Ես ժպտալով, մտքումս ծիծաղում էի միա՛նք միտ մարդու «չար օրուան» ութի-ուրբաթի» վրա և ուրախանում, որ չը լսեցի նրա նախազգուշացումներին, որ լոկ գիւղական նախապաշարմունքների վրա էր հիմնված:

Գնում ենք: Կուշտ կերած, հանգստացած ձիերը թառը (ձմեռուայ ճանապարհ) գտած, աշխուժով փոնչացնելով, ճամբան են կտրում: Քամին գէշ լալկան տղի պէս կամաց կամաց ձայնը կտրեց ու սև մութին մէջ լսվում էր լուկ հեռուից եկող հեծկրտոցը:

Ձիւնը քուլա-քուլա վրա առաւ:

Մութն էր, շատ մութ ու այնքան խաղաղ, այնքան լուռ, որ կարծես ողջ բնութիւնն ականջ դառած ուզում էր լսել ձիւնի խոշոր փաթիլների փափսոցը, թէ ի՞նչ լուր են բերել անյայտ, հեռու վերից՝ երկնքից...

Չը գիտեմ ինչո՞ւ, բայց յաճախ կարծես մարդու դեգերող հոգին կարիք է դգում այդպիսի խաղաղ առանձնութեան, երբ կարծես գաղտնալի բնութիւնն աւելի խորհրդաւոր, խոհուն է դառնում ու քեզ էլ ստիպում է խորհել, մտածել... Ու թաղված այդ խորհրդաւոր խոլ խաւարին ու լուռ խաղաղութեան մէջ, ակամայ հարց ես տալիս՝ «ինչո՞ւ համար այս բոլորը, որ յետոյ ի՞նչ»... Տքնում, ճիգ ես թափում մի կերպ բացադրել, մեկնել գորտեան հանգոյց դառած կեանքի խորհուրդը, վերջնական նպատակը... ու տկար միտքը անկարող թափանցելու բնութեան վեհ գաղտնիքները, թևերը թափած, թուլանում, կարծես լուծվում, ցնդվում է նոյն բնութեան անեզր մութին ու խաղաղութեան մէջ, նորից տեղերելու, դարձեալ որոնելու...

Բայց և այնպէս գնում ենք առաջ, թէև դէմերս խաւար է, ձմրան մութ գիշերուան պէս անթափանց, սև խաւար...

—Ըռռռ... սխալ ենք եկել, վարժապետ, կանգնեցրեց կառապանս ու ինքն առաջ գնաց ճանապարհը որոնելու:

—Անտէր մնայ, ճամբայ չը կայ, ճար չը կայ... լուսնեակ էլ չէ, թէ մարդ չորս կողմը նայէ, տեսնի ո՞ւր է...

Կառապանս էլ դժգոհ «խաւարից», գանգատվելով յետ դարձաւ:

—Ի՞նչ, վարժապետ, ի՞նչ, տեսնենք...

Ես նոր քնից սթափվածի պէս վեր թռայ տեղիցս:

—Ի՞նչ կայ, վարդան, ի՞նչ է եղել...

—Սխալ ենք եկել, կրակ անենք, տեսնենք ո՞ւր ենք...

Մինչդեռ ես ճանապարհն էի որոնում չորս կողմս, սահնակի մօտ կրակ տուած խոտի ալ բոցը ճարձատելով, լուսաւորեց չորս դիս: Պատանւորած հսկայ ուրուականների պէս յետ-յետ քաշվեցին ու դէմս դիք կանգնեցին սպիտակ, ահռելի լեռներն ու վիթխարի խաւարն իր անսահմանութեամբ հանդերձ, վախկոտ յանձաւորի պէս խոտի փլվիլացող բոցից սարսափած, փախէ-փախ պահ մտաւ լեռների յետև...

—Հէյ... քու տունդ շինվի, էս ո՞ւր ենք եկել, վարժապետ... Գիտեմ, որ Փրկութիւնն էսքան կել, վարժապետ...

հեռու պիտի չը լինի... Արի, արի, նստիր, քանի
քամին չէ ելել, քաշվենք էս սև սարերից, թէ չէ
գէլերոց կը լինինք...

— Բան չը կայ, քշիր... կուշտ մարդու ան-
հոգութեամբ էս դարձեալ թաղվեցի փափուկ խո-
տերի մէջ:

— Մի ասիլ, վարժապետ, մի... գիտէս սր
ենք... «Արջի» վերանայ սարերն ենք... եօթ զօր,
եօթ գիշեր որ երթանք էսպէս մարդու երես
չենք տեսնիր... Բէխէր սարեր են, օրն էլ գէշ
է... ութի-ուրբաթ...

Ես ոչինչ չէի լսում, դարձեալ խորասուզված
մտքերիս ծովի մէջ, ամբողջներ էի կառուցանում,
ծրագիրներ կազմում, երազում... առանց գիտ-
նարու, թէ ո՞ւմ և ինչո՞ւ համար...

Մութն էր դարձեալ, մութն ու լուռ: Միայն
քամին ձայնը չէր կտրում ու մերթ ընդ մերթ
գեանի ձիւնը ճանկուելով, խառնում վերից թափ-
վող թիփու հետ, «շրրափփ»... խփում էր երես-
ներիս ու դարձեալ թռչում հեռուն, հեծկտում,
հեկեկում... Կարծես ամայի դաշտին տիրապետող
խոլ-խաւարին շունչն էր, որ ծաղրում, հրահր-
ում էր իր պաղ գիրկն ընկած երկու անզօր,
անօգնական «մարդ» էակներին, որ տաք սենեա-
կում նստած ժամանակներս այնքան հաւակնու-
թեամբ մեզ «բնութեան տէրն», իշխանն ենք հա-
մարում...

Ձիերն հանդարտ գնում էին, երբեմն միայն

փունչալով, ճեղքում էին մինչև ծնկները բարձրա-
ցող ձիւնի շեղջն ու դարձեալ լարած ժամացոյ-
ցի պէս գտնում իրանց սովորական հանդարտ ըն-
թացքը:

Քամին միայն կամաց-կամաց փոխում էր իր
լարկան ձևը: Տեսնելով, որ այդ ամայի, անսիրտ
սարերի ու սև խաւարին մէջ իր լացին, հեծկը-
տանքին լսող չը կայ, կատաղած, այժմ ձագը կոր-
ցրած վագրի պէս ձայնը գցել, մերթ մոռնում,
մլաւում էր, մերթ ուռնում, ուլուլում, սահնակ
ու մարդ ձիւնի մէջ կորցնում, կարծես վրէժը
մեզնից էր ուզում առնել...

Ոտքերս սկսեցին մոռալ: Տաք մուշտակս
վրա քաշեցի ու ոտքերս փաթաթելով, մտքերիս
մէջ խորասուզված, սկսեցի կնքվարտել (նիրհել):
Երևի ուշ էր արդէն:

Գնում էինք... ուր, մենք էլ չը գիտէինք,
թէև ոչինչ չէինք ասում իրար ու աշխատում
էինք չը մտածել այդ մասին, յուսալով, որ վաղ
թէ ուշ մի տեղ դուրս կը գանք...

Յանկարծ ձիերը խոռոացին ու գեանին մեխ-
վածի պէս դիք կանգնեցին տեղերը: Գլուխս
կռնեց առաջ ու աչքերս ջուխտ բացի, կարծես
մէկն յետևիցս հրեց...

— Ի՞նչ կայ, վարդան, ինչի՞ կանգնեցիր...

— Ես չը կանգնեցի, վարժապետ, ձիերն
իրանք կանգնեցին... լաւ նշան չէ... բարե-

կամ, մի բան կայ... սիլահ-միլահ (զէնք) ունենա
քովդ...

— Ատրճանակ կայ... ապշած պատասխանեցի
ես ու թէև նախապաշարված կառապանիս «ուժի-
ուրբաթին» պէս «վատ նշանին» էլ չը պիտի հա-
ւատայի, բայց ուշ գիշերուան անթափանց սև
խաւարը, երկինք-գետին ձիւնի փոշով իրար խառ-
նող ցուրտ քամու մոնչոցը, բուք ու բորանի,
կատաղի թիփու վրոռոցը ամայի-անապատ դաշ-
տին մէջ իմ սիրտս էլ սկամայ դող գցեցին:
Ձեռքս անգիտակցաբար ատրճանակիս տարայ և
ուզեցի իջնել սահնակից, թէև չը գիտեմ ո՞ւմ պի-
տի խփէի, ո՞ւմ դէմ պաշտպանվէի...

— Կեցի, վարժապետ, ի՞նչ կենես... լաւ չէ,
տեղէդ մի իջնիլ. ձուիկ-ձուիկ կենես...

— Ի՞նչը, Վարդան... ո՞վ...

— Գայլերը, գայլերը, վարժապետ ջան, իմ
ձիերս առանց պատճառ չէին կանգնիլ... ճամբան
կտրած կը լինեն էդ անիծածները...

Չը գիտեմ ինչո՞ւ, բայց սկամայ ես սկսել
էի հպատակվել կառապանիս կարգադրութիւննե-
րին, թէև մտքիս մէջ դարձեալ չէի ուզում հա-
ւատալ նրա ոչ մի խօսքին...

Այդ միջոցին սահնակի կողքին դարձեալ փըլ-
փըլաց կրակ տուած խոտի փոքրիկ խարոյկը, որ
ահուելի բամու բերանն ընկած, մի բոպէ լուսա-
ւորեց չորս դին:

— Ու ու օօ... ուլ ուլ... բոցի հետ լավեց

քամու վռոցից էլ սոսկալի մի խառնիճաղանչ
ոռնոց ու դէմս ցցվեցին 15—20-ից աւել գայ-
լեր, որ ձիւնոտ դնչերը ցցած, կտրել էին մեր
ճամբան: Ամբողջ մարմնովս մի սառը հոսանք
անցաւ, կարծես քամին երակներին մէջ էր մտել
ու ճակատս ծածկվեց պող բրտինքով:

— Տեսար, վարժապետ... չէ, բարէկամս,
մագերս էս ճանապարհներին են ճերմակել... էս
«շուն ու կատու» չէ, որ տաք տեղը նստած ար-
դոցը դաս տաս... էս «Արջի» վերանա (ամայի),
բէխէր սարերն են... Ասի կը խեղդվենք, մեղք
ենք... Օրն էլ չար է, «Ուժի-ուրբաթ»... փառք
տուածիդ տէր, հազար փառք... Ճակտներուս գիւրն
էր, պիտի տեսնէինք... պատրօն ունիս...

— Հինգ հատ...

— Հինգ հատ... գէշ է, շատ գէշ, հինգ հա-
տով բան չի դառնալ..., անտէրները շատ շատ
են... նշան խփել գիտէս գոնէ...

— Ձեմ փորձել... չը գիտեմ, տեսնենք...

— Սպասի՛ր, փորձելու տեղ չէ, էդ վաղուց
պիտի փորձած լինէիր, հիմա ուշ է... թէ յոյս
ունիս, որ հնգից մէկն անպատճառ կը դիպչի ու
մէկին ու մէկին, թէ չըսպանես, գոնէ կը վերա-
ւորես, փորձիր, գայլերն այն ժամարակ կը պա-
տառուտեն իրանց վերաւոր ընկերոջն ու մեզ
ճամբայ կը տան, թէ չը կարողացար... վայն ե-
կել է մեզ, «փորձելու» հերթը նրանցը կը լինի

այն ժամանակ ու միակ յոյսը կը մնայ ժանգոտ խէնչալիս վրա...

— Միթէ գայլերն այդքան կատաղի են, Վարդան, մարդու վրա կը յարձակվին...

— Ուրիշ ժամանակ դժուար, բայց այս ատին կը յարձակվին... ապա, փորձիր տեսնենք, «աճրտանակդ» է ինչ է...

Ես հնազանդվում էի կառապանիս, ամեն մի ակնարկին: Ատրճանակս հանեցի...

— Սպասիր, այդպէս չէ կարելի, բարեկամս, ում պիտի խփես, ախր ոչինչ չէ երևում...

Յիրաւի խաւարն աւելի խտացել էր ու կատաղի թիփին մեռելի պէս պաղ ձիւնի շրթունքներով երեսս էր լիզում, կարծես գայլերն էին համբուրվում հետս...

— Լոյսից մութի մէջ նշան չի խփվի, նշան խփոյզս, իջիր սահնակից, անցիր մութի մէջ, ես կըրակ կանեմ, բոցը բարձրանայ թէ չէ շնորհքդ ցոյց տուր, բայց զգոյշ եղիր... Էդ հինգ պատրօնի մէջ երկու մարդու կեանք է դրած...

Ես իջայ սահնակից, դողդողացող բռիս մէջ ամուր սեղմած ատրճանակիս կոթը, որ դպրոցն աւարտածս օրից խնամքով պահում էի մօտս, թէև մինչև այդ օրը դեռ երբէք չէր ծառայել իր կոչմանը...

Սահնակի մօտ փլփլաց կրակն ու ես մութի միջից պարզ տեսայ պոչերի վրա պըպըզած «հոգէառներիս», որ մահաշունչ զնչերը վեր տնկած

ռոնալով չը գիտեմ ամայի լեռների թեփին ու մութն էին փառաբանում թէ՛ ձեռքերն ընկած համեղ որսերի վերջին շարականը մոմուում...

Թէ ինչպէս երեք անգամ ատրճանակս իրար յետևից կրակեցի, ինքս էլ չը գիտեմ... Գայլերը ոռնացին, ուլուլացին, պոչերի վրա՝ մի երկու պտոյտ արին, ցատկոտեցին ու զնչերով սկսեցին ձիւնը փոփրել, կարծես ճանապարհ էին բաց անում դէպի ինձ... Մինչդեռ տեսդային դողով ես շտապում էի մնացած երկու փամփուշան էլ կըրակել ու խիստ յուզմունքից, թէ երկիւղից չէի կարողանում ատրճանակիս ծիծը քաշել, Վարդանը գայլերի ոռնոցից էլ անհելի գոռաց վրաս՝

— Սպասիր, էյ... ինչ ես անում...

Թերևս ուրիշ անգամ ես ինձ վիրաւորված զգայի ու նոյն խոկ Վարդանի «աղան» էլ ձեռքիցս հեշտ չը պրծիր այդպիսի գոռոցի համար, բայց չը գիտեմ ինչո՞ւ այդտեղ չարութեան մէջ բռնված տղի պէս լոկ կանգնած տեղս մեխված մնացի... Կարծես կեանքը կամաց-կամաց կանգ էր առնում ու մենք արդէն շփոթել, մոռացել էինք մեր զիրքը—կոչումը...

— Արի, արի նստիր, վարժապետս, էդ քու բանդ չէ... «աճրտանակ, աճրտանակ» ես էլ զիտեմ, թէ բան է... Էդ փշտովդ ես կոթով-մոթով կուլ տամ բան չեմ իմանալ, դա գնջլ պիտի ըսպանէ... ձիւն կաշին հաղիւ խանձեց...

Որքան դողդողացող ձեռքս թոյլ էր տալիս ես ատրճանակիս բերանն ուղղել էի գայլերին, բայց չը գիտեմ ինչպէս էր եղել, որ գնդակը ձիուն էր դիպել և յիրաւի ազդրի կաշին հազիւ մի փոքր քերծել էր:

— Արի նստիր, արի, բարեկամ, կը մրսես, Աստուած ողորմած է, ինչ որ ճակատներիս գիրն է էն կը լինի...

Ես նոր զգացի, որ յիրաւի քիթ բերանս մտմտում էր, թէև ճակատս չը գիտեմ երկիւղից, թէ՛ ամօթից սառը քրտինքով էր ծածկւում... Մուշտակ փաթաթիկի մի կերպ ու կուշ եկայ սահնակի անկիւնում, կարծես վախենում էի բարկացնել կառապանին, որ ծալապատ նստած իր տեղը, կամաց-կամաց ոլորեց հաստ պապիրոզը, վառեց ու սկսեց հանգիստ ծխել, կարծես իրանց տանը նստած լինէր...

— Ինչ պիտի անենք, Վարդան, վերջապէս մի փոքր սիրտ առած նրա հանգստութիւնից, հարցրի ես:

— Ինչ պիտի անենք... կըստասենք... կամ մեռնելու, կամ յարութիւն առնելու, որ ես դարձեալ իմ ջուխտ ձիով սահնակս քշեմ, դուն էլ գիւղի լակոտների հետ «շունդ ու կատու»-դ:

Թէև մահուան տօթը վաղուց առել էր ինձ, բայց երբէք չէի կարող հաշտվել մեռնելու հետ... Ախր դեռ սրբան յոյսեր, ծրագիրներ ունէի... և այդ բոլորը ծոցս առած թաղվէի

այդ ամայի դաշտի սառը ձիւնի մէջ... Օ՛, որքան անգութ ես ճակատագիր, եթէ յիրաւի հաւատայի քեզ...

— Հէյ... հէյ շաշոուն վար, շաշոուն վար... (մոլորված կայ) բոլոր ուժով գոռաց Վարդանը թուրքերէն:

— Ու ու օօօ... ոռնացին գայլերը, կարծես նրա ձայնի հարազատ արձականգը լինէր, որ լեռների պաղ-շունչ քամին սուլելով, վռուլով, բերանն առած տարաւ հեռուն, սարէ սար...

Մտքիս մէջ զարմանում, նոյն իսկ ծիծաղում էի միամիտ կառապանիս վրա... Ո՞ւմ էր կանչում այդ ամայի անապատին մէջ, ո՞վ էր նրա ձայնին լսողը... Ես բոլոր յոյսերս ծալել էի արդէն և զգում էի թէ որքան դժուար է «մահը աչքով տեսնելը»...

Բայց այդպէս է գիւղի մարդը... Նա դժվուար է դուրս գալիս ճանապարհ, բայց երբ դուրս եկաւ եզի համբուրթեամբ, տոկունութեամբ տանում է, դիմանում ճանապարհի բուք ու բորանին, ցուրտ ու քամուն ու այնպիսի սառնասիրտ, անտարբեր հայացքով նայում է դէմը կանգնած դաժան մահուան ուղղակի աչքերի մէջ, որ մարդ ակամայ պատկառում է, ամաչում ինքն իրանից...

Այդպէս է գիւղի մարդը, հաւատ կայ նրա մէջ...

—Քշես լաւ չէ՞, Վարդան, կարելի է մի տեղ
դուրս գանք, ախր էսպէս կանգնելով ի՞նչ կը լի-
նի... վախվիսելով առաջարկեցի ես, թէև ինքս էլ
չէի հաւատում իմ ասածիս...

—Քշեմ... ուր, վարժապետ..., ուր էլ զը-
նանք ձիւն ու սար է, սար ու ձիւն, բուք ու բո-
րան, սրանից լաւ տեղ սրտեղ պիտի գտնենք...
Ինչ որ պիտի լինի էն կը լինի, հոգէտուիդ ձեռ-
քէն ուր պիտի փախչես... առանց ապրելու մեռ-
նել չէր լինի, առանց մեռնելու էլ ապրել չի լի-
նի... վարժապետ ջան, մարդ մի օր ծնել է մի
օր էլ պիտի մեռնի... մէկ է... բան չը կայ
սիրտդ ամուր էրէ... թէ կեանք ունենք էլի կապ-
րենք... Չը գիտեմ որտեղ ենք, բայց գիւղից հե-
ռու չենք... Գայլերն էս վախտիս վէրանա սա-
րերը չեն ման գայ, գիւղի շուրջը կը ծկլտան, որ
ձեռքերը շուն-մուն ընկնի... Բէվախտ է, վար-
ժապետ, բէվախտ... գիւղում էս վախտիս շներն
էլ քնած կը լինեն... թէ չէ ձէնս կառնէին, ուր
լինէին կը հասնէին... Բան չը կայ, լաւ փատտվէ
չը մըսիս, Աստուած ողորմած է... Ու գիւ ձէնը
ձդած, Վարդանս սկսեց մի անսուշ բայալի...

«Բու էլ չը կայ սև խաբարս հէջ-չէ տանի
իմ եարիս,

«Սև աչքերէն արցունք քամէ, սիրտը առնէ
Չէյրանիս...»

«Թիփի-բորան, բուք ու բորան բարև տարէք
իմ եարիս,

«Ասէք սարերն ինձի կերան, սիրտս կարօտ
Չէյրանիս»...

Չէվախ հէյ, վոյ, վոյ, վոյ»...

—Ուու օօօ... ձայնակցեցին գայլերն իրենց
ոռնոցով ու քամին բերանն առած երգի անուշ
«վոյ, վոյ»-ը, որ կարծես մարդու մերձիմահուան
ոռնոց լինէր տարաւ հեռոն, քշեց հեռոն... ով
գիտէ որ անսիրտ սարին զարնելու...

«Եւ ինչո՞ւ այս բոլորը»... մուշտակիս մէջ
փաթաթված մտածում եմ ես... Որքան յիմար,
անմիտ բան է կեանքը, որի վրա այնքան մեծ
համարմունք ունինք մենք... Հազիւ 20-25 տա-
րուայ դժոխային տանջանքից յետոյ, մի փոքր ու-
ժերս հաւաքած, փորձում եմ ոտքի կանգնել, որ
ապրեմ, ես էլ բնութեան բարիքները վայելեմ,
կարծես դաշն կապած, տարերային կատաղու-
թեամբ դէմս դուրս են գալիս բուքն ու բորանը,
կատաղի թիփին, գայլերն ու գիշերուան մութ
խաւարը ու շոյս կողմից սեղմում, ճմլում, խեղ-
դում են... կարծես ես տեղ չունեմ այս անագին
մոլորակի վրա ու այդ ազատ լեռների ապօրինի
վիժուածքն եմ... էլ ինչո՞ւ ծնվեցի, ինչո՞ւ եմ
մեռնում... Կամ մեռնելուցս յետոյ մի՞թէ այս խո-
հուն, զգայուն հոգիս Վարդանի «վոյ-վոյ»-ի պէս
անշունչ քամու բերանն ընկած պիտի ցնդէ, շո-
գիանայ այդ սև, մռայլ խաւարին մէջ...

—Աչքդ լոյս, վարժապետ..., յանկարծ տեղից

ցատկերով, գոռաց Վարդանը— ձէնս առել են, գիւղ է հասել... լսիր, լսիր... զանգ են խփում...

Յիրաւի գիւղական եկեղեցու կոչնակի լաւկան, միաձայն «գիւմ-գիւմ»-ը մերթ խեղդվում էր կատաղի թիփու վռուցի մէջ, մերթ հասնում մեր ականջին...

Ու այդ թոյլ, լալկան «գիւմ-գիւմը» կարծես կեանքի աւետարներն էր, որ գիւղական խաւարից ծնած, յամր ու դանդաղ մակլցում էր սարէ-սար, որ արար-աշխարհին աւետէ ձմրան ձիւնի ու գիշերուան սև խաւարի մէջ յղացած նոր կեանքի ծնունդը...

«Ասէք եարիս, որ ես կռուայ թշնամու դէմ սևերես

Ու կռուին մէջ արիւնլուփիկ ընկայ կրծքէս քաջի պէս...

Ասէք եարիս՝ նամարդ լինես, թէ վրէժս դու չառնես,

Թէ թշնամու տաք արիւնով սրտիդ տապը չը մարես»...

Հէյ վախ հէյ, վոյ, վոյ, վոյ...

— Վոյ... վոյ... Ուու... օօօ... ուլ... ուլ...

մղկտաց մութի միջից Վարդանի երգի արձականդն ու գայլերի ուլուլոցը, սր տեղերից ելած, այժմ անհանգիստ, պոչերի վրա ֆոփկ-ֆոփկ էին գալիս, երևի նրանք էլ բան էին իմացել։

— Դիւմ-գիւմ... իմ... հնչում է նոյն յուսատու զողանջիւնն ու կորչում քամու զիլ վռուցի մէջ...

Սահնակի մօտ փլփլացող խարոյքն էլ կարծես սիրտ առած այդ յուսատու «գիւմ-գիւմ»-ից, ճարճատելով, ճիգ էր թափում աւելի երկար դիմանալ քամու լափող շնչին ու մի քիչ էլ բոցավառվել, մի քիչ էլ լուսաւորել չորս դին, ամայի դաշտին սև խաւարը...

Կեանքի ու մահուան տարբերային կռիւն էր կարծես, որ տեղի էր ունենում գիշերուան սև խաւարին մէջ...

Մութն իր իշխանութեան մէջ տանել չէր կարող նոյն իսկ խոտի վաղանցուկ խարոյքի թոյլ փլփլոցը, աչք ծակող ցոլքը, քամին, բուքն ու բորանը լուռ խողարութեան դէմ էին մաքառում, սովալլուկ գայլերը կերակուր էին պահանջում, մենք ինքնապաշտպանութեան բոլոր միջոցներն էինք գործ դնում ապրելու, այդ տարբերային կռուին մէջ գոյութիւններս պահպանելու համար ու վիթխարի լեռներն իրանց սպիտակափառ գահից կարծես հեզնում, ծաղրում էին կեանքի ու մահուան այդ խենթ ու խելառ ճակատագրական խաղը, որ իրանց քթի տակ չէին տեսնում մօտալուստ «առաւօսն» իր կենսատու, հրաշէկ արևով, որ մի ակնթարթում պիտի վերջ տար այդ արիւնլուփիկ խաղին...

— Թըրբախկ... յանկարծ սև մութի միջից քամու սուլոցի հետ լավից հրացանի անագին ուրտան ու գայլերը անռելի ոռնոցով, ուլուլոցով սկսեցին իրար գզել, բզկտել...

—Տեսար, զարնող տղան, վարժապետ ջան, ատրճանակն էդպէս կը լինի... նկատեց ինձ Վարդանն ու մինչդեռ պատրաստվում էր իր «վոյ-վոյ»-ից մի տուն էլ ասել, որ տեղերս իմանան, պարզ ու որոշ լսվեց գրեթէ մօտերիցս աւետաբեր «Չան-Չան»-ը որ նոյն երգի մի կտորն էր ու մի քանի ըոպէ չանցած սահնակը շրջապատեցին 10-15 գիւղացի յաղթանգամ, հսկայ ջահէլներ...

—Հէ, հէյ... ի՞նչ կայ, խօ մըսել չէք... արդի անագին շիշը դէմ տալով դնչիս, գոռաց մէկը: Ես նոր զգացի, որ լեզուս ինձ չէր հպատակվում ու ոտներս փայտ էին կտրել, կարծես իմս չէին:

—Տնաշէններ, էս օրուան օրն էլ մարդ ճամբայ դուրս գայ... օրն էլ չար... ութի-ուրբաթ...

—Բան չը կայ..., Ութի ուրբաթ գիշերուան լուսը շաբաթ է ախր՝ «Սուրբ յարութեան առաւօտ»... գիշերն անցաւ .. լոյսը մօտ է... շուտով «արեւն» էլ կը ծագէ...

1905 թ. փետրվար
Շչիգրի



Ց Ա Ն Կ

Վարագոյրի ետե (առաջաբանի տեղ)

երես.

1. «Մենք ախպէր ենք»... Արտատպ.	«Մշակ»-ից	15
2. Իմ ազատարարը	» «Աղբիւր»-ից	27
3. Կրակը	» «Մշակ»-ից	35
4. «Սև-մութ հարսնիք»...	» «Մշակ»-ից	43
5. «Գատաստան կայ»...	» «Մշակ»-ից	55
6. Օձի խէթած.	.	68
7. Ընկնաւորը .	.	83
8. «Վերն Աստուած կայ»... Արտատ.	«Արշալ.»-ից	111
9. Ընկերներս	» «Մուրճ»-ից	123
10. Տուն շինողներ	» «Արշալ.»-ից	133
11. «Ութի ուրբաթ».	.	151

11



ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.
Հանապարհածախսով՝ 80 կոպ.

Դրմել՝ Ахалкалаки, Мартиросу Джаракянцу.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432546

51875